Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆ

891.99.092 [Հարցուցիչ]
N 29
ՄՏՈՒԳՎԱԾ է 1981 թ.

ՄՏՔԻ ՄՂԱԿԸ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ

զրական գործունէութեան 25-ամեակի առիթով։

A II 31639
10671

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“ Տ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ
Գրաբար, պր. և Քաղաքակիր. փող. տանը։
1890

Дозволено цензурою, Тифлисъ, 1890 г. 12-го апрѣля

Тип. „Аророъ“ Т. Я. Пазарьянъ угол. Головин. пр. и Барят. ул.

ՀՈՍԻ ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ



ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

I.

Հայ ժողովրդի պատմութիւնը յիսունական թուականներից սկսած մի նոր շրջանի մէջ է մտնում։

Մեր գրողները այդ շրջանը անուանում են վերածնութեան շրջան։ Եւրոպայում և նոյն իսկ Ռուսաստանում յիսունական և վաթսունական թուականներին տեղի ունեցած քաղաքական և հասարակական շարժումներն ազդեցին հայ ժողովրդի անշարժութեան մատնված կեանքի վրա։ Այդ անշարժ, կղզիացած կեանքը սկսեց շարժվել, և ահա միմեանց յետևից սկսեցին երևան գալ՝ մէկը միւսից աւելի կարևոր, մէկը միւսից աւելի կենսական խնդիրներ։

Այդ խնդիրների ծնողը, իհարկէ, ինքը ժողովրդի կեանքն էր։

Դրա հետ միասին վերջին 30—40 տարիների ընթացքում առաջ եկան մի խումբ գործողներ՝ գրական, հասարակական և այլ ասպարէզների վրա, որոնք մի կողմից կոչ մղելով ժողովրդի սիրաը կրծող հին մտքերի և տարրերի դէմ, միւս կողմից աւելի որոշ ձևակերպեցին բուն ժողովրդի ցաւերը և պահանջները։ Այդ գործողները, որոնք մտաւոր յեղափոխութեան կարապետներ հանդիսացան մեր մէջ, մեր ժամանակակից կիանքի առաջադիմութեան հսկաներն են։

Խրիմեան Հայրիկ, Միքայէլ Նալբանդեան, Ներսէս Վարժապետեան, Ստեփաննոս Նազարեան, Բաֆֆի, Ռաֆայէլ Պատկանեան, Գրիգոր Արծրունի,—ահա այն հսկաները, որոնց գործունէութիւնը մի ամբողջ դարագլուխ է կազմում մեր ժո-

զովրդեան պատմութեան մէջ, և որոնք տիրապետեցին այդ նոյն ժողովրդի սիրան ու միտքը։

Ազգը դժբաղդութիւն է ունեցել արդէն դոցանից մի քանիներին թաղելու։ Միւսները, այն է՝ Խրիմեանը, Պատկանեան—Գամառ-Քաթիպան և Գրիգոր Արծրունին դեռ կենդանի են և գործում են։ Ներկայ 1890 թուականին հայ հասարակութիւնը բաղդ ունեցաւ շնորհաւորելու Խրիմեան Հայրիկի ծնունդեան 70-ամեայ տարեդարձը. նոյն հասարակութիւնը, որ 1886 թուին տօնեց Պատկանեանի գործունէութեան 35-ամեակը, այս տարի տօնում է Գրիգոր Արծրունու գրական գործունէութեան 25-ամեակը։

Քան և հինգ տարի է արդէն, որ Գրիգոր Արծրունին գործում է։ Քառորդ դար առաջ նա իր այդ գործունէութիւնը սկսեց երիտասարդական արտասովոր ոգևորութեամբ և բոլորեց իր քսանհինգամեակը՝ կրկնապատիկ ոգևորութիւն ներշնչելով հասարակութեանը։ Եւ ահա այդ հասարակութիւնը շտապում է օգուտ քաղել 25-ամեակի դէպքից՝ իր ոգևորութիւնը արտայայտելու համար։

Այդպիսի բոլէներում ժողովրդի մէջ բնականաբար ջերմ ցանկութիւն է առաջ գալիս աւելի մօտ ծանօթանալու «օրուայ հերոսի» անձնաւորութեանը և գործունէութեանը, իմանալու թէ ով է նա, ինչ է արել և ինչ է ուզում անել...

Մենք կը փորձենք, որքան հանգամանքները և միջոցները ներում են, պատասխանել այդ հարցերին, ոչ թէ լոկ ժողովրդի հետաքրքրութիւնը լիացնելու նպատակով, այլ այն պատճառով որ Գրիգոր Արծրունու կեանքի մէջ ոգևորիչ, ուսանելի և խրատական զծեր շատ կան։ Թող միայն ներվի մեզ, որ Արծրունու անձնաւորութեան և գործունէութեան հետ սերտ կապ ունեցող մի քանի խնդիրների մասին միայն հարևանցի կերպով կը լիշենք, իսկ մի քանիների մասին բոլորովին չենք խօսի...

II.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Արծրունիների տոհմը բնիկ Վանեցի է։ Ներկայ դարուս սկզբներին Վանում յայտնի Էհրանենց տան նախանդամ Գէորգը թողնելով Վանը՝ Պարսկաստանի վրայով անցաւ Թիֆլիզ։ Էհրանենց ընտանիքը Վանում ունէր ահագին կալուածներ և մեծ հարստութիւն։ Այդ կալուածների պատճառով Գէորգը զանազան հալածանքների ենթարկվեց թիւրք կառավարութեան կողմից, և վերջումը մահից ազատվեց միայն նորանով, որ իր ընտանիքի հետ միասին ապաստան գտաւ Հայոց եկեղեցում։ Ահա այդ վտանգից ազատվելու համար Գէորգը ծրագրեալ կերպով փախչում է Վանից և գալիս է Կովկաս, երևսի վրա թողնելով իր բոլոր կալուածները[1]։

Գէորգը Գրիգոր Արծրունու պապն էր, երբեմն Թիֆլիզում նշանաւոր Գէորգ աղան։ Ռուսաստան գալով Գէորգը խնդիր է ներկայացնում Ռուսաց կառավարութեանը և ազնըւականութեան տիտղոս է պահանջում, հիմնվելով այն բանի վրա, որ իր տոհմը ծագում է Արծրունի իշխանական տոհմից, որ, ինչպէս յայտնի է Հայոց պատմութիւնից, մի

---

1. Շատ տարիներ յետոյ, գեներալ Երեմեայ Արծրունին Պոլիս է գնում դատ բանալու թիւրքաց կառավարութեան դէմ՝ պահանջելով իր հօր կալուածները. սակայն Օսմանեան մայրաքաղաքում նրան հասկացնում են, որ շատ լաւ կանի անմիջապէս հեռանայ, եթէ չէ ուզում թունաւորվել։

ժամանակ թագաւորում էր Վասպուրականում։ Իր պահանջը արդարացնելու համար, Գէորգը առաջ է բերում թէ Հայոց հոգևոր բարձր իշխանութեան վկայութիւնը և թէ ուրիշ վկայութիւններ։ 1814 թւին Գէորգի կողմից Ռուսաց կառավարութեան ներկայացրած տոհմագրութիւնից երևում է հետևեալը։—Երբ 16-րդ դարում, այն է 1534 թւին Թիւրքաց սուլթանը տիրեց Վանին, որտեղ բնակվում էին Արծրունիների տոհմը, այդ տոհմը ստացաւ Սուլթանից զանազան արտօնութիւններ, իբրև իշխանական տուն։ Այդ տան այն ժամանակվայ ներկայացուցիչը՝ Էհրան Արծրունին ստացաւ հեսար եօլդաշի տիտղոս։ Այդ տիտղոսը տրվում էր նոցա, որոնք իրաւունք ունէին օգտվելու քաղաքի եկամուտների մի մասից։ Արծրունիների ընտանիքը այդ իրաւունքից օգտվում էր մինչև 1814 թւականը։

Ռուսաց կառավարութեան ներկայացրած տոհմագրութիւնը սկսվում է Էհրան Արծրունուց, 1530 թւականից։ Ապա, որդոց որդի առաջ բերելով՝ հասնում է մինչև 1771 թւականը։ Այդ թւին Արծրունիների տան նախանդամ Երեմեայից ծնվում է Գէորգը—մեզ լայտնի Գէորգ աղան։ 1793 թւին Գէորգը ունենում է մի աղջիկ Մարիամ անունով, իսկ 1804 թւին մի որդի՝ Երեմեայ անունով[1]։

Թիֆլիզ գալով և բաւական հարստութիւն ունենալով, Գէորգ Արծրունին սկսում է պարապել առևտրական գործերով, և նա պարտում է ոչ թէ միայն Ռուստամանի, այլ նոյն իսկ Եւրոպայի շատ քաղաքները, Պարիզ, Ամստերդամ և այլն։ Գէորգ աղան սկզբում մտադրվում է բնակութիւն հաստատել Գալիցիայում, բայց վերջը վճռում է բնակվել Թիֆլիզում, ուր արդէն զանվում էր իր ընտանիքը, այն է՝ կինը, Երեմեայ անունով որդին և Մարիամ անունով աղջիկը[2]։

---

1. Акты Кавк. Археолог. Коммисіи, томъ V.

2. Մարիամը դեռ Վանում նշանվել էր Սանասարեանց անու-

Թիֆլիզում Գէորգ աղան ձեռք բերեց ահագին ազդեցութիւն ոչ թէ միայն իր հարստութեան, այլ և իր անձնական ընդունակութիւնների և արժանաւորութիւնների շնորհով։ Նա արևելեան երկրների մէջ պատահող այն բացառիկ տիպերից էր, որոնք թէև անուսում, թէև առանց գիտութեան, բայց միշտ հանդիսանում են իբրև ուսման և լուսաւորութեան հովանաւորող և իբրև մի որևէ նորութեան ներկայացուցիչ։

Գէորգ Արծրունին իր ժամանակին Ներսէս Ե. կաթողիկոսի մօտիկ բարեկամներից և նրա գործունէութեան աջակիցներից էր, լինելով միևնոյն ժամանակ զանազան տեսակ համակրելի գործերի նախաձեռնող և աջակից։ Իբրև մի փաստ նրա առաջադիմական ձգտումների, կարող է ծառայել և այն, որ նա բերելով Եւրոպայից, Ամստերդամ քաղաքից, Հայոց տառերի մայրեր, հիմնեց առաջին Հայոց տպարանը 1824 թուին, Թիֆլիզում, որը յետոյ Ներսիսեան դպրոցին նուիրեց և մինչև իսկ ինքը տպագրեց մի գիրք «Դարասատան խրատուց» անունով, 1829 թուին, այսինքն այն ժամանակ, երբ գիրք տպագրելը «ընտրեալների» գործն էր և երբ հայերէն գրողների թիւը ամբողջ Ռուսաստանում երկու ջուխտ մի կենդ էր։ Գէորգ Արծրունին, ինչպէս պատմում են, ունէր ուրիշ շատ գրուածներ. նա գրել էր Եւրոպայում արած իր բոլոր ճանապարհորդութիւնը։ Բայց նրա բոլոր գրաւոր վաստակներն այրվեցան 1855 թուին, երբ նրա քարվանսարան կրակ ընկաւ։ Զարմանալի չէ ուրեմն, որ Գէորգ աղան մեռնելով, բացի իր մեծ հարստութիւնից, թողեց և շատ լաւ անուն, մի նախան-

---

նով ընտանիքի զաւակ Սարգսի հետ։ Դոցա երկուսից 1818 թուականին Ռուսաստանում ծնվեց Մկրտիչ անունով որդին, որը հայ հասակութեանը յայտնի Մկրտիչ Սանասարեանն է, Էրզրումի Սանասարեան դպրոցի հիմնադիրը։ Վանում այժմ գոյութիւն ունեցող օրիորդական նախկին Սանդխտեան դպրոցը այժմ կոչվում է Մարիամեան, 'ի պատիւ այդ Մարիամի։

ձելի լիշատակ, որը երկար ժամանակ կենդանի էր Թիֆլիզի ամբողջ ազգաբնակութեան մէջ։

Գէորգ ազգի որդուն, Երեմեային, որ մեռաւ 1877 թուին, Թիֆլիզում դեռ շատերն են լիշում, և ամբողջ Թիֆլիզը նրան լաւ ճանաչում էր՝ իբրև գեներալ Երեմեայ Արծրունի։ Շատերն են լիշում այն անմատչելի, ինքնասած և խոժոռադէմ գեներալին, որը բազմած սեփական շքեղ գալլերէլի գեղեցիկ պարտիզում, փոխարքայի պալատի կողքին, կարծէք իր մօտ եկող ամէն մէկին ուզում էր ասել. «եղեցին կամք իմ յամենայնի և յամենայն ժամ»։ Երեմեայ Արծրունին Թիֆլիզում մեծ դեր է կատարել. նա եղել է քաղաքագլուխ վաթսունական թուականներին, երբ քաղաքային ինքնավարութիւնը նոր էր մտցրվել Թիֆլիզում։ Նա ուսում առած մարդ էր։ Իր ուսումը առել էր նախ ազնուականների դպրոցում և ապա զինուորական դպրոցում։ Տարօրինակութեան հասցրած ինքնուրոյնութիւնը նրա բնաւորութեան լատկանիշն էր...

Իր ժամանակին նա պաշտպանել է մի քանի պրօեկտներ. ի միջի այլոց նա ջերմ պաշտպան էր այն մտքին, թէ Կովկասի՝ Սև ծովի ափերից երկաթուղու գիծ պէտք է անցկացնել դէպի Հնդկաստան, իբրև մի լաւ միջոց ռուսաց առևտրական և քաղաքական ազդեցութիւնն այդ երկրի վրա տարածելու համար։ Այդ հարցի մասին գեներալ Երեմեան թէ կայսերական Աշխարհագրական ընկերութեան մէջ է զեկուցումներ արել և թէ գրել է առանձին գիրք, որը տպագրված է հայերէն լեզուով։ Այդ գրքոյկը իր տարօրինակ հայկաբանութեան կողմից մի լաւ նիւթ է հայոց աշխարհաբար լեզուի պատմութեան համար։

Գեներալ Երեմեայի վրա Թիֆլիզի հասարակ ժողովուրդը նայում էր իբրև անխարդախ, զուլ մարդու վրա. նրան իբրև քաղաքագլխի՝ հաւատում էին, բայց այդ բոլորի հետ միասին ժողովուրդը չէր սիրում նրան, թէև շատերը նրանից երկիւղ էին կրում, որովհետև այդ մարդը վերին աստիճանի

ինքնասած և բռնաւոր մարդ էր։ Վարվել ասած բանը նա չը գիտէր։ Նա անմատչելի էր։ Նրա խօսքին խօսք ասել չէր կարելի։ Նրա կապրիզներին վերջ չը կար։ Եթէ Գէորգ Արծրունին յարութիւն առնէր, անկասկած կը դատապարտէր իր որդու այդ տեսակ բնաւորութիւնը, բայց նրա խելքը և ընդունակութիւնները տեսնելով՝ անկասկած կասէր՝ «սա իմ որդին է»։ Եւ ճշմարիտ։ Երեմեայ Արծրունին խելօք մարդ էր։ Երբ նա մեռաւ, ռուս լրագիրներից մինը շատ ճիշտ կերպով հետևեալ կարծիքը յայտնեց.—Երեմեայ Արծրունին իր ընդունակութիւններով և խելքով կարող էր շատ բարձր դիրք ստանալ ռուսաց կառավարչական պաշտօնավարութեան մէջ, բայց նա այդ դիրքին չը հասաւ միայն իր տարօրինակ բնաւորութեան պատճառով, ոչ ոքի հետ վարվել չիմանալու պատճառով։ Իսկ վարվել իմանալը շատ կարևոր է բարձր պաշտօնների հասնելու համար...

Պատմում են, որ Երեմեայ Արծրունին շատ քչերին էր սիրում և շատ քչերի խօսքին ականջ կը դնէր։ Այդ քչերի թւումն էր և մի նիհար, բարձրահասակ մարդ, որը յաճախ տեսակցութիւն էր ունենում գեներալի հետ և որին սիրում էր ինքնասած գեներալը։ Դա Միքայէլ Նալբանդեանն էր։ Գուցէ ինքնակամ գեներալը սիրում էր Նալբանդեանին միայն այն պատճառով, որ տեսնում էր նրա մէջ մի անլողդողդ բնաւորութիւն, մի ամուր կամք... Ինքնասած մարդիկ շատ անգամ անկեղծօրէն են սիրում հաստատակամ մարդոց։

Երեմեայ Արծրունին ամուսնացել էր իշխանուհի Ագրիպինա Դաւթեան Նազարովայի հետ, որից ունեցաւ շատ զաւակներ։ Դոցանից այժմ կենդանի են միայն Գրիգոր Արծրունին, Անդրէաս Արծրունին և Եղիսաբէթ Արծրունին, որը Քութայիսի այժմեան փոխ-նահանգապետ Բարոն Ֆոն-Բրիւգէնի կինն է։ Անդրէաս Արծրունին աւարտելով Թիֆլիզի գիմնազիան, մտաւ Պետերբուրգի համալսարանը, ապա գնաց Գեր-

մանիա կատարելագործվելու համար, և այժմ հանքաբանութեան պրոֆեսոր է գերմանական համալսարաններից մէկում։

Գրիգոր Արծրունին ծնվել է Մոսկվայում, 1845 թ-ին, փետրվարի 27-ին։

Իր մանկութեան տարիները նա անցկացրեց այնպէս ինչպէս վայել էր այն ժամանակ մի հարուստ և գիրք ունեցող ընտանիքի զաւակներին—այսինքն շրջապատված դաստիարակչութիւնով և տնային վարժապետներով։

Երբ 1855 թ-ին նրա ընտանիքը ուղևորվեց Գերմանիա, որտեղ մնաց Կրէյցնախ քաղաքում (Հռենոսի ափերում), Արծրունին 10 տարեկան հասակում սկսեց լատիներէնի և գերմաներէնի դասեր առնել։ Ֆրանսերէն լեզուն էլ նա սկսեց սովորել դեռ ուսումնարան չը մտած, մանկութեան օրերում։ Պատմում են, որ դեռ երեխայ ժամանակ Մոսկվայում փոքրիկ Գրիգորը սկսեց ֆրանսերէն լեզուով մի լրագիր հրատարակել, որի ընթերցողները և բաժանորդները իր փոքրահասակ քոյրերը և եղբայրներն էին։ Օպտիմիստները այդ գէպքը անկասկած ապագայ պուբլիցիստի տաղանդի նշան կը համարեն... Վերադառնալով ընտանիքով Թիֆլիզ, նա միայն 12 տարեկան հասակում սկսեց հայերէն սովորել։ Դրանից առաջ նա մի բառ անգամ չը գիտէր հայերէն։ Նրա հայերէնի առաջին վարժապետն էր Գրիգոր քահ. Տէր-Բարսեղեանց, ապա Պետրոս Սիմէօնեան, յետոյ լայտնի գրաբարագէտ Առաքել վարժապետ Արարատեան։

Ընտանեկան լաւ կրթութիւն ստացած, Արծրունին մտաւ Թիֆլիզի կլասիքական գիմնազիան և դեռ գիմնազիական հասակում լայտնի էր ընկերների մէջ իր տաք բնաւորութեամբ և իբրև իր հայրենակիցների համար լամառ կուռդ։

Գիմնազիան նա աւարտեց 1863 թ-ին, այսինքն 18 տարեկան հասակում։ Յաջորդ տարին, այն է 1864 թ-ին

Արծրունին մտաւ Մոսկվայի համալսարանի բնագիտական ֆակուլտետը և 1865-ին տեղափոխվեց Պետերբուրգի համալսարանի նոյն ֆակուլտետի երկրորդ կուրսը։ 1865 թվի ապրիլ ամսին նա առաջին անգամ սկսեց գրել «Մեղու Հայաստանի» լրագրում։ Նոյն տարուայ վերջը, հիւանդութեան պատճառով, բժիշկների խորհրդով, թողեց հիւսիսը և գնաց հարաւային Ցրանսիա, Նիցցա քաղաքը։ Մի ձմեռ Նիցցայում անցկացնելուց յետոյ, հետևեալ տարին Արծրունին գնաց Նէչեյսրիա, որտեղ ինչպէս ազատ ունկնդիր լսում էր նախ Ցիւրիխի, ապա Ժընէվի համալսարանի դասախօսութիւնները, գլխաւորապէս քաղաքական և քաղաքատնտեսական գիտութիւններով հետաքրքրվելով։ Այդտեղից նա շարունակեց գրել «Մեղուի» և «Հայկական աշխարհին»։ 1867 թվին ուսանող մտաւ Էյդլբերգի համալսարանի փիլիսոփայութեան ֆակուլտետը, իր համար մասնագիտութիւն ընտրելով քաղաքատնտեսութեան պատմութիւնը, ստատիստիկան, ֆինանսները և առհասարակ քաղաքատնտեսական գիտութիւնները։ Այդտեղ նա գլխաւորապէս լսում էր Բաուռ, Կնիս, Բլունչլի և Տրէյչկէ պրոֆեսորներին, միևնոյն ժամանակ գրված լինելով և բնագիտական բաժնի մի քանի դասախօսութիւններին, լսում էր Հելմհոլցի «Բնական գիտութիւնների ընդհանուր հետևանքները» և Վունդի «Հոգեմասական անտրոպոլոգիան»։ Էյդլբերգում եղած ժամանակն էլ աշխատակցում էր «Հայկական աշխարհին»։

Քաղաքատնտեսական և քաղաքական գիտութիւնների շրջանից հարցաքննութիւն տալով, Գրիգոր Արծրունին 1869 թվի վերջերին ստացաւ Էյդլբերգի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետի դոկտորի աստիճան։

Նոյն տարին Պարիզ գնալով, այնտեղի համալսարանումն էլ մի քանի ամիս լսեց քաղաքատնտեսական դասախօսութիւններ։ Պարիզից Արծրունին եկաւ Վիէննա, ուր մի ամբողջ ձմեռ անցկացրեց, մի կողմից Մխիթարեանների մօտ հայերէնից պարապելով, միւս կողմից հետևելով Վիէննայի համալսարանում

Լօրենց, Շտէյն և Շէֆլէ պրոֆէսօրների քաղաքատնտեսական դասախօսութիւններին։

Այդ ժամանակ արդէն, ինչպէս երևում է, Գրիգոր Արծրունին բաւական որոշ կերպով էր կազմել իր ապագայ գործունէութեան ծրագիրը հայ ժողովրդի մէջ և այդ պատճառով առանձին եռանդով է սկսում սովորել հայոց լեզուն։ Այդ նպատակով նա Վիէննայից գնում է Վենեցիա, որտեղ վեց ամիս պարապում է հայերէնից Մխիթարեան վանքի միաբան (այժմ աբբահայր) հայր Իգնատիոս Կիւրեղեանի մօտ։ Վենեցիայից վերադառնալով Հէյդլբերգ, կրկին մի վեցամսեակ համալսարանում լսում է քաքաքական և քաղաքատնտեսական դասախօսութիւնները։

1871 թւին Գրիգոր Արծրունին վերադարձաւ Թիֆլիզ։

Թիֆլիզում Արծրունին մի առ ժամանակ, առանց վարձատրութեան, դասատուութիւն արաւ Հայոց օրիորդական դպրոցներում և նոյն իսկ մի ժամանակ վարեց Գայիանեան և Մարիամեան դպրոցների տեսչի պաշտօնը։ Դրա հետ միասին նա շարունակում էր գրել «Մեղուի» մէջ «Նեօրէ» ստորագրութեամբ, «Հայկական աշխարհում» իր ստորագրութեամբ, Կ.-Պոլսի «Մասիս» լրագրում, Պետերբուրգում Կորշի խմբագրութեամբ հրատարակվող «С.-Петербург. Вѣдомости» լրագրում թէ առանց ստորագրութեան և թէ «Է. Շատ-Իրաւացի» (Э. Шатъ-Иравацы) ստորագրութեամբ։

1872 թւին Արծրունին հիմնեց Թիֆլիզում «Մշակ» լրագիրը, որ սկզբում շաբաթաթերթ էր. 1876 թւից սկսեց շաբաթը երկու անգամ հրատարակվել, իսկ 1878 թւից դարձաւ ամենօրեայ, հրատարակվելով շաբաթը հինգ անգամ։

Խմբագրելով և հրատարակելով «Մշակը» Արծրունին միևնոյն ժամանակ զանազան հարցերի մասին գրում էր ռուսաց «Биржевыя Вѣдомости», «Русскій Міръ», «Русскій Курьеръ» և Վիէննայի «Journal d' Orient» լրագրներում, նոյնպէս և Թիֆլիզում հրատարակվող «Тифлисскій Вѣстникъ»

լրագրում, որտեղ ի միջի այլոց գետեղել է մի շարք առաջնորդող յոդուածներ Թիւրքաց Հայերի մասին։

1876 թուին Արծրունին առաջին անգամ կարդաց Թիֆլիզում Հայերէն լեզուով մի դասախօսութիւն «Միօրական ժողովրդագրութեան» մասին, և ապա ուրիշ դասախօսութիւններ, ի միջի այլոց 1879 թուին մի դասախօսութիւն «Թիւրքաց Հայերի տնտեսական դրութեան մասին»։

Հրատարակելով «Մշակը» նրա գոյութեան օրից սկսած, 1884 թուին նա ընդմիջեց «Մշակի» հրատարակութիւնը անձնական հանգամանքների պատճառով։ Ահա թէ ինչ գրեց Գ. Արծրունին այդ մասին, 1884 թուի Մշակի № 65—վերջին համարում։

—«Պարտաւորութիւն եմ համարում մի կարճ հաշիւ տալ հայ հասարակութեանը իմ գրութեան մասին։

Արծրունի եղբայրները ունէինք Թիֆլիսում կալուածներ, որոնք պատկանում էին մեր տոհմին մօտ մի հարիւր տարի, որոնց նման ոչ միայն Կովկասում, այլ և Ռուսաստանում չը կար և որոնց արժողութիւնը միլիոնի էր հասնում.—ահագին քարվանսարայ 200 խանութով և թատրոնով, 1,300 քառակուսի սաժէն տարածութեամբ և ահագին այգի 1,500 քառակուսի տարածութեամբ, սեփական տնով, ջրով և գազի գործարանով։

Երբ ներկայ տագնապի ժամանակ այդ կալքերը պէտք է ծախվէին պարտքերի համար, որոնք հասնում էին կալքերի իսկական արժողութեան կէսին միայն, Թիֆլիսի հասարակութեան կողմից խոստումներ եղան մի կողմից ակցիոներական ընկերութիւն կազմել այդ կալքերը գնելու համար, միւս կողմից գնել այդ կալքը Էջմիածնի համար, երրորդ կողմից քաղաքի համար և այլն։ Բայց ոչինչ չաջողվեց։ Կալքերը աճուրդի նշանակվեցան ու բանկի վրա մնացին և այժմ ես զբաղված եմ ամեն միջոցներից. նոյն իսկ այն պապական տունը այգիով, որտեղ ինքս ապրում էի, ձեռքից գնաց։

Այժմ խառն գրութեան մէջ, երբ ինքս դեռ չը գիտեմ ինչ միջոցներով ինքս պէտք է ապրեմ, որտեղ կը լինի «Մշակի» խմբագրատունը, որտեղ կը լինի բնակարանս, ստիպված եմ

առժամանակ, գոնէ երկու ամսով, դադարեցնել "Մշակի" հրատարակութիւնը։

Տասն և երեք տարվայ գրական գործունէութիւնից յետոյ հայոց հասարակութեան համար, այժմ կորցնելով իմ ամբողջ կարողութիւնս, այս բոպէիս ինքն իրան հարց է առաջարկվում թէ "Մշակի" գոյութեան և թէ իմ անձնական ապրուստի մասին»։

Նոյն 1884 թուականին Արծրունին իր քայքայված առողջութիւնը վերականգնելու համար, գնաց Շվէյցարիա, որտեղ մի տարի անցկացրեց։ Այդտեղից նա գրում էր Կ.-Պոլսի «Արևելք» լրագրի մէջ։

Այդ ժամանակն էր, որ Գրիգոր Արծրունին հեռս Շվէյցարիայից ողբալով Ներսէս Վարժապետեանի մահը, առաջարկեց ընտրել Խրիմեանին իբրև, Ներսէսից յետոյ, ամենայարմարը հայոց կաթողիկոսական գահի համար...

1885 թուականի վերջերին Թիֆլիզ դառնալով, յաջորդ 1886 թուից Արծրունին նորից սկսեց հրատարակել «Մշակը» շաբաթը 3 անգամ։ Խմբագրելով լրագիրը, 1889 թուին Արծրունին Թիֆլիզի հասարակութեան կողմից Պարիզ գնաց, ներկայ լինելու «Գրողների կոնգրեսին» և շարունակում է մինչև այժմ էլ, այն է 1890 թուականը, խմբագրել «Մշակը», բոլորելով իր գրական գործունէութեան քսանևհինգամեակը։

III.

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒԹԻՒՆԸ

A II 31639

Գրիգոր Արծրունին իր առաջին, անդրանիկ յօդուածը գրեց 1865 թուին, երբ դեռ քսան տարեկան ուսանող էր Պետերբուրգում։ Այդ յօդուածը տպագրվեց այն ժամանակ Թիֆլիզում հրատարակվող «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթում, այն է 1865 թուի № 13 և 14-ի մէջ և կրում է հետևեալ վերնագիրը. «Բնական գիտութիւնների նշանակութիւնը դաստիարակութեան մէջ»։

Ուշադրութեան արժանի են յօդուածի վերջում առաջ բերած Հերշելի խօսքերը թէ՝ «առաջադիմութեան համար մարդուն հարկաւոր է ոչ թէ միայն շատ բան սովորել, այլ և շատ բան մոռանալ»։ Գրիգոր Արծրունին հաստատում մնաց իր գրական գործունէութեան ընթացքում այդ խորիմաստ խօսքերին.—նա աշխատեց ոչ թէ միայն շատ բան սովորեցնել, այլ և շատ բան մոռացնել տալ... Նոյն թուի № 23-ի մէջ տպած է երկրորդ յօդուածը՝ «Երկու խօսք աղջկերանց դաստիարակութեան վրա» վերնագրով։

Պետերբուրգից տեղափոխվելով Եւրոպա, 1866 թուից սկսած, թէ Ֆրանսիայում, թէ Նվէյցարիայում և թէ Հէյդելբերգ եղած ժամանակ Արծրունին սկսեց աւելի յաճախ գրել Թիֆլիզի այն ժամանակվայ երկու հրատարակութիւնների՝

ՀԱՅԿ ԳՐԱԿԱՆ

«Մեղու Հայաստանի» շաբաթաթերթի և «Հայկական աշխարհի» մէջ։ Նրա այդ գրուածները վերաբերում են մեծ մասամբ քաղաքատնտեսական, դաստիարակչական և բնագիտական զանազան հարցերի և հայոց գրականութեան։ Օրինակ, «Հայկական աշխարհի» 1867 թ-ի մէջ տպագրված են հետևեալ յօդուածները, որոնց վերնագիրները արդէն մասամբ գաղափար կարող են տալ բովանդակութեան մասին.

1) «Աշխատանք», որը պարունակում է մի քանի մտքեր՝ քաղած Էդմօնդ Արու-ի «Le Progrès» (Առաջադիմութիւն) անունով գրքից։ Այդ յօդուածում կան ի միջի այլոց հետևեալ խօսքերը. «Մեր պարտքը մարդկութեան վճարելու համար մեզ հարկաւոր է աշխատել, մեզ հարկաւոր է մեզանից լեռոյ ինչ և իցէ լաւութիւն թողնել։ Մեզանից չենք պահանջում հրաշքներ գործել, բայց ինչ և իցէ լաւութիւն թողնել... Եւ այն մարդիկներին, որոնք իրանցից լեռոյ ինչ և իցէ աշխատանք կամ լաւութիւն են թողել, ես անուանում եմ «առաջադիմութեան մշակներ»... Թող կորչէ անունը,—բարի գործը չի կորչի։ Աշխատենք»։

2) «Քանի մի մտքեր». այս յօդուածում յայտնված են մի քանի վերին աստիճանի համակրելի մտքեր երեխաների կրթութեան և նոցա բնական ընդունակութիւնների զարգացման մասին։ Նոյն յօդուածի մէջ Գրիգոր Արծրունին մի միտք է պաշտպանում, որ անկասկած սարսափ կը պատճառէր այն ժամանակվայ հայոց «ազգային գործիչներին»։ Նա պաշտպանում է տղաների և աղջիկների համար խառն դպրոցներ հիմնելու միտքը, այսինքն այնպիսի դպրոցներ, որտեղ երկու սեռին պատկանողներն էլ միասին ուսանէին։ Արծրունին ասում է.

«Մարդ և կնիկ երկու ընկերներ են, որոնց բնութիւնը նշանակել է միասին մի գործ կատարելու կեանքում. այդ գործը ապագայ սերունդների դաստիարակութիւնն է։ Դուք պակվում էք, որ երեխաներ ունենաք. բայց այդ բաւական չէ, պէտք

է դաստիարակութիւն տալ նոցա։ Ձեր կինը ձեր ընկերն է երեխաների դաստիարակութեան մէջ։ Ուրեմն ինչպէս էք կամենում, որ ձեր երեխաների տուած դաստիարակութիւնը լաւ լինի, երբ որ դուք ձեր կնոջ չէք ճանաչում. նա ձեզ չէ հասկանում, դուք նորան չէք հասկանում։ Երկու ընկերներ սկսել են գործ և միմեանց չեն ճանաչում, յայտնի բան է որ գործը վատ կերթայ... Այն է բաժանված ուսման մեծ պակասութիւնը, որ նա տիպում է տղաներին և աղջիկներին միմեանց օտար մընալ.—ուրեմն նոցա միակողմանի զարգացումն է տալիս։—Ոչինչ այնպէս անբարոյական չէ, ինչպէս այն կասկածը, որը երեխաների մէջ ծնվում է բաժանված ուսումից։ Աղջիկներին կրկնում են թէ՝ ամօթ է և լաւ չէ տղաների հետ ընկերութիւն անել. տղաներին ասում են՝ որ հեռանան աղջիկներից։ Այդ տեսակ անլուծանելի խորհուրդը կասկած է գցում երեխաների մէջ։ Այդ կասկածից աւելի վտանգ կարելի է սպասել, քան թէ աղջիկների և տղաների շարունակ բնական յարաբերութիւններից։ Սովորութիւնը մեծ բան է։ Ամերիկայի ուսումնարանների մէջ տղան այնպէս սովորում է իր կողքին աղջիկներ տեսնել, որ վերջապէս նոցա յարաբերութիւնները ընկերական և եղբայրական են դառնում... Այդ տեսակ ուսումնարանների մէջ աղջիկն և տղան ամեն օր միմեանց տեսնելով, միմեանց հետ բարեկամանում են և այդ բարեկամութիւնից շատ անգամ դուրս է գալիս ս է ր։ Ասում են որ այդ բարեկամութիւնից դուրս եկած սէրը ամենաբաղդաւոր ամուսնութիւններ է ծնում»։

Այդ յօդուածը գրված է 1866 թուին, Նիցցայից։

Նոյն «Հայկական աշխարհի» 1868 թուի համարներում տպագրված են Գրիգոր Արծրունու՝

1) «Ինչ է կնամարդը» յօդուածը, որի մէջ անց է կացնում այն կարծիքը, որ կինը չի կարող դաստիարակիչ—մայր լինել և երեխաներ դաստիարակել, եթէ նա ինքը տ գ է տ է, ս տ ր ու կ, և չունի սեփական անկախութիւն։ Այդ յօդուածը գրված է 1866-ին, Ցիւրիխում։

2) «Գրականութիւն չը կայ» յօդուածը, որի մէջ ասում է, թէ Հայոց հին գրականութիւնը չի կարող լիութիւն տալ այժմեան կեանքի պահանջներին, յայտարարելով որ չը կայ

այդ կեանքի պահանջներին լիութիւն տուող նոր գրականութիւն։ Թէ այդ և թէ «Դէպալիստներ» վերնագրով յօդուածը գրված են Նվէլցարիայից։

3) «Ինչի չենք հիմնում» վերնագրով յօդուածում, ի միջի այլոց հետևեալ տողերն են գրված. «մենք հայերս ոչ մի բանից օգուտ չենք քաղում։ Մեր մասին ասում են, որ մենք վաճառական ազգ ենք.—բայց դա ուղիղ չէ։ Այո, մենք վաճառականութեամբ ենք պարապում, մենք առնում ենք և ծախում ենք, վաճառականութիւնից շահվում ենք,—բայց մթթէ այդպիսի ազգին, որը միայն առնում և ծախում է, իսկ ինքն ոչինչ չէ արդիւնաբերում, կարելի է վաճառականական ազգ անուանել։ Ապա մի շարք փաստեր բերելով Կովկասի այս և այն արդիւնաբերութեան մասին ուսուցնում է. «Ուրեմն մենք տեսնում ենք, որ ոչինչ բանից օգուտ չենք իմանում քաղել, ամեն գործի մէջ մնասվում ենք մեր տգիտութեան պատճառով։ Դպրոցը պահանջմունք է մեզ համար ուրեմն տարածել գիտութիւն մեր մէջ, մեր գործնական աշխատանքը օրինաւոր կերպով կատարելու համար։ Եթէ ոչ երբ շինվեն մեր երկրում երկաթուղիներ, երբ մեր երկիրը ուեղի յայտնի կը լինի եւրոպացիներին,—նոքա կը գան մեր երկիրը, կը հիմնեն գործարաններ, և գիտնական մարդիկ լինելով, իրանց գումարները մեզանից լաւ կառավարել իմանալով, մեր բնական արդիւնքներից կը պատրաստեն առաւել մեծ քանակութեամբ, առաւել մաքուր, վաճառահանութեան առաւել յարմար արդիւնքներ։ Այնպէս որ հայերին խնդրակցութիւն կանեն, հայերի ձեռքից գումարները կը խլեն»։ Յօդուածը վերջացնում է, առաջարկելով, որ բացի հարուստների որդկերանցից, որոնք գնում են ուսում առնելու, և որոնք թւով քիչ են, պէտք է ուղարկել և ուրիշ բազմաթիւ երիտասարդներ, այս և այն մասնագիտութիւնն ուսանելու, գործնական աշխատանքի ընդունակ դառնալու, որոնք վերադառնային և մշակէին երկրի այս ու այն բնական հարստութիւնները։ Այդ տեսակ երիտասարդների ուման ծախ-

քը հոգալու համար Գրիգոր Արծրունին առաջարկում է հիմնել նոյն իսկ ընկերութիւններ։ Այդ յօդուածը գրված է Հէյդելբերգից 1868 թ-ին, երբ նա ի միջի այլոց սկսեց գրել և այնպիսի դպրոցների մասին, որտեղ առաջարկում էր ընդունել երեխաներ առանց դասանութեան խտրութեան։

1871 թ-ին արդէն Թիֆլիզ գալով Գ. Արծրունին գրեց «Հայկական աշխարհում» մի շարք քաղաքատնտեսական յօդուածներ՝ «Աշխատանքի բաժանութիւն» վերնագրով։ Առաջ ենք բերում այդ յօդուածներից մի կտոր.

«Միջին դարերի գիտութեան մէջ տիրում էր Լատինական լեզուն։ Նա մեծ օգուտ է բերել ժամանակին, նորոգելով հին դասական (կլասիական) աղբիւրների միջոցով Եւրոպայի նորահաս միտքը և գիտութիւնը. բայց երբ Եւրոպական գիտութիւնը առաջադիմութիւն անել և հների գիտութիւնից դերազանցել փորձեց, Լատինական լեզուն, մեռած լեզու լինելով, անզօր դարձաւ գիտութեան բոլոր ճիւղերն ընդարձակելու և նոր ձևեր ընդունելու։ Մեռած լեզուն մեռած ձև լինելով, չէ կարող առաջադիմութիւններ անել։ Ամեն մի ազգութեան անտաշ լեզուն, իր նոր, կենդանի և փոփոխական ձևերով առաւել ընդունակ յայտնվեցաւ մարդկութեան գիտութիւնը առաջադիմութեան ճանապարհին մղելու»։

Գրելով «Հայկական աշխարհի» մէջ, ինչպէս վերևն էլ ասացինք, Արծրունին գրում էր և «Մեղուի» մէջ, իր սեփական անունով, իսկ 1871 թ-ին Նեօրէ կեղծ ստորագրութեամբ (այդ ստորագրութեամբ Արծրունին շարունակեց մի առ ժամանակ գրել և «Մշակի» մէջ)։ Նրա յօդուածները մեծ տպաւորութիւն էին թողնում։ Այդ երևում է և նրանից, որ «Հայկական աշխարհը» թէև թշնամի «Մեղուին», խորհուրդ էր տալիս իր ընթերցողներին կարդալ Գրիգոր Արծրունու «Մեղուի» էջերում տպագրվող «Ազգային գրառումներ» (1867 թ-ին տպած), «Նարունակենք թէ ոչ» (1868 թ-ին տպած) և ուրիշ «իմաստուն» յօդուածներ։

Առաջ բերելով Գ. Արծրունու, «Մեղուի» և «Հայկական

աշխարհի» մէջ տպագրած յօդուածներից երկար ցիտատներ, մենք երկու նպատակ ունէինք.—նախ՝ ցոյց տալ թէ ինչպիսի հայերէնով սկսեց գրել Արծրունին 1865 թ-ին և թէ ինչ փոփոխութիւնների և առաջադիմութեան ենթարկվեց նրա լեզուն և ոճը մինչև 1871 թուականը։ Եւ երկրորդ՝ ուշադրութիւն դարձնել այն հանգամանքների վրա, որ իր գրական գործունէութեան հէնց առաջին քայլափոխից՝ այդ մարդը երևան է գալիս իբրև ազատ մտքերի դաւանող, իբրև համարձակ մտածող՝ և ընդունված հասկացողութիւնների չենթարկվող։ Ուշադրութեամբ հետևելով Գրիգոր Արծրունու բոլոր գրածներին, մինչև 1871 թուականը, թէ «Մեղուի» թէ «Հայկական աշխարհի» և թէ վերջապէս արտասահմանեան և ռուս լրագիրների մէջ, մարդ այն եզրակացութեան է գալիս, որ դեռ շատ երիտասարդական հասակում նրա մէջ կային այն մտքերի և ուղղութեան սաղմերը, որոնք շատ պարզ երևան եկան տարիներ յետոյ «Մշակի» էջերում։ Ճշմարիտ է, Արծրունու ուսանողական հասակում գրած յօդուածներից շատերը պարզ ցոյց են տալիս, որ հեղինակի մտքերը դեռ կատարելապէս չեն հաստատվել, դեռ վերջնականապէս չեն կազմակերպվել, բայց և այնպէս շատ գաղափարներ դեռ այն ժամանակ արդէն այնքան խոր արմատ էին գցել նրա մէջ, որ նա նրանց փայփայել և պաշտպանել է մինչև այժմ էլ՝ իր գրական ամբողջ գործունէութեան ընթացքում։

Եղել են դէպքեր, որ Գ. Արծրունին, ժամանակակից պահանջների վրա հիմնվելով, սկսել է նոր կարծիք յայտնել, փոխանակ այն կարծիքի, որ նա պաշտպանում էր երիտասարդ հասակում, ուսանող եղած ժամանակ։ «Հայկական աշխարհի» 1867 թ-ի համարներից մէկում տպած է Գ. Արծրունու «Գերդաստանի ազդեցութիւնը և համալսարան» վերնագրով յօդուածը։ Այդ յօդուածում հեղինակը այն միտքն է անցկացնում, թէ որովհետև մեր ընտանիքի մէջ, որտեղ տիրում են զանազան նախապաշարմունքներ, անդամների մէջ՝ փոխանակ հաստատու-

թեան իրաւունքի՝ տիրում է բռնութիւն, և որովհետև միշտ այդպիսի ընտանեկան շրջանի ազդեցութեան ներքոյ կրթվելով և միշտ այդպիսի շրջանում լինելով՝ մեր սերունդը չէ կարող թօթափել իրանից իր նախորդների վատ յատկութիւնները, ուստի անհրաժեշտ է, որ նոր սերունդին պատկանողները՝ գէթ բարձրագոյն ուսում ստանալու համար առ ժամանակ հեռանային իրանց ընտանեկան շրջանից, գնային աւելի քաղաքակիրթ երկիրներ և մշակէին այնտեղ իրանց համար աւելի անկախ, աւելի ազատ բնաւորութիւն։ Հիմնվելով այդ տեսակէտի վրա, Արծրունին այն կարծիքն է յայտնում, որ մեր երիտասարդութեան արտասահմանի համալսարաններ գնալը շատ և շատ նպատակայարմար է, ուստի և չէ համակրում Կովկասում համալսարան հիմնելու մտքին՝ վաղաժամ համարելով նրան։

Անցան տարիներ, և «Մշակի» էջերում արդէն, 1873 թուին, Արծրունին հրապարակապէս լիշեցնելով «Հայկական աշխարհի» էջերում իր քարոզած միտքը, յայտնում է, որ իր կարծիքը այդ հարցի մասին փոխել է, և որ այժմ ժամանակ է հիմնելու Կովկասեան համալսարան։ Ցաւանի է, որ դրանից յետոյ ոչ ոք, ոչ հայոց, ոչ ռուսաց և ոչ վրաց մամուլի մէջ Կովկասում, այնքան ջերմ կերպով չէ պաշտպանել և արծարծել Կովկասեան համալսարան հիմնելու խնդիրը, որքան Գրիգոր Արծրունին։

Ի նկատի ունենալով Թիֆլիզի հայոց մամուլի միակողմանութիւնը և վերին աստիճանի պահպանողականութիւնը այն ժամանակ, երբ Արծրունին գրում էր «Հայկական աշխարհի» և «Մեղուի» մէջ, նրա յօդուածները և յայտնած մտքերը վերին աստիճանի համարձակ, վերին աստիճանի բ ա դ ի կ ա լ էին թւում խմբագիրներին։ Նոյն իսկ «Հայկական աշխարհը», որ իրան միշտ թշնամի էր ցոյց տալիս պահպանողականութեան, դժուարանում էր տպագրել Արծրունու յօդուածները, թէև միւս կողմից տպագրելու էլ մեծ փափակ ունէր, որպէս

զի, ինչպէս խմբագրութիւնը ինքն է յայտարարում, «ընթերցողներին մասնակից կացուցանի յօդուածների խելացի և միանգամայն օգտաւէտ մտքերին»։ Յօդուածները, ինչպէս երեւում է նոցա գրած լինելու և տպագրութեան թուականներից, շատ անգամ երկու տարուց յետոյ էին միայն լոյս տեսնում։ «Հայկական Աշխարհի», 1868 թ-ի մի համարում տպագրված է Գրիգոր Արծրունու մի յօդուածը՝ «Գրականութիւն չը կայ» վերնագրով։ Դրա մէջ հեղինակը քննելով հայոց հին գրականութիւնը, ասում է. «հին գրականութիւնը մեզ ցոյց է տալիս թէ մենք ինչ ենք եղել և ինչ ենք արել,—բայց նա մեզ չէ ցոյց տալիս թէ մենք ինչ պէտք է անենք». և ապա այն կարծիքն է յայտնում, որ կեանքի նոր պահանջներին միայն նոր գրականութիւնը կարող է լուծիւն տալ։ Այդ կարծիքները, որ այժմ տարբերան ճշմարտութիւններ են թուում կոնսերվատորների համար իսկ, այնքան խիստ և սարսափելի են թուացել «Հայկական աշխարհի» խմբագրին, որ նա դժուարանում էր հրատարակել, և տպագրում է միայն ինն ամսից յետոյ, այն էլ «պատասխանատուութիւնը նոյն ինքն հեղինակին թողնելով», ինչպէս ասված է խմբագրական ծանօթութեան մէջ։

Դա էլ մի փաստ է, որ գաղափար է տալիս վաթսունական թուերի վերջերքի Թիֆլիզի հայոց մամուլի ուղղութեան մասին, ապացուցանելով միևնոյն ժամանակ, որ Գրիգոր Արծրունին այդ ուղղութեան հետևող չէր։

Արծրունու աշխատակցութիւնը «Հայկական աշխարհին» զարմանալու բան չէ, քանի որ այդ ամսագիրը յետագէմ ամսագիր չէր համարվում. բայց «Մեղուի» մէջ Արծրունու գրելը, այլ և այն փաստը, որ նրա առաջին յօդուածը տպագրվեց այդ լայնի պահպանողական լրագրում, կարող է շատերին զարմանք պատճառել, և շատերը, մանաւանդ նոքա, որոնք գիտեն թէ ինչ կարծիք ունի Արծրունին «Մեղուի» մասին, կարող են հարցնել. «այդ ինչպէս է եղել, որ Արծրունին ըս-

կսել է գրել «Մեղուի» մէջ։ Նոյն իսկ «Մեղուի» խմբագրութիւնը, տարիներ անցնելուց յետոյ, երբ Արծրունին խիստ կերպով յարձակվում էր «Մեղուի» ուղղութեան վրա, պատասխանում է. «եթէ «Մեղուն» վատ է, մնասակար է, ապա ինչու՞ ուրեմն ինքներդ գրում էք նրա էջերում. ուրեմն դուք փոփոխամիտ մարդ էք»։

Ճշմարիտ հետաքրքրական է պարզել, թէ արդեօք ո՞րն է աւելի զարմանալին, այն, որ Արծրունին գրում էր «Մեղուի» էջերում, թէ այն որ «Մեղուն» տպում էր Արծրունու յօդուածները։ Եթէ Գրիգոր Արծրունին «Մեղուի» էջերում պաշտպանէր այնպիսի մտքեր, որոնք «Մեղուին» էին յատուկ, եթէ այդ լրագրի էջերում յայտնէր իր սեփական ուղղութեան հակառակ մտքեր,—այն ժամանակ ի հարկէ կարելի էր ասել, որ նա փոփոխամիտ մարդ է, որ նա փոխել է իր համոզմունքները, հայեացքները, նայելով թէ որտեղ և ինչ օրգանում է գրում։ Բայց Գրիգոր Արծրունին այդպիսի բան չէ արել։ Ընդհակառակը քաջութիւն պէտք է համարել նրա կողմից այն, որ նա կարողացել է յետադէմ «Մեղուի» էջերում անցկացնել այնպիսի մտքեր, որոնց միշտ դէմ պէտք է լինէր «Մեղուն», և որոնց միշտ իրան թշնամի է ցոյց տուել այդ լրագիրը։ Բնական տարեկան մի երիտասարդ ձգտում է գրելու, նա ուզում է լոյս հանել իր այս կամ այն միտքը, գրիչ է վերցնում, արտայայտում է իր մտքերը, և ուղարկում է հայոց մի լրագրի այն ժամանակ, երբ ուրիշ աւելի լաւ հրատարակութիւններ չը կային։ Մեզ յայտնի չեն թէ արդեօք «Մեղուն» Արծրունու բոլոր յօդուածներն էր տպագրում թէ ոչ, բայց տպագրածների մէջ էլ կան շատ այնպիսի մտքեր, որոնք լոյս չը պէտք է տեսնէին այդ լրագրում, եթէ նա խմբագրվում լինէր մի հաստատ ձեռքով, և եթէ լոյս են տեսել, այդ էլ անկասկած հանգուցեալ լրագրի խմբագրութեան առատաձեռնական անհոգութեան շնորհով, այլ և գուցէ այն պատճառով, որ գրողը գեներալ Արծրունու որդին էր...

1871 թ. Թիֆլիզ գալով Գրիգոր Արծրունին շատ կարճ ժամանակ օգտվեց «Մեղուի» և «Հայկական աշխարհի» էջերից։ Նա շտապեց իրագործել իր՝ դեռ առաջ լցացած միտքը, այն է հիմնելու մի անկախ օրգան, և 1871 թուի աշնանը արդէն լոյս տեսաւ «Մշակի» յայտարարութիւնը, որով յայտնում էր թէ 1872 թուից պէտք է սկսվի «Մշակ» լրագրի հրատարակութիւնը։

IV.

ՀԱՅՈՑ ՄԱՄՈՒԼԻ ԱՆՑԵԱԼԻ ՄԱՍԻՆ

Գրիգոր Արծրունին 1871 թուին Թիֆլիզ վերադարձաւ փիլիսոփայութեան դոկտորի տիտղոսով և 27 տարեկան հասակում՝ 1872-ին հիմնեց «Մշակ» լրագիրը։ Մշակի լոյս գալովը մի նոր էպոխա է սկսվում հայոց գրականութեան և մամուլի մէջ։ Թէ այդ էպոխի առանձնայատկութիւնները լաւ հասկանալու, թէ Գ. Արծրունու նոր ուղղութիւնը և թէ «Մշակի» գործունէութիւնը լաւ պարզելու համար մեզ հարկաւոր է երկու հարց պարզել։

Առաջին՝ ինչ էր հայոց մամուլը ռուսահայերի մէջ մինչև «Մշակը» և ինչ հող էր պատրաստել նա «Մշակի» համար, և

Երկրորդ՝ ինչ հասարակական հանգամանքների մէջ Գ. Արծրունին հիմնեց «Մշակը»։

Առաջին հարցին պատասխանելու համար ես ստիպված եմ մի քիչ հեռու գնալ և սկսել ռուսահայերի մէջ հայոց մամուլի սկզբնաւորութիւնից։

Մամուլը ռուսահայերի մէջ սկիզբն է առել աւելի ուշ քան թիւրքահայերի և առհասարակ արտասահմանեան հայերի մէջ։ Արտասահմանեան հայոց մամուլի մասին մենք չենք խօսիլ և կը բաւականանանք միմիայն ռուսահայերի մամուլի տեսութեամբ։

Առաջին հայ թերթը որ երևեցաւ ռուսահայերի մէջ, դա «Կովկաս» շաբաթաթերթն էր, որ 1847 թուին հրատարակվեց Թիֆլիզում, խմբագրութեամբ Կարինեանի (որ մի ժա-

մանակ Ներսիսեան դպրոցի տեսչի պաշտօն էլ էր վարում) և գլխաւոր աշխատակցութեամբ Մ. Պատկանեանի։ Բաւական է ասել, որ «Կովկասը» հրատարակվում էր գրաբար լեզուով և այդ արդէն գաղափար կը տայ, որ շաբաթաթերթը միմիայն «ընտրեալների» համար էր հրատարակվում։ Իսկ այդ «ընտրեալները» Վենետիկի միաբանութեան գրքերի՝ փիլիսոփայական և հնախօսական գրքերի սիրահար «հայկաբան» և շատ անգամ «վարժապետ» տիտղոսը կրող մի խումբ մարդիկ էին, որոնք և սիրտ էին անում հայերէն գրաբար գրքերի վրա փող ծախսել, առնել և կարդալ։ Այդ ժամանակ համալսարաններից դուրս եկած հայերի թիւը ամբողջ Ռուսաստանում 20-ի հասնիւ էր հասնում։ Ուրեմն հեշտ է երևակայել, թէ ինչքան կը լինէր «Կովկասի» ազդեցութիւնը, եթէ աւելացնենք, որ գրաբար լեզուով հրատարակվող լրագրի էջերի մէջ տպագրվում էին գլխաւորապէս ոտանաւորներ, առակներ և մի քանի էլ պաշտօնական բնութիւն ունեցող լուրեր։

Այդպիսի լրագիրը ի հարկէ երկար գոյութիւն ունենալ չէր կարող և չը կարողացաւ էլ, նա միայն երկու տարի տարեց և 1848-ին դադարեց։ 1850 թուին Թիֆլիզում լոյս տեսաւ մի նոր շաբաթաթերթ «Արարատ» անունով՝ խմբագրութեամբ Գաբրիել քահանայ Պատկանեանի։ «Արարատը» հրատարակվում էր կոտրատած աշխարհիկ լեզուով։ Այդ թերթը գոյութիւն ունեցաւ միայն մի տարի։

Քառասունական թուականների վերջերին՝ հայոց մամուլի սկզբնաւորութեան առաջին անյաջող փորձերից յետոյ վրա հասան յիսունական թուականները, մտաւոր և քաղաքական մեծ շարժումներով։ Եւրոպայում քաղաքական և մտաւոր շարժումները եռում էին։ Ռուսաստանում մտքի մեծ շարժումներ էին սկսված և դատաստանական և ուրիշ բէֆօրմների նախընթաց օրն էր։ Այդ բոլորը մի կողմից. իսկ միւս կողմից 60-ական թուականների սկզբներին Կ.-Պոլսում՝ թիւրքահայերի ինտելիգենտ երիտասարդութեան կենտրոնում տեղի ունեցող հա-

սարակական շարժումները, սահմանադրութեան խնդիրը և վերջապէս Թիֆլիզում Ներսիսեան դպրոցը և այդ դպրոցի շուրջը կատարվող եղելութիւնները չէին կարող, անկասկած, ցնցում չը պատճառել հայոց հասարակութեան ինտելիգենտ դասակարգին։

Այդ ցնցումը տրվեցաւ և ահա սկսվեց լիսունական թուականների վերջերին մտաւոր մի շարժում։ Երևան էր եկել Աբովեան. Ռափայէլ Պատկանեան գրական ասպարէզ իջաւ. Հորիզոնի վրա երևեց Միքայէլ Նալբանդեանցը, ապա շուտով երևեցան Սմբատ Շահազիզեան, Գէորգեան, Գէորգէ Պատկանեան և ուրիշները իրանց բանաստեղծական գրուածքներով։ 1858 թուին պրոֆեսոր Նագարեան Մոսկվայում հիմնեց «Հիւսիսափայլ» ամսագիրը։ Նոյն 1858 թուին Թիֆլիզում սկսվեց հրատարակվել «Մեղու Հայաստանի» լրագիրը՝ խմբագրութեամբ Ստեփան քահանայ Մանդինեանի և հրատարակութեամբ Հ. Էնֆիաճեանի։ 1857 թուին «Արծիւ Վասպուրականի» մէջ տպվեց Յակոբ Մելիք-Յակոբեանի (Րաֆֆի) առաջին բանաստեղծութիւնը «Հայրենասիրի ոգը» վերնագրով, որ շարունակելով գրել նոյն ամսագրի մէջ 1858 թուից, «Հիւսիսափայլի» մէջ տպագրեց «Աղթամարայ վանքը» վերնագրով գրուածքը թիւրքահայերի կեանքից։

1859-ին հայր Մսեր Մսերեանը սկսեց հրատարակել «Ծրագաղ» ամսագիրը գրաբար լեզուով, իսկ 1880 թուին Մարկոս Աղաբէգեանի խմբագրութեամբ սկսեց լոյս տեսնել «Կռունկ» ամսագիրը։ Նոյն 1860 թուականին գիտնական Գաբրիէլ Այվազովսկու խմբագրութեամբ սկսվում է հրատարակվել Թէոդոսիայում «Մասեաց աղաւնի» ամսագիրը, որը տեղափոխվել էր այդտեղ Պարիզից։

Սակայն այդ հրատարակութիւնների մեծ մասը երկար կեանք չունեցաւ։ «Ծրագաղը» համարեա երեք տարի գոյութիւն ունեցաւ, «Մասեաց Աղաւնին» վեց տարուց աւելի ապ-

բել չը կարողացաւ, «Կռունկը» դադարեց 1864 թուին, «Մեղու Հայաստանի» մահամերձ դրութեան հասած լինելով չը կարողացաւ մնալ նախկին խմբագրի ձեռքում և 1863-ին անցաւ Մանդինեան քահանայի ձեռքից Պետրոս Սիմէօնեանցի ձեռքը։

60-ական թուականների վերջերին այդ լրագիրներից շարունակվում էին հրատարակվել «Մեղու Հայաստանին»՝ Պետրոս Սիմէօնեանցի խմբագրութեամբ. 1865-ին «Կռունկը» նորից սկսեց հրատարակվել՝ բայց ոչ թէ Մարկոս Աղաբէգեանի, այլ համալսարանական Ստեփաննոս Ստեփանէի ձեռքով։ Բացի դոցանից երևացին նոր հրատարակութիւններ, ինչպէս են, «Համբաւաբերը» (Մոսկվայում), «Հիւսիսը» (Պետերբուրգում) և վերջապէս Թիֆլիզում «Վաճառական» շաբաթաթերթը՝ խմբագրութեամբ Գէորգ Տէր-Աղէքսանդրեանի և գլխաւոր աշխատակցութեամբ Աղէքսանդր Երիցեանի. «Գարուն» ամսագիրը, որ հրատարակեց «Մեղուի» նախկին խմբագիր Տէր-Ստեփան Մանդինեանը և Էջմիածնում Գէորգ IV-ի օրով՝ «Արարատ» պաշտօնական ամսագիրը։

Տարաբաղդաբար այդ հրատարակութիւնները, մեծ մասամբ, ինչպէս երևում է նոյն իսկ վերև բերած տարեթուերից, երկար գոյութիւն չունեցան և որ ամենագլխաւորն է ոչ մի հետք չը թողեցին հայոց մտաւոր շարժման պատմութեան մէջ։ Դոցանից շատերը միմիայն լրագրութեան պատմութեան համար լոկ անուններ թողեցին։ Թերթելով այդ ժամանակուայ հրատարակութիւնները և ուշադրութեամբ ուսումնասիրելով նրանց բովանդակութիւնը, ուսումնասիրողը ամենից առաջ այն եզրակացութեան է գալիս, որ դոցա ղեկավարները ոչ մի որոշ ծրագիր և ոչ էլ մի որոշ նպատակ չեն ունեցել իրանց հրատարակութիւններին ձեռնարկելիս։

Չը կային խմբագրութիւններ, այս բառի լայն նշանակութեամբ. կային խմբագիր և նրա մի քանի անձնական բարեկամ-

ները, որոնք և միմեանց շողոքորթում էին թերթի մէջ, հայ-հոյելով իրանց անձնական թշնամիներին[1]։

Այդ անգոյն և անշնորհք գրողները կարծէք չէին լիշում, որ «ժողովրդի» համար պէտք է գրեն, նրա համար աշխատեն։ Ամեն մարդ գրում էր այն, ինչ որ իր սիրտը տալիս էր. ծակ փիլիսոփայութիւններ, դատարկ բանաստեղծութիւններ, անհասկանալի աստուածաբանական խորհրդածութիւններ և շատ շատ մի քանի անեկդոտներ։ Չը կար քննադատութիւն, չը կար կեանքի երևոյթների ուսումնասիրութիւն։

Այն ժամանակվայ այդ հրատարակութիւնների յատկանիշներից մինն էլ էր, շողոքորթել հասարակութիւնը և նրա ազդեցիկ անդամներին։ Դոցա էջերում միշտ կարելի էր կարդալ՝ «իմաստուն ընթերցողը, ազնիւ կարդացողը, ազգասէր հասարակութիւնը»։ Իսկ թէ որ աստիճանի էր հասնում շողոքորթութիւնը այդ հրատարակութիւնների մէջ դէպի հարուստ դասակարգը, նոյն իսկ այն դէպքում, երբ այդ հարուստը իր

---

1. Օրինակ. «Մեղուի» և «Հայկական աշխարհի» մէջ անձնական բանակռիւը չափազանցութեան էր հասցրած։ «Մեղուն» սանձարձակ կերպով անվայել և շատ անվայել ակնարկութիւններ էր անում իր հակառակորդ լրագրի խմբագրի—Ստեփանէի անձի դէմ։ Հարցեր չը կային մէջտեղ, այլ լոկ հայհոյանք։ «Հայկական աշխարհն» էլ 1867 թուի համարներից մէկում հետևեալ կերպով է պատասխանում «Մեղուի» հայհոյանքներին. «Սիմէոնեան + սրա հին և նոր կարծիքներ + ք. Մ... + բթ. Մ... + բժ. Տէր-Գ... + ստախօս և խաւարապաշտ Մեղ. Հ-ի + բոլոր ընկերութիւն + սոցա բոլոր անարգութիւն = 0։» Նոյն «Հայկական աշխարհը» հաղորդելով «Վաճառական» լրագրի մահը 1867 թուին, հետևեալ կերպի սրամտութիւն է անում։ «Մեղու Հայաստանի լրագրի վերջին մաղթանքը «Վաճառական» լրագրի վրայ սա էր. „Ի սորին սանդարամետս ի բնակարանս խարդախ մարդոց, ուր Գարուն և Երևակ կան բթացեալք ազուսակերպ, ի գժոխս սադայէլեան յիմարացեալք արժանապէս, ողորմեսցի որ ողորմի լրագրացս հանգուցելոց. լրագրացս հանգուցելոց եղիցին հանգիստ և ողորմութիւն և խմբագրողացս մեղաւորաց շնորհեսցի թողութիւն յանցանաց"։

հազարներից մի քանի կոպէկ կը շպրտէր մի բանի համար, այդ արդէն անհաւատալի ծայրահեղութեան էր հասնում։ Դիցուք մէկը մի 50 բուբլի էր նուիրում մի մեռածի համար քէլէխ տալու և ահա գրում էին՝ «Պարծանք քեզ, Հայաստան, որ ունիս զաւակներ, որոնք իրանց ազգասիրութեամբ փառաւորում են քո մոռացված և փոշոտված անունը». կամ «ազնիւ, մարդասէր և ազգասէր հայկազնը նուիրեց եկեղեցուն 25 բուբլի արծաթ, կեցցէ նա, նրա անունը անջնջելի կը մնայ հայ ազգի պատմութեան մէջ»...

Եւ այդպիսի դրութեան մէջ լինելով, այդ հրատարակութիւնները ոչ թէ միայն չէին առաջնորդում հասարակաց կարծիքը, այլ նոյն իսկ չէին համարձակվում մտածելու, թէ մամուլը կարող է այդ բարձրութեան հասնել։

Այդ ընդհանուր և անսփոփիչ դրութեան մէջ, վերև բերած հրատարակութիւններից շատ քչերն էին բացառութիւն կազմում։ Նոյն իսկ ամենից երկար կեանք ունեցող «Մեղու Հայաստանի» լրագիրն էլ կարծէք չէր ցանկանում բացառութիւն կազմել։ Սկսվելով 1858 թուականից և 1863-ին Մանդինեան քահանայի ձեռքից անցնելով Սիմէօնեանցի ձեռքը, «Մեղու Հայաստանին» մի կերպով գոյութիւն ունեցաւ մինչև 1871 թուականը և այդ թուականի վերջին՝ դադարեց։ «Մշակի» երևալուց մի քանի ամիս յետոյ «Մեղուն» նորից երևաց, բայց ուրիշ կերպարանքով։ Այդ մասին յետոյ։

Բայց «Մշակից» առաջ այդ լրագիրը հետևում էր իր եղբայրակիցների աննախանձելի դրութեան և եթէ մի փոքր աւելի ազդեցիկ էր, այդ էլ միմիայն խմբագրի անձնական կապերի շնորհով։ Նա հրատարակվում էր այժմեան «Արձագանքի» դիրքով. արտաքին տեսքը վերին աստիճանի տգեղ։ Առաջին բաժինը, որ «քաղաքական» վերնագիրն էր կրում, լիքն էր Եւրոպական լրագիրներից թարգմանած, երկար և ձիգ անհամ քաղաքական յօդուածներով, որ անկասկած ոչ ոք չէր կարդում։ Ապա գալիս էր «բանասիրական» բաժինը, որ միշտ

միշտ խեղդված էր մնում օտար գրականութեան քունջ ու սուճախներից հանած՝ անմիտ վէպերի թարգմանութիւնով, իսկ դրանից յետոյ գալիս էր նշանաւոր «ազգային» բաժինը, որտեղ մի «ազգասէր» երեցփոխ հայհո�ում էր միւս «ազգացեց» երեցփոխին, կամ մի վարժապետ շողոքորթում էր միւս վարժապետի ազգասիրական եռանդը, և կամ տպագրվում էին զանազան դպրոցների կամ եկեղեցիների հաշիւներ և կամ զանազան «յայտնի ազգայիններին» այս և այնտեղ խօսած ճառերը։ Աւելացրէք դոցա վրա և այն մշտական քարոզը, որ իբրև ինքնուրոյն յօդուածներ տպվում էին, թէ «մեր խեղճ ազգը լուսաւորութիւն չունի, մեր ազգը պէտք է լուսաւորվի—այն ժամանակ ընդհանուր և բաւական ճիշտ գաղափար ստացած կը լինիք վաթսունական թուականների վերջերի «Մեղուի» և առ հասարակ հայոց մամուլի օրգանների մեծամասնութեան վերաբերմամբ։

Մամուլի այդ աննախանձելի դրութիւնից բարձրանալ չը կարողացաւ նոյն իսկ Գաբրիէլ Այվազովսկու նման հեղինակաւոր և գիտնական մարդու ձեռքով խմբագրվող «Մասեաց աղաւնին», իր ոչ-երկարատև գոյութեան ընթացքում։

Մարկոս Աղաբէգեանի հիմնած «Կռունկ» հայոց աշխարհի ամսագիրը, պէտք է ասել, համեմատաբար աւելի բարձր դիրք ունէր։ Այդ ամսագիրը իր կարճատև գոյութեան ընթացքում փորձ փորձեց ուսումնասիրել, արծարծել ժամանակակից մի երկու հարցեր և յատկապէս դպրոցական կազմակերպութեան և եկեղեցական հարցերը, որոնք «Կռունկի» միակողմանի կարծիքով՝ հայ ազգի կեանքի ամենաէական հարցերն էին։ «Կռունկը» համեմատելով իր ժամանակի վերին աստիճանի պահպանողական և նոյն իսկ յետադէմ օրգանների հետ, մինչև իսկ բաւական ազատամիտ էր համարվում, քանի որ այն ժամանակ վերին աստիճանի ազատամտութիւն էր, դէցուք, կռուել զանազան նախապաշարմունքների դէմ, կամ պահանջել որ և է փոքրիկ կերպարանափոխութիւն դպրոցական

կամ եկեղեցական հարցերի մէջ։ Այդ ամսագրի մէջ տպագրվում էին շնորհքով գրուածքներ, որոնք Մարկոս Աղաբէգեանի, Մամուրեանի, Գ. Մուրադեանի և Աշտարակեցի Պերճ Պռոշ'եանի գրչի ծնունդ էին։ Բայց և այնպէս այդ ամսագիրը, որի մէջ լաւ գրուածքների կողքին յաճախ կարելի էր պատահել և ողորմելի բառախաղութիւններ, չը կարողացաւ ներգործել բուն ժողովրդի վրա, մուտք չը գտաւ ժողովրդի մէջ, չը կարողացաւ պատրաստել այդ ժողովրդի մէջ ընթերցողների մեծ շրջան, այդ պատճառով էլ չըկարողացաւ երկար ապրել և մեռնելով չը կարողացաւ մի հետք թողնել բուն ժողովրդի մէջ։

«Կռունկի» անուան հետ կապված էին միայն մի խումբ ինտելիգենտ մարդիկ, որոնք իսկապէս և կազմում էին «Կռունկը» և ամսագրի դադարումից յետոյ էլ այդ մարդիկ յայտնի էին իբրև «Կռունկի» ներկայացուցիչներ։ «Կռունկը» ունէր մի խումբ ջերմ համակրողներ. քանի միասին էին այդ խմբին պատկանողները, կար «Կռունկը». հէնց որ դոքա բաժանվեցին, մէջտեղից վերացաւ ինքը «Կռունկը»։ Այդ պատճառով ահա «Կռունկը» թէև բարձր իր ժամանակի շատ հրատարակութիւններից, բայց մի շկոլա չը կազմեց։

«Կռունկի» վրա կանգ առնելով, անկարելի է չը խօսել «Հայկական աշխարհի» մասին, որը իր յատուկ առանձնայատկութիւնները ունէր։ 1865-ին «Կռունկը» մի առ ժամանակեայ դադարումից յետոյ վերականգնվեց, բայց ոչ թէ Մարկոս Աղաբէգեանի, այլ համալսարանական Ստեփաննոս Ստեփանէի (այժմ Խորէն ծ. վ. Ստեփանէ) ձեռքով։ Ստեփանէն նորութիւններ սիրող մարդ էր։ Նա «Կռունկ հայոց աշխարհի» անուան չը հաւանեց, փոխեց և շինեց «Կռունկ հայկական աշխարհի». ապա գուցէ «Կռունկին» միանգամայն հրաժարական տալու համար, դէն գցեց «Կռունկը» և պահեց միմիայն «Հայկական աշխարհ»։ Այդպիսով «Կռունկը» դարձաւ «Հայկական աշխարհ»։

«Հայկական աշխարհը» կատաղի թշնամի էր այն ժամանակուայ «խաւարապաշտ» լրագիրներին, մանաւանդ «Մեղուին»։

Օրինակ, նա այնքան վատ կարծիք ունէր «Մեղուի» մասին, որ եթէ «Մեղուի» մէջ մի մարդու զովում էին, դա արդէն «Հայկական աշխարհին» հիմք էր տալիս ասելու հրապարակով, որ ուրեմն այդ մարդը անպիտան մարդ է։ Ստեփանէի օրգանը ընդհանրապէս կրակոտ բնաւորութիւն ունէր. նրա մէջ շատ անգամ յօդուածները վերջանում էին այս խօսքերով՝ «դէպի յառաջ, դէպի յառաջ»։ Նրա էջերում երբեմն երբեմն կարելի էր հանդիպել վերին աստիճանի ազատ և համարձակ յօդուածների։ Խմբագիրը մի առանձին ձգտում ունէր մի որևիցէ նորութիւն մտցնելու, նոյն իսկ մի տարօրինակ բան ասելու, միայն թէ նոր բան լինի։ Ահա այդ տեսակէտից գրգված, գուցէ, նա լեզուի ուղղագրութեան մէջ մտցրեց նոր ձևեր։ Նա գրում էր. ե կ ա վ (եկաւ) յետո (յետոյ) չը կա (չկայ) թիվ (թիւ) Աստված (Աստուած), օվ (ով), հավատ (հաւատ), լուսավոր (լուսաւոր) և այլն։ Տարաբաղդաբար, այդ ամսագիրը գուրկ էր հարցերը սիստեմատիկաբար, լրջօրէն մշակելու յատկութիւններից։ Նա ոչ մի խնդրի ծանր չէր կպչում և ոչ մի ծանր խնդրի ձեռք զարնել չէր ուզում, ու խոյս էր տալիս հիմնական հարցերի արծարծելուց։

«Հայկական աշխարհ» ամսագիրը հրատարակվում էր նոյն իսկ շատ անկանոն կերպով և ճանապարհորդում էր խմբագրի հետ մի քաղաքից միւս քաղաք, նայելով թէ խմբագիրը, մանաւանդ հոգևորական եղած ժամանակ, պաշտօնով ուր էր գընում. այնպէս որ «Հայկական աշխարհը» մի ժամանակ Շուշի էր պաշտպանում մեռելների դիակները այրելու հարցը, միւս անգամ Գանձակից էր խօսում Եւրոպական հանճարների մասին, և առանց ծածկելու արդարացնում էր իրան, տպագրելով իր օրգանի ճակատին՝ „Quod possum facio, faciant meliora potentes“։

Այս բոլորի հետ միասին «Հայկական աշխարհը» կարողացաւ իր գոյութեան ընթացքում մի փոքր աղմուկ հանել և հասարակութեանը տալ մի շարք լաւ յօդուածներ։

Հայոց մամուլի անցեալի կարճ տեսութիւնը անելով, անկարելի է կանգ չառնել մի օրգանի վրա, որը առանձին ներգործութիւն ունեցաւ հայոց մտաւոր շարժման մէջ։ Դա Ստեփաննոս Նազարեանի «Հիւսիսափայլն» էր, որ սկսելով հրատարակվել 1858 թվին, և դադարելով 1864 թվին, իր 6 տարուայ գոյութեամբ կարողացաւ մի անուն թողնել հայոց մտաւոր զարգացման պատմութեան մէջ և ճանապարհ բանալ ապագայ այն տեսակ գործիչների համար, որոնք պէտք է հանդիսանային իրրև բէ ֆ օ ր մ ա տ օ ր ն ե ր մեր կեանքի մէջ։

«Հիւսիսափայլից» առաջ ռուսահայերի մէջ չը կար ոչ մի ամսագիր։ Արտասահմանի մէջ մինչև 1858 թվականը հրատարակվել և հրատարակվում էին մի քանի ամսագրական հանդէսներ. օրինակ, Պարիզում «Մասեաց աղաւնի», Վիէննայում «Եւրոպա», Վենեցիայում «Բազմավէպը», Կ.-Պոլսում «Բուրաստանը», «Բանասէրը», Զմիւռնայում «Նեռեմարանը» և այլն. —բայց դոքա բոլորն էլ իրանց ուղղութեամբ և բովանդակութիւնով սար ու ձոր հեռու էին «Հիւսիսափայլից», և վերջինս հանդէս գալով, ոչ թէ չէ օգտվում իր այդ նախորդների, իբր ամսագիրների, գործունէութիւնից, այլ ուղղակի անտես առնելով դոցա բռնած ընթացքը, սկսում է ընթանալ նոր ճանապարհով։

Պատիւ է բերում հայ հասարակութեան, որ նա արդէն Նազարեանին դասել է իր ամենամեծ գործիչների շարքում և նայում է նրա վրա, իբրև առաջադէմ մտքերի եռանդուն քարոզողի վրա, որը իր ժամանակակից գործիչներից շատերից զըլխով բարձր կանգնած՝ սկսում է այնպիսի մտքեր քարոզել, որոնք կենսական նշանակութիւն ունէին հայ մտքի վերածնութեան համար և որոնց համար նա ժամանակակից խաւար շրջաններից միայն հալածանք ստացաւ։ Իւր գործունէութիւնով և «Հիւսիսափայլով», Նալբանդեանցի հետ միասին՝ Նազարեանը ցնցեց այն ժամանակուայ հասարակութիւնը և ստիպեց ուշք դարձնել հայերէն լեզուով հրատարակվող ամսագրի

վրա, նոր հոսանք մտցրեց հայոց կեանքի մէջ, վերանորոգութեան հիմք դրեց և հեռանալով ասպարիզից, իր յետևից թողեց մի կարմիր և փայլուն գիծ...

Մենք երկար կանգ չենք առնի Նազարեանի «Հիւսիսափայլի» և գործունէութեան վրա։ Այդ գործունէութիւնը բաւական պարզված է, չը նայած, որ Նազարեանի մահից յետոյ միայն երկչոտ—քննադատները փորձ փորձեցին ստուեր գցել այդ գործունէութեան վրա։ Այսքան միայն կասենք։ Մի մեռած, արդէն պատմութեան գիրկը անցած գրչի գործունէութիւնը քննելու համար, չը պէտք է խ զ բ զ ե լ նրա այս կամ այն նախադասութիւնները, նրա այս կամ այն բառը, նրա գրածի այս կամ այն կէտը։ Գործել մի այնպիսի ժամանակ, ինչպէս էր վաթսունական թուականները հայերի մէջ, վերանորոգելու ձգտում ունեցող գրողը այնպիսի վատ հանգամանքներով էր շրջապատված, որ կարող էր սխալներ գործել, կարող էր բոպէական ծանր ապաւորութիւնների տակ թողլ տալ իր գրչին շեղումներ, ինչպէս Նազարեանը արել է երբեմն երբեմն։ Պէտք է մաղել այդ գործունէութիւնը. մէկ կողմ թողնել թ ե փ ը և տեսնել թէ տակը մնացող զ ո ւ տ հատիկները որքան են։

Եթէ մաղենք «Հիւսիսափայլը», եթէ զտենք Նազարեանին, այն ժամանակ մեր առջև, պատմութեան առջև և հասարակութեան գիտակցութեան մէջ մնում են մի շարք նոր գաղափարներ, վերածնութեան ձգտում, մի կռիւ խաւարի դէմ. և այս բոլորը Նազարեանի գործունէութեան անջնջելի արդիւնքն է, որ կենդանի է մեր այժմեան իրական կեանքի մէջ։

Նազարեանը գերեզման մտաւ, «Հիւսիսափայլ» ամսագրի համարները արխիւ մտան,—բայց նրա ոգաշտպանած մտքերը, նրա ուրանած ուղղութիւնը կենդանի մնացին և շարունակութիւն ունեցան,—ահա մեծ մարդոց յատուկ գործունէութեան արդիւնքը։

Եթէ Նազարեանը մի մեծ պակասութիւն ունէր, իբրև վերանորոգիչ-գործող, այն էր, որ նա վերին աստիճանի շուտ յուսահատվող, շուտ ընկճվող և հիասթափվող մարդ էր։ Եւ ճշ-

մարիա. ժամանակակիցների կողմից նրա դէմ լարած ինտրիգաները նրան յուսահատեցրին՝ «Հիւսիսափայլը» ապանեցին։ Նազարեանը մինչև անգամ մի առ ժամանակ հիասթափման մէջ ընկաւ... Միայն, «Հիւսիսափայլի» դադարումից տարիներ լեռոյ, նա նորից ուզեց գրական ասպարէզ իջնել, մտադրվեց հրատարակել «Լապտեր» անունով մի ամսագիր, բայց չը աջողվեց։

Նազարեանը, որ ծնվել էր 1812 թվին Թեֆլիզում և իր ուսումը առել էր Դորպատի համալսարանում, մեռաւ 1879 թվի ապրելի 26-ին։

Նրա մահվան առիթով Գրիգոր Արծրունին մի յոդուածում, ի միջի այլոց, հետևեալ հետաքրքրական կարծիքը յայտնեց.

«Իր բարձրագոյն կրթութիւնը Դորպատի համալսարանում ստանալով, ուրեմն բոլորովին գերմանական ոգով կրթվելով, նա մացրեց իր գիտնական և ազգային գործունէութեան մէջ գերմանացուն յատուկ ծանր, հիմնաւոր, կրիտիկական ոգին։

Թէ ռուս, թէ եւրոպական գիտնականների շրջանին Նազարեանց յայտնի է որպէս լեզուագէտ։ Նա ունի մի քանի ուսումնական գրուածներ։ Նա պրոֆէսոր էր Կազանի համալսարանում, յետոյ Մոսկվայի Լազարեան Հեմարանում։

Բայց հայերին նա յայտնի է, որպէս «Հիւսիսափայլ» ամսագրի խմբագիր և հրատարակիչ։ Այդ ամսագիրը սկսեց հրատարակվել 1858 թվին Մոսկվայում։ Մի տարուց աւելի, Միքայէլ Նալբանդեանցի գործակցութեամբ, «Հիւսիսափայլը», թէև ընթերցողների վրայ շրջանից էր կարդացվում, կարելի է ասել, լեզուաբանութիւն գործեց ռուսահայոց նոր գրականութեան մէջ, թէ նոր, կենդանի աշխարհաբար լեզուն գրական գործածութեան մէջ մացնելով և թէ կրիտիկական հայեացք գցելով մեր ազգային մի քանի հնացած հիմնարկութիւնների և գաղափարների վրայ։ Դորանով բացատրվում է այն կատաղի թշնամութիւնը, որ լարուցեց իր դէմ Նազարեանց իր գործունէութեամբ։ Հոգևորականները և մեր լեռագէտ «Մեղու Հայաստանի» լրագիրը նրա ամենանանհաշտ և ամենակատաղի թշնամիներն էին։

Արդէն 1864 թուին զանազան հանգամանքների շնորհով «Հիւսիսափայլը» դադարեց, և էլ երբէք չը վերականգնեցաւ։

Եօթանասուն թուականներում Նազարեանց հրաւիրվեցաւ Թիֆլիզ որպէս Ներսիսեան հոգևոր-ազգային դպրոցի տեսուչ, բայց երկար չը կարողացաւ դիմանալ Թիֆլիզի հայ ինտելիգենցիայի խեղդող շրջանի մէջ...

Մոսկվա վերադարձած, նա կրկին ընդունեց Լազարեան Հեմարանի արևելեան լեզուների պրոֆէսորի պաշտօնը, որի մէջ մնաց մինչև մահը։

Կարող ենք ասել որ Նազարեանց, ինչքան էլ մեծ գործ կատարեց հայ գրականութեան համար իր «Հիւսիսափայլ» ամսագիրը հրատարակելով, բայց նա աւելի գիտնական մարդ էր, քան թէ ժողովրդական գործող, քան թէ պուբլիցիստ։ Դորան ամենաչաւ ապացոյց այն կարող է լինել, որ զրուելով հասարակական գործունէութեան մէջ պատահող դժուարութիւններից, Նազարեանց մինչև իր կեանքի վերջը չը կարողացաւ շարունակել պուբլիցիստական գործունեութիւնը։ Անհերքելի է որ նա յուսահատվեց, ընկճվեց հալածանքների, ինտրիգանների և թշնամութեան հարուածի տակ։

Իսկ մամուլի մէջ գործողի յատկութիւնն է, ինչքան էլ դժուարութիւններ, արգելքներ լինէին,—երբէք չը թուլանալ, մինչև որ ֆիզիկական ոյժերը չը սպառվեն, երբէք չենթարկվել, չը խոնարհվել անաջող հանգամանքների առջև...

Եւ ահա այդ պատճառով յայտնվեցաւ մի զարմանալի անտարբերութիւն։ Գործողը, կենդանի մարդը, իր հասարակական ասպարէզը թողած, մոռացվում է ամենքից... Նա կենդանի է մնում երկար տարիներ, բայց ամենքը նրան մոռացել են...

Եւ միայն երբ Նազարեանցի մահվան լուրը կը տարածվի հայերի մէջ, թէ ռուսաստանցի և թէ թիւրքիացի հայերը կը յիշեն նրան, կը հասկանան որ Նազարեանց մեծ կուռողներից մէկն էր, որ նա հայոց ժամանակակից գրական ասպարիզում վերանորոգիչ էր և յեղափոխիչ։

Այո, մտքով, ուղղութեամբ, գիտնական զարգացմամբ, տակտութեամբ նա վերանորոգիչ էր, բայց իր համեստ, մեղմ, փափուկ բնաւորութիւնը հակառակում էր իր գործունէութեան...

Կուսոդի համար, վերանորոգիչ, յեղափոխիչ լինել ցանկացողի համար հարկաւոր է ունենալ աւելի զօրեղ, աւելի համարձակ, աւելի յանդուգն բնաւորութիւն, որպէս զի այդ տեսակ գործողը կարողանայ դիմանալ կեանքի ամեն տեսակ արգելքներին, մարդկանց ամեն տեսակ կեղտոտութիւններին և իր հասարակական գործունէութեան կէս ճանապարհի վրա չը կանգնի, չիջնի իր ասպարիզից՝ դեռ կենդանի ժամանակ, մահից շատ տարիներ առաջ, մեռած չը համարվի այն ազգի մէջ, որի մէջ գործել է, որի հնացած գաղափարների դէմ երկար ժամանակ կռուել է։

Կեանքի ժամանակ իջնել ասպարիզից,—նշանակում է իր թուլութիւնը խոստովանել, նշանակում է իրան դատապարտել հասարակական մահվան, նշանակում է իրան յաղթված խոստովանել...

Իսկապէս Ստեփաննոս Նազարեանց վախճանվել է հայերի համար ոչ թէ 1879 թուին, այլ արդէն 1864 թուին...

Թող հայոց հասարակութիւնը ինքն իրան մեղադրի, որ իր ձեռքերով սպանում է իր սեփական գործողներին, և իր անտարբերութեամբ և թշնամութեամբ իր գործողների ամենալաւերին, դեռ նրանց կենդանութեան ժամանակ դատապարտում է հասարակական մահվան։ («Մշակ» 1879 № 62)

Մամուլի օրգանների մեր այս համառօտ տեսութիւնը վերջացրած կը լինինք, եթէ մի քանի խօսք էլ նուիրենք «Արարատ» ամսագրին, Էջմիածնի պաշտօնական հրատարակութեան, որ հիմնվեց 1868 թուին։ Միանգամայն համակրելի է Գէորգ IV-ի ցանկութիւնը՝ ունենալ պաշտօնական օրգան հայ եկեղեցական վարչական կենտրոնի՝ Էջմիածնի մէջ, որը միևնոյն ժամանակ բարոյական նիւթական պիտի մատակարարէր իր պարտադիր ընթերցողներին՝ հոգևորականութեան. իսկ այժմ հայոց վարժապետներին և վարժուհիներին ևս։ Դրժբաղդաբար «Արարատը» շատ վատ իրագործեց և շատ վատ է իրագործում իր հիմնադրի նախագծած նպատակը։ Հոգևորական խմբագրից երբեմն աշխարհական խմբագրի ձեռքը ան-

ցնելով, երբեմն էլ աշխարհական մարդու ձեռքից հոգևորականի ձեռք անցնելով՝ այդ ամսագիրը իր համար մի ճանապարհ չընտրեց.—ամսագրի ինչպէս խմբագրվելը երևում է, ի միջի այլոց, նրանից, որ նրա էջերում «Յայտմաւուրքի» բացատրութիւնների հետ տպագրվել են յոդուածներ նոյն իսկ Դարվինի թեորիայի մասին. իսկ խմբագրութեան գիտութիւնը այնքան մեծ էր լինում, որ ամսագրի մէջ լոյս էին տեսնում այսպիսի կուրեօզներ. «o tempora, o mores» (օ տեմպօրա, օ մորես,) լատինական ասացուածքը, կարծելով թէ ռուերէն է, տպագրում էին «o хетроча, o точес» (օ խետրօչա, օ տօչէս)։ Սա անեկդոտ չէ... Այդ ամսագրի ամենաէական լատկութիւնն էլ այն է, որ ոչ կտրվում և ոչ էլ կարդացվում է։

Յիշատակելով մինչև «Մշակի» լոյս տեսնելը ռուսահայերի մէջ եղած պարբերական հրատարակութիւնները, և Հարևանցի կերպով կանգ առնելով նոցանից գլխաւորների վրա.—հարկաւոր ենք համարում էլի մի քանի գծեր դուրս բերել այդ մամուլի դրութիւնից։

Հայոց լրագրների բաժանորդների թիւը ընդհանրապէս այն ժամանակ 500-ի հազիւ էր հասնում, թէև հրատարակիչները դիմում էին զանազան արհեստական միջոցների, և գլխաւորապէս ամեն մի հայի «ազգասիրութեան». «ազգասիրաբար» ստանալով այս կամ այն լրագիրը կամ ամսագիրը, բաժանորդների կէսը շատ անգամ չէին կարդում այդ հրատարակութիւնները։ Նոյն իսկ այժմ, թէ Թիֆլիզում և թէ գաւառներում կարելի է տեսնել շատ ընտանիքներում այդ հրատարակութիւնների ձեռք չը տուած, չը կտրտած համարները։ Բացի դրանից այդ հրատարակութիւնները տարածվում էին հասարակութեան մի շատ նեղ շրջանի մէջ միայն,—դոցա ընթերցողները էին գլխաւորապէս երէցփոխներ, վարժապետներ, մի քանի գրագէտ հարուստ վաճառականներ, «հայկական գործերով» իբր թէ հետաքրքրվող մի խումբ մարդիկ և վերջապէս նոքա, որոնք կամ իրանք գրում էին և կամ որոնց մասին գրվում էին այդ լրագրներում։

Մամուլի այդպիսի սահմանափակ դրութեան և ներգործական դեր չը կատարելու գլխաւոր պատճառը, ի հարկէ, ինքը մամուլն էր, որ չէր կարողանում խփել ժամանակակից հասարակութեան զգայուն կողմերին, որ չէր կարողանում գէթ նորութիւններ հաղորդել իր ընթերցողներին։ Եւ որտեղից հաղորդէին, քանի որ Թիֆլիզում հրատարակվող թերթերը ոչ գաւառների հետ կապ ունէին, ոչ հարևան թիւրքաց Հայաստանից և պարսկահայերից տեղեկութիւն ունէին, և ոչ էլ վերջապէս Եւրոպական կեանքից շնորհքով տեղեկութիւններ հաղորդելու բարձրութեան էին հասել։

Լրագիրների և ամսագիրների խմբագիրները իրանք անկախ մարդիկ չէին։ Նոքա հասարակութեան մէջ մի առանձին դիրք չունէին։ Դոցանից շատերը այս և այն հարուստի կամ այս և այն պաշտօնեայի հովանաւորութեան ներքոյ էին լինում, և վերջինները հէնց իրանք հեգնութեամբ էին նայում խմբագիրների կոչման վրա։ Սովորաբար խմբագիրներ էին դառնում այն ժամանակ, երբ ուրիշ, աւելի անկախ ասպարէզներում աջողութիւն չէին գտնում։ Խմբագիրները չքաւոր մարդիկ էին։ Ապրուստ ունենալու համար դոցանից շատերը պարապում էին դասատուութեամբ կամ մի ուրիշ բանով։ Չէր կարելի, դիցուք իմանալ, թէ որն է «Մեղուի», «Հայկական աշխարհի», «Կռունկի», կամ «Վաճառականի» խմբագրատունը, որովհետև խմբագրատուն չը կար։ Չը կար և խմբագրութիւն։ Դիցուք «ազգասէր» բաժանորդներից մինը ուզում էր, այն էլ տարվայ վերջին, թերթի բաժանորդագինը վճարել։ Նա պարտաւորութիւն չէր համարում գնալ խմբագրի բնակարանը և վճարել լրագրի գինը, ինչպէս կերթար խանութ և կը վճարէր իր գնած շորի գինը կամ կօշիկների գինը։ Յանկարծ փողոցում պատահելով խմբագրին կը կանչէր. «Պետրոս, Մարկոս, մոռացել էի... վերցրու գազէթի փողը», և Պետրոսը կամ Մարկոսը կը վերցնէին փողը (որին խիստ կարօտ էին) շողոքորթութեամբ աւելացնելով՝ «Էհ, ի՞նչ էք շտա-

պում, միևնոյն չէ... »։ Բայց այդ բոլորից տխրալին այն էր, որ իրանք խմբագիրները և գրողները, ընդհանրապէս, հաւատ չունէին դէպի իրանց գործը, չէին համոզված որ իրանք մի բարձր կոչում ունին, որ կարող են ազդել մտքի և առաջադիմութեան գործի վրա, և դրանից ահա առաջ էր գալիս այն, որ մամուլի մէջ նկատվում էր մի թերահաւատութիւն դէպի իր սեփական կոչումը և ոյժը։ Շատ անգամ առիթ ենք ունեցել այն ժամանակվայ հայ գրողներից և խմբագիրներից հետևեալ տխրալի կարծիքը լսելու.—«Էհ, ինչ մամուլ, ինչ լրագիր. այն ժամանակ խաղալիք էր մամուլը. ով էր կարդում, ով էր ականջ դնում»։ Մի խմբագիր մինչև անգամ ծիծաղելով ասում էր՝ ցոյց տալով իր ծոցաջրի վրա.—«Իմ ամբողջ խմբագրութիւնը այստեղ ունէի...»

Երբ գրողը ինքը ժպտում է իր գրչի արտադրութեան վրա, երբ մամուլի ղեկավարները իրանք չեն հաւատում իրանց գործին, և երբ վերջապէս ամբողջ գործի մէջ չկայ անխարդախ, ներքին հաւատ.—այն ժամանակ ի հարկէ այդպիսի մամուլը ընդունակ չի լինիլ հասարակութեան վրա ազդելու... Ոչ մի գրող չի կարող ընթերցողների մէջ հաւատ ծնեցընել, եթէ ինքը այդ հաւատը չունի. ոչ մի գրող չէ կարող ուրիշներին համոզել, եթէ ինքը համոզված չէ...

Նախ քան մամուլի մասին մեր եզրակացութիւնը դուրս բերելու, հարկաւոր ենք համարում, փակագծերի մէջ, մի քանի խօսք աւելացնելու։ Հայոց մամուլի 25 տարվայ տեսութիւն անելիս՝ ուսումնասիրողը, կեանքի լիակատար պատկերը ներկայացնելու համար, պէտք է կանգ առնի և ուրիշ կէտերի վրա։ Ցիսունական և վաթսունական թուականներին հայոց կեանքի մտաւոր շարժումները պարզելու համար հարկաւոր է կանգ առնել և երկրի քաղաքական հանգամանքների, և վարչական նոր կազմակերպութեան վրա, հարկաւոր է ցոյց տալ թէ ինչ գաղափարական հոսանք կար այն ժամանակի գործող ինտելիգէնտ դասակարգի մէջ, հարկաւոր է վերջապէս կանգ

առնել դպրոցական խնդիրների վրա, որոնք մանաւանդ վաթսունական թուականներին առանձին նշանակութիւն ստացան, երբ դպրոցական ասպարիզումն էին Պետրոս Շանշեան, Ստեփաննոս Պալասանեան և ուրիշները։

Բայց այդ բոլորը նախ՝ դուրս է մեր գրուածքի ծրագրից, և երկրորդ՝ մեզ շատ հեռու կը տանէր։ Մի հարեւանցի հայեացք գրականութեան վրա միայն կը գցենք։

Եթէ ասենք, որ մամուլից դուրս իսկապէս այն ժամանակ չը կար էլ հայոց գրականութիւն, չենք կարծում, որ սխալված լինենք, քանի որ փոքր ի շատէ շնորհքով աշխատութիւնները, և օրինաւոր թարգմանութիւնները, ընդհանրապէս տպագրվում էին պարբերական հրատարակութիւնների մէջ։ Բացառութիւններ շատ քիչ էին։ Գիտական գրքեր, թէ մասնագիտական և թէ ժողովրդացրած, չէին հրատարակվում։ Տարիներ կանցնէին և մի հայերէն օրինաւոր գիրք չէր լոս տեսնի, որ կարդացվէր, աղմուկ հանէր և մի փոքր յուզէր մտքերը։ Գրականութեան մէջ վիպագրութիւնն էր համարվում ամենից ծաղկածը, բայց նա էլ շատ դանդաղ քայլեր էր անում։ Արովեանը իր «Վէրք Հայաստանի» տաղանդաւոր գրուածքով հայոց ժողովրդական վիպագրութեան հիմքը դրեց, նա ցոյց տուեց կեանքի ուսումնասիրութեան մի նոր ճանապարհ, նա բաց արաւ մի նոր ասպարէզ, որը մինչև այն ժամանակ արհամարված էր,—վերջապէս նա հիմք դրեց մի նոր շկոլայի, նրանից յետոյ երևան եկան Պերճ Պռոշեան, Ղազարոս Աղայեան,—նրանից յետոյ շատ տարիներ անցան, բայց Արովեանի հիմնարկած շկոլայի հետևողները չը կարողացան դուրս գալ գիւղական շրջանից և թափանցել ժողովրդի կեանքի միւս ծալքերը։ Ահա թէ ինչ է ասում Բաֆֆին այդ մասին.

«Արովեանի հետևողները՝ Արովեանի անշնորհք աշակերտներ եղան։ Դրանց համար հայկական վէպ նշանակում էր այն՝ ինչ որ մ ի մ ի ա յ ն հային էր վերաբերում, առանց մասնաձ-

լու, որ հայը իր կեանքում չխլում է և օտար ազգերի հետ, որոնք նրա դրացիներն են, և որոնք նրա հետ միասին բաժանում են կեանքի մի և նոյն հանգամանքները։ Արովեանը իւր գրքերի մէջ տեղ տուեց օտարազգիներին, բայց նրա հետևողները ա զ գ ա ս ի ր ա ր ա ր մերժեցին նրանց։

Հայկական վէպ դրանց համար նշանակում էր, որ անպատճառ պէտք է ներկայ լինէր գիւղի տէր-տէրը, գիւղի տանուտէրը, գիւղի խալիֆան, և շատ-շատ՝ դրանց հետ աւելացնում էին մի հարստահարիչ չարչի կամ վաշխառու։ Պատկերը ամբողջացած էր համարվում, և մի և նոյն տիպարները, միմեանց առնելով, զանազան ձևով ծամծմում էին։

Դրանց համար հայի անցեալ, հայի պատմութիւն չը կար։ Դրանց համար չը կար և հայի ապագայ։ Դրանք ծանօթ էին այն գիւղի հետ միայն, որի մէջ ծնված էին, և որի սահմաններից դուրս մի այլ կեանք չէին ճանաչում։ Դրանց աշխարհայեցութեան թռիչքը իրանց գիւղի հօրիզոնից աւելի հեռու չէր անցնում։ Եւ եթէ պատահում էր, որ ոտքը դուրս էին դնում իրանց գիւղից, խակոյն մոլորվում էին, և խրվում էին յիմարութիւնների մէջ։ Երկար ժամանակ վիպագրութիւնը նոյն նեղ, միակողմանի շաւղով ընթանալով, նոյն շաւղի վրա մնաց և քարացաւ, առանց որ և է յառաջադիմութիւն գործելու։

Նրա ներկայացուցիչները մինչև այսօր ևս գոյութիւն ունեն, շարունակում են ապրել, ոչ նորոգվում են և ոչ փոխվում, այլ եգիպտական մումիաների նման՝ պահպանում են մի տեսակ մեռած կենդանութիւն»։

Գրականութեան մի ճիւղը, որ համեմատաբար, աւելի ծաղկեց և զարգացաւ, դա բ ա ն ա ս տ ե ղ ծ ա կ ա ն ճիւղն էր, որ ունեցաւ այնպիսի ներկայացուցիչներ՝ ինչպէս Նալբանդեան, Պատկանեան, Սմբատ Շահազիզեան, Դօդոխեան, Պէշիկթաշլեան, Բարխուդարեան և Դուրեան։

Ահա այդպիսի կերպարանք ունէր Հայոց մամուլը և գրականութիւնը, երբ վրա հասան 70-ական թուականները։

Արդ, ինչ հոդ էր պատրաստել այդ մամուլը «Մշակի» նման մի լրագրի համար, որը հանդէս գալով վճռել էր ն ե ր գ ո ր ծ ։ ։ կ ա ն դեր կատարել։ Մեր եզրակացութիւնը հետևեա-

լըն է։ Վերանորոգիչ լինել ցանկացող «Մշակի» համար մի նեղ ճանապարհ էր բացել «Հիւսիսափայլը» իր ուղղութեամբ։ Մի երկու ուրիշ հրատարակութիւններ, որոնց մէջ գլխաւորապէս «Կռունկը», պատրաստել էին ընթերցողների, թէև շատ փոքր, կօնտինգենտ և հրապարակի վրա գրել մի քանի հասարակական հարցեր։

Դա հայոց մտաւոր դրական կողմն էր։

Իսկ միւս հրատարակութիւնները, իրանց ընթացքով և իրանց գործունէութեամբ, անգիտակցաբար, վայր էին գցել հայոց լրագրի անունը, կորցել էին նրա վարկը հասարակութեան ազդեցիկ շրջանների մէջ, և այդ պատճառով հայոց լրագրի ձայնին ականջ չէին դնում, նրան անտես էին առնում, և նոյն իսկ արհամարում էին։

Դա հայոց մտաւոր բացասական կողմն էր։

Եւ բացասական կողմը աւելի մեծ էր քան դրական կողմը...

Ֆ.

«ՄՇԱԿԻ» ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Հայոց մամուլի համառօտ տեսութեան սկզբում մենք ասացինք. «Մշակի» լոյս գալովը մի նոր էպօխա է սկսվում հայոց գրականութեան և մամուլի մէջ։ Թէ այդ էպօխի առանձնայատկութիւնները լաւ հասկանալու, թէ Գ. Արծրունու նոր ուղղութիւնը և թէ «Մշակի» գործունէութիւնը լաւ պարզելու համար հարկաւոր է լուսաբանել հետևեալ երկու հարցը. առաջին՝ ինչ էր հայոց մամուլը ռուսահայերի մէջ մինչև «Մշակը», և ինչ հող էր պատրաստել նա «Մշակի» համար, և երկրորդ՝ ինչ հասարակական հանգամանքների մէջ Արծրունին հիմնեց «Մշակը»։

Առաջին հարցին մենք, թէև համառօտ կերպով, պատասխանեցինք. մնում է մեզ պարզելու երկրորդ հարցը, որը անկասկած առաջինի հետ մեծ կապ ունի։

1872 թուին, երբ սկսեց հրատարակվել «Մշակը», Թիֆլիզում ոչ մի հայերէն լրագիր չը կար։ Ռուսերէն լեզուով էլ հրատարակվում էր միայն պաշտօնական միակերպ «Кавказъ» լրագիրը։ «Հայկական Աշխարհը» դադարել էր 1871 թուի մայիսին, իսկ «Մեղու Հայաստանին» նոյն տարուայ վերջին։ Երբ Թիֆլիզում լայտնի եղաւ, որ Գրիգոր Արծրունին առանձին հայերէն լրագիր է ուզում հրատարակել, ամենքը զարմացան։ Հայերէն լրագրի անունը այնքան կոտրված էր, հայ լրագրի խմբագիր լինելը այնքան աննախանձելի մի պաշտօն էր, որ բնականաբար ամենքը պիտի զարմանային լսելով, որ գեներալ

Արծրունու որդին, որի առաջ բարձր գիրք ունենալու և մեծ պաշտօններ ստանալու ճանապարհը բաց էր, հրաժարվում է այդ բոլորից և հայերէն գազէթ է ուզում հրատարակել։

Ինտելիգենտ, ուսում առած մարդիկ ասում էին Արծրունուն. «Ում համար էք հրատարակում հայերէն լրագիրը։ Մենք, ուսում առածներս չենք կարդալ, եթէ ուզենանք, մենք ռուս և օտար լրագիրներ կը կարդանք, և ինչ կարելի է կարդալ հայերէն լրագրի մէջ։ Իսկ ժողովրդի համար չարժէ հրատարակել, որովհետև ժողովուրդը, հայերէն չի իմանում, հայերէն չի կարդում»։ Եւ ճշմարիտ այդ ժողովուրդը այն ժամանակ ոչ թէ հայերէն չէր կարդում, այլ կարդալու տրամադրութիւն էլ չէր ցոյց տալիս...

Գրիգոր Արծրունու լրագիր հրատարակելու միտքը, որ նա լղացել էր դեռ արտասահման եղած ժամանակ, գուցէ ոչ ոքին այնքան չը զայրացրեց, որքան նոյն իսկ իր հօրը՝ գեներալ Արծրունուն։ Այդ ամենքը գիտէին։ Իսկապէս գեներալ Երեմիան չէր էր կարող չը զայրանալ։ Մի բարձրագիր չինովնիկ մարդ, որը անկասկած ուզում էր իր որդուն էլ մեծ չինովնիկ դարձնել, որը գուցէ արդէն պաշտօններ էր պատրաստել տալիս իր ուսումը աւարտած որդու համար, տեսնում է, որ այդ որդին, ամեն բան արհամարհելով՝ իրան նուիրում է ինչ որ «գազէթ հրատարակելու և հասարակական ծառայութեան»։ Գեներալը, ինչպէս պատմում են, պահանջեց որդուց՝ թողնել իր այդ մտադրութիւնը։ Սա մերժեց կատարել հօր պահանջը։ Հօր և որդու յարաբերութիւնները բոլորովին լարվեցին։ Գրիգոր Արծրունին չը կամենալով ենթարկվել՝ կը տրում է իր բոլոր յարաբերութիւնները, զրկվում է նոյն իսկ հօր նիւթական օժանդակութիւնից և երկար ժամանակ հօրից միայն ամսական 100 ռուբլի էր ստանում...

—Տեսէք, տեսէք, ասում էր վրդովված հայրը. գեներալ Արծրունու որդին, գազէթ է հրատարակում և այն էլ հայերէն գազէթ...

Իսկապէս գէներալ Երեմեայի կարծիքը այն ժամանակվայ Թիֆլիսի հասարակութեան բարձր շրջանի կարծիքն էր։ Այդ շրջանի մէջ ամենքը զարմանում էին, թէ ինչպէս մի մարդ, որ իր առաջ փառաւոր ապարէզ ունի, իրան նուիրում է մի այդպիսի գործի։ Հետևեալ դէպքն են պատմում։ Բարձր շրջանի մի ռուս կին, լսելով, որ Գրիգոր Արծրունին լրագիր է ուզում հրատարակել, ասում է. «Բաս ասում էին, որ գէներալ Արծրունու որդին խելօք երիտասարդ է, մինչդեռ նա լրագիր է ուզում հրատարակել...»

Ահա մի այդպիսի ժամանակ, երբ չը կար հասարակական կեանք, երբ ինտելիգենտ դասակարգը ոչ թէ միայն չէր համակրում, այլ մինչև իսկ ծիծաղում էր գրական ապարէզ իջնողի վրա, երբ ընտանիքը հալածում էր «հասարակութեան ծառայել» ցանկացողներին, երբ վերջապէս, լրագիր հրատարակելը մի անպատիւ գործ էր համարվում մի փոքր ի շատէ դիրք ունեցող մարդու համար—մի այդպիսի ժամանակ, կրկնում ենք, լրագիր հիմնելը, այն էլ մի այնպիսի լրագիր, որը փոխանակ «օր, օր, օր» կարդալու, պիտի կռիւ մղէր, ուղղակի հերոսութիւն է....

Գրիգոր Արծրունին գործեց այդ հերոսութիւնը։

Այդ դեռ բաւական չէ. հասարակական գործունէութեան ապարէզ իջնելով, նա մտադրվում է վերանորոգել մի կեանք, որը դարևոր նիրհի մէջ էր ընկղմած, նա փորձում է ձեռք տալ, մաքրել այնպիսի գաղափարներ, որոնք դարերից ի վեր անշարժութեան մէջ էին ընկել և բորբոսնել....

Այդպիսի մի քայլ անելը, այդպիսի մի ձգտում ունենալը վերին աստիճանի պատասխանատու, նոյն իսկ վտանգաւոր գործ էր, որին ձեռնամուխ լինելու համար հարկաւոր էր ունենալ տաղանդ և վերանորոգչի անվեհերութիւն....

Գրիգոր Արծրունին այդ տաղանդը և այդ անվեհերութիւնն էլ ունեցաւ...

Եթէ 70-ական թուականներին կար մի տարբ, որ

կարող էր նպաստել այդ մտաւոր լեզափոխութեան գործին և որը առաջ չը կար—դա հայոց կեանքի մէջ նոր կազմակերպող ինտելիգենտ տարրն էր։ Այդ ժամանակ սկսել էին բացվել ժողովրդական-ծխական դպրոցներ. օտար համալսարաններից հայրենիք էին վերադառնում բազմաթիւ աւարտած երիտասարդներ, գրագիտութիւնը սկսում էր տարածվել և նկատվում էր, որ «հինի ու նորի» պատերազմ էր պատրաստվում...

Այդ պատերազմը սկսեց «Մշակը»։

Վճռելով հիմնել «Մշակը», Գրիգոր Արծրունին Թիֆլիզում գիմեց այն ժամանակվայ հայոց համալսարանական երիտասարդութեան, ցանկանալով նրանց հետ միասին, միահամուռ ոյժերով առաջ տանել այն գժուար գործը, որին ձեռնարկում էր։ Դեռ «Մշակի» թողլտութիւնը կառավարութիւնից չը ստացած, Արծրունու բնակարանում լինում էին նախապատրաստական ժողովներ։ Այդ ժողովներին ներկայ էին Թիֆլիզում եղող այն ժամանակվայ համարեա բոլոր նշանաւոր երիտասարդները։ «Մշակի» հրատարակութեան թողլտութիւնը ստացվեց, և այդ ժողովները աւելի ձևակերպվեցին, աւելի կազմակերպվեցին։ Տողերիս գրողը ներկայ չէ եղել այդ ժողովներին, բայց դրանց մասին շատ բան է լսել։ Ժողովի հոգին, ի հարկէ՝ ինքը Արծրունին էր։ Այդտեղ լինում էին Գաբրիել Սունդուկեան, մեր այժմեան նշանաւոր գրամատուրգը, Պօղոս Իգմայիլեան, Թիֆլիզի քաղաքագլխի այժմեան փոխանորդը, Հանդուցեալ Բարսեղ Շահվերդեան, փաստաբան Սենեքերիմ Արծրունի, Աբգար Յովհաննիսեան, փաստաբան Գէորգ Եւանդուլեան, Բաֆֆի, Հանդուցեալ Մարտիրոս Սիմէօնեան, Հանդուցեալ Միհրդատ Ամերիկեան, Հայոց բեմի հին գործիչ Գէորգ Զմշկեան, երբեմն Թիֆլիզին լաւ յայտնի Գրիգոր Իզմիրեան, Պերճ Պռոշեան, Հանդուցեալ Ստեփաննոս Պալասանեան, Ալէքսանդր Քիշմիշեան և ուրիշները։ Կարճ միջո-

ցում «Մշակի» խմբագրատան ժողովները յայտնի դարձան Թիֆլիզի Հայ Հասարակութեան բոլոր շրջաններում և ամենքը ուշադրութեամբ հետևում էին և հետաքրքրվում, թէ ինչ է խօսվում այնտեղ, ինչ մտքեր և գաղափարներ են արծարծվում հայոց ինտելիգենտ ոյժերի այդ կենտրոնում։ Հետաքրքրութիւնը այնքան մեծ էր, որ վերջումը նոյն իսկ պատանի, ոգևորված ուսանողներ գալիս և ներկայ էին լինում այդ ժողովներին. վերջումը այդ ուսանողներից շատերը, ինչպէս Սողոմոն Եղիազարեան—այժմ պրոֆեսոր, Նիկողայոս Լալայեան և այլք սկսեցին մասնակցել «Մշակին»։ Մինչև անգամ գաւառներից Թիֆլիզ եկող փոքր ի շատէ ինտելիգենտ երիտասարդները՝ բաղդ էին համարում և մի և նոյն ժամանակ պարտաւորութիւն՝ ներկայ լինել այդ ժողովներին, լսել թէ ինչ են խօսում, ինչ են ասում, որպէս զի իրանց հետ մի նորութիւն տանեն դէպի իրանց քաղաքը... Խմբագրական այդ ժողովներին, որը սկսվել էր 71 թուին, յաջորդ տարիներում սկսեցին մասնակցել նոր գրողներ, Թիֆլիզ եկող նոր համալսարանականներ։ Մի խօսքով Թիֆլիզում եղող փոքրը ի շատէ նշանաւոր մասնագէտները, գրողները, մանկավարժները և առհասարակ հասարակական և գրական գործերով հետաքրքրվելու շնորք ունեցող անձինք քաշվեցան դէպի այդ ժողովները։

Գրիգոր Արծրունին, մանաւանդ երիտասարդական այն հասակում, երբ, ինչպէս ասում են, «արիւնը երակների մէջ եռում էր», երբ նա իր մտքերի համար պատրաստ էր մինչև «վերջին կաթիլը» կռուել, հէնց առաջին քայլափոխից այնպիսի հարցեր դրեց և դրած հարցերն էլ այնպիսի կտրական ձևով, որ volens nolens, պիտի որոշվէր, թէ ով ինչ խելքի մարդ է, ինչ կարծիքի տէր և ինչ գոյնի արարած...

Եւ յիրաւի. շուտով խմբագրական ժողովների մէջ երկպառակումներ ընկան։ Համալսարանական և իրանց դիպլոմով պարծեցողները ամենքից անընդունակ հանդիսացան հաշվե-

լու այն նորութիւնների և ուղղութիւնների հետ, որ պաշտպանում էր Գրիգոր Արծրունին։

—Եղբայր, այդքան չի կարելի յարձակվել, ասում էին համալսարանականներից ոմանք։

—Այդ նորութիւնները վտանգի մէջ կը դցեն մեր ժողովրդի գոյութիւնը, ասում էին միւսները։

—Այս ինչ է, ամեն բան տակն ու վրա են ուզում անել, փոփոխում էին անկիւններում վախկոտները։

—Ինչպէս կարելի է յարձակվել վաճառականների վրա— գոռում էր մի ուրիշը—գրանք են մեր ազգութեան հիմքը։

—Վերջապէս կատարեալ ազգակործան բան է, այդքան օգտվել եւրոպական քաղաքակրթութեամբ, աղաղակում էին արդէն եղած-մեռած լրագիրների ներկայացուցիչները։

—Օհո, հոգևորականութեան դէմ խօսել—այդ անտանելի է, դա կը նշանակէ սպանել հայութիւնը, ասում էին շատերը։

—Այս ինչ լեզու է՝ առանց գրաբար բառերի, և վերջապէս այս ինչ եւրոպական բառեր են, գոռում էին հայկաբանները...

—Եղբայր, ծածկել, ծածկել պէտք է ազգի պակասութիւնները, պնդում էին կեղծ-ազգասէրները...

Ահա այս տխուր կարծիքներ և մտքեր էին լսվում այդ ժողովներում, որտեղ խմբված էին Թիֆլիզի ամենալաւ ինտելիգենտ ոյժերը։

Մտքերի ընդհարումները շատ շուտով առաջ բերեցին պառակտում ժողովների մէջ, և դեռ 1872-ի սկզբներին համալսարանականների մի մասը հեռացան և վճռեցին դիմադրել վտանգաւոր ուղղութեան։ Դիմադրելու համար նրանք որոշեցին վերականգնել «Մեղու Հայաստանին» և 1872 թ-ի մարտ ամսին այդ հերձուածողների ձեռքով վերականգնվեց «Մեղու» լրագիրը, դիմադրելու «Մշակի» մտքերին, ազատելու խեղճ հայոց ազգը «Մշակի» ձեռքից։ Այն օրից սկսած մօտ 20 տա-

րի տեւեց այդ կռիւը, մինչեւ որ «Մեղուն» բոլորովին յաղթ-
վեց եւ ընկաւ...

Գրիգոր Արծրունու հետ համալսարանականներից աւելի համերաշխ գտնվեցան ոչ-գիպլոմաւորները, գլխաւորապէս մի փոքրիկ խումբ, որ այդ ժողովներում կազմում էին այսպէս ասած ձ ա խ ա կ ո ղ մ ե ա ն կուսակցութիւն և որոնց թւումն էին Պետերբուրգի համալսարանից եկած Պօղոս Իզմայիլեան, Բ. Շահվերդեան և Բաֆֆի։

—Պէտք է համերաշխութիւն պահպանել հայերի և վրացիների մէջ, ասում էր ձախակողմեան կուսակցութիւնը։

—Մենք ինչ գործ ունենք վրացիների հետ, պատասխանում էին «Կռունկի» մնացած ներկայացուցիչները—մեր նպատակը հայերն են։

—Պէտք է արծարծել փոխատու-խնայողական արկղներ հիմնելու միտքը—ասում էր ձախակողմեան կուսակցութիւնը։

—Ի՞նչ օտարամոլութիւն է այդ—գոռում էին աջակողմեանները։

Եւ ահա այդպիսի, ներկայումս պարզված խնդիրների համար, որանից քսան տարի առաջ «Մշակի» խմբագրատան ժողովներում, ահագին կռիւներ, ընդհարումներ էին լինում և մարդիկ կռւում, բաժանվում էին...

Տեսնելով այդ ժողովների տաք վիճաբանութիւնները, անվերջանալի կռիւները և հիմնական անհամերաշխութիւնը, աւելի անտարբերները յուսահատվելով ասում էին՝ «ոչինչ չի լինի, լրագիրը շարունակել չէ կարելի. զուր են բոլոր աղմուկները»։

Ահա թէ ինչպէս է նկարագրում այդ ժողովները իր «Հայ երիտասարդութեան» մէջ մեր տաղանդաւոր գրող՝ Հանգուցեալ Բաֆֆին։

«Իւրաքանչիւր սերունդի համար թանգ է ժամանակի մի որոշ շրջանը։ Ես երբէք մոռանալ չեմ կարող 72 թւականը՝ երբ սկսվեցաւ հրատարակվել «Մշակ» լրագիրը։ Ինչ կեանք էր

տիրում այն ժամանակ Թիֆլիզում. ինչ դրութեան մէջ էր գաւառների վիճակը։—Ամեն տեղ տիրում էր մի տեսակ անշարժութիւն, մի տեսակ թմրութիւն, մի տեսակ մեռելութիւն։ Ցանկարծ, կարծես մի դիւթական գաւազանի հարուածից, զարթեցաւ կեանքը։ Ոչ ոք չէր հաւատում, թէ այդպէս կարող էր լինել։ Հաւատում էր միայն երիտասարդների մի փոքրիկ խումբ։ Ես յիշում եմ այն գեղեցիկ տարիները, այն հրաշալի գիշերները, երբ այդ խումբը հաւաքուած խմբագրատան մէջ, կարդում էին, ծխում էին և վիճում էին։ Մեզանից շատերը հագներին շապիկ չունէին, մտնում էին այնտեղ բոլորովին պատառոտած կօշիկներով. այսուամենայնիւ, մենք ամենքս էլ փառալիստի յուսով հաւատում էինք, թէ կը տիրապետենք մի մեծ ապագայի։

Ակզբում այս լրագրի շուրջը խմբվեցաւ համալսարանական դիպլոմաւորը երիտասարդութիւնը։ Բայց նրանք շուտով ցրուեցան. կարծես թէ գործը խորթ թուեցաւ իրանց։ Նրանք չը հաւատացին այս լրագրի ճակատագրին։ Մնացին դիպլոմից զուրկ ինքնուսները,—ինքնակրթութեամբ զարգացած մանկտին,—անաջողութիւնների տակ ճնշված, ամեն տեղից հալածված, բայց դարձեալ իր վեհութիւնը պահպանած մանկտին։ Ահա այդ ուժերը իրանց ուսերի վրա բարձրացրին «Մշակի» դրօշակը։

Համալսարանականները հեռանալով «Մշակից», ասպարէզը մնաց ինքնուսներին։ Այդ լրագրի խմբագիրը խիստ ճիշտ համեմատութիւն արեց, թէ նա թողեց դպիրներին և փարիսեցիներին և իրան շրջապատեց հասարակ ձկնորսներով,—ժողովրդի չը փչացած գաւակներով։

Ես երբէք չեմ կարող մոռանալ այն ազնիւ ժողովները, որ կազմվում էին այդ լրագրի խմբագրատան մէջ մի քանի տարի առաջ։ Եթէ ես ունեցել եմ իմ կեանքում մի քանի ոսկի րոպէներ—դրանք պատկանում են այն ժամանակին։ Ժողովների մէջ ոգևորված և բորբոքված վիճաբանութիւնները տեւում էին շատ անգամ մինչև գիշերվայ ժամը երկուսը։ Փոքրիկ, բոլոր նիւթական միջոցներից զուրկ, բայց բարոյապէս հարուստ խումբը ծրագրում էր հսկայական պրոեքտներ։ Այդ դոն-քիշոտութիւնը, եթէ ակայութեան այդ տենդային բորբոքումը, թէև մասամբ ծիծաղելի էր, բայց գեղեցիկ էր, որպէս մանուկի ժպի-

տը, որ արտայայտութիւն է նոր սկսվող կեանքի։ Խդէանների խորին արբեցութեան մէջ, ամեն մի երիտասարդ մոռանում էր իր վիճակի բաժանութիւնը, և մտածում էր, վիճում էր հասարակաց բարօրութեան մասին։ Կէս գիշերից յետոյ նիստը վերջանում էր։ Խումբը ցրիւ էր գալիս բուլվարների վրա, երբ բոլոր հիւրանոցները փակուած էին լինում։ Բայց դարձեալ խուլ և անապատացած փողոցների մէջ շարունակվում էր ընդհատված վիճաբանութիւնը։ Այն ժամին, երբ բախտաւոր Թիֆլիսեցին հանգստանում էր իր փառաւոր քնարանի մէջ, մեր կիսամերկ շրջմոլիկները, Գօլովինսկի Պրոսպեկտի սալերը դղրդելով, քննադատում էին մի նշանաւոր հասարակական հարց։ Զիւնը, անձրևը, սառը քամին չէր քշում նրանց դէպի իրանց ողորմելի բնակարանները, այլ աւելի զովացնում էր և աւելի կազդուրում տաքացած գլուխները։ Նորանք բաժանվում էին միմեանցից, երբ զարկում էր առաւօտեան զանգակը. այն ժամանակ գնում էին հանգստանալու, որ միւս օրը նոր ուժով սկսեն աշխատել»։

Թուլացած համալսարանականները հեռացան, տիրացուները յետ կանգնեցին, յուսահատվողները իրանց «գլուխը պահելու» գնացին և հրապարակի վրա մնաց Արծրունին, իրան գաղափարակից մի փոքրիկ, բայց անձնուէր, համոզված մարդիկներից բաղկացած խմբով, և այդպէս էլ շարունակեց սկըսած գործը....

Մենք այս ժողովների վրա այսքան երկար կանգ առանք գլխաւորապէս այն պատճառով, որ դրանք նեղ՝ խմբագրական ժողովներ չէին միայն, այլ այնպիսի ժողովներ, որտեղ հաւաքվում էին բոլոր այն ժամանակվայ գործող և գործելու ցանկութիւն ունեցող ուժերը և որտեղ յայտնված մտքերը և հայեացքները ամենից լաւ կարող են պարզել մեզ, յետնորդներիս, թէ ինչպէս էր մտածում հայոց ինտելիգենցիան և երիտասարդութիւնը՝ սրանից մօտ քսան տարի առաջ...

Մեր առաջ բերած գծերից, պարզ երևում է, որ նա շատ վատ էր մտածում...

«Մշակի» լոյս տեսնելուց մի քանի ամիս առաջ Գրիգոր Արծրունին հրատարակեց մի յայտարարութիւն, որի մէջ, ի միջի այլոց, խօսում է այն մասին, թէ ինչ մտքով լրագիրը կոչվում է «Մշակ» և թէ ինչ պիտի անի «Մշակը»։ Այդտեղ առաջ է բերում Էդմոնդ Աբուի խօսքերը, որ դեռ 1868 թւին Հելդբերգից գրել էր «Հայկական Աշխարհին»։—«Մեզանից չեն պահանջում հրաշքներ գործել, այլ որ և իցէ լաւութիւն թողնել։ Եւ այն մարդիկներին, որոնք իրանցից լաւ որ և իցէ աշխատանք կամ լաւութիւն են թողել, մենք անուանում ենք առաջադիմութեան մշակներ... Բարի գործը չի կորչի, աշխատենք....»

Մեզ հիացնում է այն համեստութիւնը, որ արտափայլում է Գրիգոր Արծրունու հրատարակած այդ յայտարարութեան մէջ։ Նա ոչինչ շանթեր չէ արձակում դէպի իրանից առաջ եղածները, նա ոչինչ ճռճռան խոստումներ չէ անում և ապագայի մասին. նա միայն ասում է. «պէտք է մշակել, պէտք է աշխատել, աշխատենք»։

Վերջապէս լոյս տեսաւ «Մշակի» առաջին համարը յունվարի 1-ին, որին անհամբեր սպասում էին Թիֆլիսի բոլոր շրջաններում։ Տեսնելով հայոց մի լրագիր, արտաքին այնպիսի տեսքով և այնպիսի բովանդակութեամբ, ինչպիսին էր «Մշակը», ամենքը զարմացած մնեանց վրա էին նայում։ Իսկ «Մշակը» այն ժամանակ, թէ արտաքին կողմից, և թէ բովանդակութեան դասաւորութեան կողմից այժմեանին մեծ նմանութիւն ունէր,—առաջնորդող, ներքին տեսութիւն, ներքին լուրեր, թղթակցութիւններ, արտաքին տեսութիւն, խառնրն լուրեր, բանասիրական, ֆելիէտոն։ Նոյն իսկ բովանդակութիւնը նորութիւն էր։ Ընթերցողը փոխանակ անհասկանալի բառախաղութիւնների և քարոզների, նրա մէջ գտաւ սեփական կեանքին վերաբերեալ լուրջ, ազդու յոդուածներ, իրական կեանքից վերցրած պատկերներ, և վէպիկներ, ֆելիե-

տոններ, թղթակցութիւններ նոյնպէս սեփական կեանքից, և վերջապէս եւրոպական քաղաքական և սոցիալական խնդիրների լուրջ և խելացի քննութիւն և ուսումնասիրութիւն։

Ընթերցողը, որ հայերէն լեզուով հրատարակվող լրագիրներից համարեա զզուել էր՝ նրանց անհասկանալի լեզուի և անհամ բովանդակութեան պատճառով, միանգամից զարմացաւ, տեսնելով, որ հայոց լրագրի մէջ էլ կարելի է գրել կենդանի հասկանալի ու լեզուով, որ հայոց լրագիրն էլ կարող է գրել իրական կեանքից, կենդանի խնդիրների մասին...

Ահա դրանումն է գաղտնիքը, որ սկսելով 50 բաժանորդով, «Մշակը» տարվայ վերջը ունեցաւ 500 բաժանորդ։ Նոյն իսկ այն մարդիկ, որոնք ասում էին. «Հայոց գաղէթն էլ կը կարդան», և որոնք երբէք սովորութիւն չունէին հայերէն տառերով տպած լրագրի երեսը տեսնել, ստիպվեցան առնել լրագիրը, կարդալ, մտածել, ուրախանալ կամ բարկանալ։ Մէջտեղից վերացաւ անտարբերութիւնը։ Եւ ահա կարճ միջոցում ինտելիգենտ շրջաններում կազմվեցաւ երկու որոշ խումբ, երկու որոշ կուսակցութիւն՝ մ շ ա կ ա կ ա ն ն ե ր և հ ա կ ա մ շ ա կ ա կ ա ն ն ե ր։ Այդ հակամշակականներն էին, որ վերջումը մկրտվեցան մ ե ղ ո ւ ա կ ա ն ն ե ր անունով....

Լրագիրը իր առաջին հետաքրքրական համարներից յետոյ, ոչ թէ չը թուլացաւ, ոչ թէ չը սկսեց ընթերցողներին տալ զանազան ճառեր և թ ա ր գ մ ա ն ո ւ թ ի ւ ն ն ե ր, ինչպէս կարծում էին թերահաւատները, այլ քանի գնաց աւելի ոգևորվեց, աւելի հարստացաւ, և աւելի շարժում առաջ բերեց։ Լրագրի հէնց առաջին համարներից երևացին Զաքուճի (Ամերիկեան) սրամիտ ֆելիետոնները, Թաֆֆիի Պարսկաստանի հետաքրքրական նամակները, որոնց տակ նա ստորագրում էր Ալէքսանդր Թաֆֆի, Շահվերդեանի՝ ներքին կեանքին վերաբերեալ տեսութիւնները, Պահլաւունու (Պերճ Պռոշեանի) Երևանեան թղթակցութիւններ, Իզմայիլեանի՝ արտաքին տե-

սութեան գեղեցիկ յօդուածները, իրական կեանքից վերցրած՝ Զմշկեանի գրած պատկերները, Ալէքսանդր Քիշմիշեանի վէպիկները, Համալի (Սունդուկեանի) ֆելիեթօնները, «Համալի մատենահաթ» վերնագրով, Ստեփաննոս Պալասանեանի գրական և մատենախօսական յօդուածները, Անդրէաս Արծրունու արտասահմանեան թղթակցութիւնները և այլն։ Իսկ առաջնորդողները մէկը միւսից աւելի ազդու էին։ Եւ այդ բոլորը միասին այնպիսի մեծ ներգործութիւն ունեցաւ քնաթաթախ Հայ հասարակութեան վրա, որ ամեն տեղ միանգամից աղմուկներ սկսեցին նոր լրագրի պատճառով, ճիշտ անպէս, ինչպէս որ թնդանօթի որոտը աղմուկ է գցում խոր քնի մէջ ընկղմած բանակի մէջ...

Մարդու սիրտը մխիթարվում է, և մարդ մի ներքին ուրախութիւն է զգում տեսնելով թէ ինչ սրբազան ոգևորութեամբ էր ներշնչված «Մշակը» հէնց իր գոյութեան առաջին օրից։ Թերթելով բոլոր համարները մէկը միւսի յետևից, տեսնում էք, որ գործողը՝ ներշնչված է մի անխուսափելի հաւատով, որ հաւատում է, թէ յաղթութիւնը իր կողմը պիտի մնայ, և համոզված է թէ իր սկսածը սուրբ գործ է։ Արծրունին գաղափարի կռիւ է սկսում և նրա առաջնորդողները սկսվում են այս խօսքերով՝ «Դուք և մենք», և շատ անգամ վերջանում են այսպիսի խօսքերով. «մենք գիտենք թէ ով ենք մենք. գիտէք արդեօք ով էք դուք», կամ թէ այսպիսի խօսքերով. «մենք կը սիրենք ձեզ կամ լռել, կամ ենթարկվել մեզ» և կամ՝ «անցեալը ձերն էր, ապագան մերը կը լինի. ապագայում մենք կը տիրապետենք...» Եւ այդ խօսքերը ուղղված էին ոչ թէ իսկապէս մի կամ մի քանի մարդկանց, այլ ամբողջ հին սերունդին, հնացած կեանքին և հընացած գաղափարներին...

Հետաքրքրական է թէ ինչ է ասում Արծրունին «Մշակի» առաջին համարի առաջին առաջնորդողում, որի

վերնագիրն է «Երէկ, այսօր և էգուց»։ Առաջ ենք բերում մի քանի կէտեր։

«Կար ժամանակ երբ մենք Հայերս բաւականացնում էինք մեր ազգային փառասիրութեան զգացմունքը, յիշելով մեր փառաւոր անցեալը, մեր առասպելական աւանդութիւնները . . . Մեր ազգի վերաբերեալ ուսումնասիրութեանը լրումն էինք տալիս ժամանակ առ ժամանակ կարդալով կամ թերթելով մեր հին կեանքի մասին պատմական հետազօտութիւններ։

Հասարակութեան բարձր դասին պատկանող անձից (մարդ թէ կին) այսքան էլ չէր պահանջվում . . . . Նորանից պահանջվում էր միայն մեր հին պատմութիւնից քանի մի նշանաւոր անուններ գիտենալ, որ նա ժամանակ առ ժամանակ ուրիշների առաջ անգիր էր ասում. պահանջվում էր որ նա՝ գուցէ լեզուն էլ չիմանալով, տարվայ այս ինչ տօներին եկեղեցի գնար. . . . Նա պարծենում էր իր ազգի պատմութեամբ, բայց աշխատում էր իր երեխաների հետ երբէք մայրենի լեզուով չխօսել։ Նա հպարտ էր իր հայրենիքի անցեալը յիշելով, բայց յանցանք էր համարում ժամանակակից հայրենակիցներին մտաւոր կամ նիւթական որ և է օգնութիւն հասցնելու. . . . Նա ատում էր իր հայրենակիցները, նոցա մէջ մեծ պակասութիւններ գտնելով, և իրան բարոյապէս իր հայրենակիցներից բարձր զգալով, չէր կամենում մտածել նոցա այդ պակասութիւններից բժշկելու միջոցների վրա։

Ժողովուրդը ագէտ և մոլեռանդ էր. նա հայերէն չգիտէր, բայց եկեղեցի յաճախելով ջերմեռանդ ազօթում էր։ Նա հայ էր ասում իրան, բայց կապիկը անգամ խնայում էր իր երեխայի համար հայերէն մի գիրք առնելու։

Նա ոչինչ չէր արդիւնաբերում հայութեան համար, չէր հոգում հայութեան մասին, բայց վրդոված հալածում էր այն երիտասարդին, որը հեռանում էր հայութեան աւանդութիւններից . . . Նա ախ քաշելով ամեն օր գանգատում էր իր հայրենակիցների պակասութիւնների վրա, բայց միևնոյն ժամանակ անզգոյշ և վնասակար անձ էր համարում նորան, ով օրագրական կամ բեմական գրվածքում այդ պակասութիւնները ներկայացնում էր . . . . Նա անգոհ էր իր գրութեամբ, բայց անձնական թշնամի էր համարում նոցա, որոնք վերանորոգութիւն էին առաջարկում։

Երեկվայ օրը անցաւ։

Այսօր ամեն տեղ սկսում են փոքր ի շատէ հայերէն սովորել։

Հիմնվում են տարրական ուսումնարաններ, ժողովուրդը իր երեխաները ուսումնարան է ուղարկում, բարձր դասը ուղարկում է իր որդիները համալսարան . . . . Գրաբարը և հնութեան լեզուները երկրորդական դեր են խաղում,—այսօր մենք ունենք կենդանի լեզուով գրած օրագիրներ և գրքեր։ Ամեն մի հայ երևում է իրը ազգասիրական ոգով վառված։

Մի կողմից երևեցան ազգասիրական բանաստեղծութիւններ, միւս կողմից հայրենական պատմութիւնից առած բեմական գրվածքներ։ Բարձր ուսում առած երիտասարդները չափազանց բազմացան . . . Ազգասիրական ոգով վառված, նոքա այնպիսի ուսման ճիւղ են ընտրում իրանց համար, որ առանց ծանր աշխատանքի կարոչանալին ապահովել իրանց ապրուստը . . .

—

Բայց էգուցվայ օրը մոտենում է։

Այն երիտասարդները, որոնք բարձր ուսում ստանալուց յետոյ վերադարձան իրանց հայրենիքը, որոնք մեր հնացած հասարակութեան մէջ լուսաւորութեան ներկայացուցիչներն են համարվում,—կատարեցին ազգեօք իրանց պարտաւորութիւնը։

Նոցա գրոշակի վրա գրած է լուսաւորութիւն խօսքը, բայց դժբաղդաբար մենք պէտք է խոստովանենք, որ նոցա պակաս է լուսաւորութեան տարածութեան համար ամենանշանաւոր գործիչը,—այն է աշխատանք . . .

XIX դարի լուսաւորութեան գլխաւոր գործիչը աշխատանքն է։ Այդ գաղափարը ժողովուրդը չէ ըմբռնում, իսկ լուսաւորութեան ներկայացուցիչները, մեզ մօտ, օգուտ քաղելով նոցա տգիտութիւնից հաւատացնում են նոցան, որ լուսաւորութիւնը նոցա համար անմատչելի, անըմբռնելի գաղափար է . . . որ իր էութեամբ նա վերացական գաղափարէ, իսկ արտաքին կեանքումը նա արտայայտվումէ գեղեցիկ հագուստով և թղթի վրա գրված վկայագրով . . . Ա՛յ. ասումեմ ես ժողովրդին, լուսաւորութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ աշխատանք, և նոքա որոնք լուսաւորութիւն են քարոզում քեզ, բայց իրանք չեն ընտելացել աշխատանքին, մեզաւոր են իրանց խղճմտանքի առաջ. . .

Կգայ ժամանակ, երբ նոքա, որոնք պարտաւորութիւններ

ունին, բայց չեն կատարել այդ պարտաւորութիւնները, կենթարկուին ապագայ սերունդի հասարակական դատաստանին։

Էգուցվայ օրը պահանջուում է փոքր սերունդի համար տարրական ուսում, ժողովրդի համար ժողովրդական գիտութիւն, ուսում առածների համար ճիշդ գիտութեան ծանօթութիւն, հասարակութեան համար ճիշդ գիտութիւնների վրա հիմնած մտախորհութեան եղանակ,—ամենի համար աշխատանք։

Էգուցվայ օրը պահանջուում է բարձր ուսում առացածներից ոչ թէ միայն ժողովրդի ամեն դասերի կենտական երեւոյթների խորը քննադատութիւն, այլ և իրանց սեփական անձի խրճմտարար, անխոնջ անձնանքննութիւնը։

—

Երեկ մենք կատարտանական ազգ էինք,
Այսօր մենք ազգասէրներ ենք,
Էգուց մենք պէտք աշխատողներ դառնանք»։

VI.

ՆՈՐ ՄԵԹՈԴ ԵՒ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Մինչև «Մշակը» Հայոց համարեա բոլոր գրողները քարոզիչներ էին. գրականութեան և մամուլի մէջ տիրում էր խրատական և քարոզչական մեթոդ։ Ամեն մի գրող, ամեն մի հրապարակագիր այսպէս էր գրում. «Մեր ազգը ուսում չունի. մեր սիրելի ազգի բարոյական կեանքը պակասաւոր կողմեր ունի։ Հարկաւոր է որ Հայոց ազգը լուսաւորվի. ա՜խ, երբ կը լուսաւորվի մեր սիրելի ազգը»։ Հետևելով այդ քարոզչական սխալ մեթոդին, կրկնելով այն ժառանգական գանգատը թէ՝ «մեր խեղճ ազգը ուսում չունի, ա՜խ նա երբ պիտի լուսաւորվի», մամուլը, բացի նրանից՝ որ այդ տեսակ գանգատներով չէր կարողանում ազգը լուսաւորել, այլ միևնոյն ժամանակ մի մեծ յանցանք էլ էր գործում,—այդ այն է, որ երբէք չէր ձգտում ուսումնասիրելու ժողովրդի իրական կեանքը, երբէք չէր աշխատում փաստեր հաւաքել այդ կեանքի մասին, որոնց վրա և միայն կարելի էր հիմնել այս կամ այն կարծիքը։

Այդ քարոզչական, խրատական մեթոդին հետևող մեր բոլոր գրողները՝ միևնոյն ժամանակ մի սխալ հասկացողութիւն էին կազմել իրանց մասին։ Նոքա երևակայում էին, և դոցա մնացորդները այժմ էլ այն կարծիքի են, թէ շատ լաւ են ճանաչում հայ ժողովրդին, և շատ լաւ են ուսումնասիրել նրա պիտոյքները և կեանքը։ Դոքա ասում էին. «Մենք գիտենք Հայոց պատմութիւնը. լաւ ենք ուսումնասիրել՝ Ագաթանգե-

զոսը, Խորենացին, Բիւզանդը, մենք քաջ ծանօթ ենք գրաբար լեզուին, և այդտեղից հետևեցնում էին, որ ժողովրդի կեանքը իրանց լաւ ծանօթ է։ Պոցա համար հայի անցեալը ամեն բան էր. Ներկան նոցա համար երկրորդական նշանակութիւն ունէր. իսկ ապագայի մասին նոքա երբէք չէին էլ մտածում...

Մի ժողովրդի լաւ ճանաչելու համար անկասկած պէտք է ուսումնասիրել և նրա անցեալը։ Բայց, հետաքրքրական է իմանալ, ինչ է տալիս մեզ հայոց անցեալի պատմութիւնը—հայոց պատմութիւնը։—Մի քանի թագաւորների և նախարարների փոխադարձ կռիւների և պատերազմների ցանկ,—և ուրիշ ոչինչ։ Կայ արդեօք հայոց պատմութեան էջերում ժողովուրդ. երևում է արդեօք այդ էջերից, թէ ինչպէս էր մտածում հայ ժողովուրդը քրիստոնէութիւնից առաջ, կամ քրիստոնէութեան ընդունած ժամանակ. ո՞րն էր նրա ուրախութիւնը, և ինչը նրա տրտմութիւնը։ Ոչ. այդ բանը չը կայ և չի երևում...

Հիմնվելով այն սխալ հայեցակէտի վրա, թէ իմանալով հայոց պատմութիւնը, լաւ տեղեակ լինելով հայոց գրաբար լեզուին և կարդացած լինելով վանքի պատերում փակված և կրօնական ոգով ներշնչված հայ մատենագիրներին կարելի է ուսումնասիրել հայ ժողովրդի կեանքը,—հայ գրողները այնտեղ հասան, որ միանգամայն սկսեցին անտես առնել ժողովրդի ներկայ կեանքը, նրա առօրեայ ցաւերը, նրա ժամանակակից պահանջները։ Դրա հետևանքը եղաւ այն, որ ոչ մի գրող, ոչ մի հրապարակագիր չէր ուզում մտնել ժողովրդի ներկայ կեանքի մէջ և իմանալ, թէ ինչպէս է ապրում հայ գիւղացին, ինչ է նրա տնտեսական կեանքը, ինչ է նրա բարոյական աշխարհայեցողութիւնը, ինչպէս է նա ինքը նայում իր սեփական կեանքի վրա... Հայոց լրագիրը ամօթ էր համարում գրել, գիւղ. արհեստաւորի համայնական սովորութիւնը, գիւղացու հունձը, ինչքան հող ունի նա, ինչ գրութեան մէջ է

երկրի գիւղատնտեսութիւնը, ինչպէս է ապրում երկրագործը, ինչպէս է հագնվում հայ կինը, մի խօսքով այն, ինչ որ կազմում է ժողովրդի իրական կեանքը...

Եւ ահա այդ պատճառով նոյն իսկ այն մարդիկ, որոնք կարծում էին թէ լաւ են ճանաչում ժողովրդին, որոնք կարծում էին, թէ որովհետև իրանք մանկութեան ժամանակ «տօրմա և փլաւ» են կերել, ուստի և «ժողովրդի սրտիցն են խօսում»,—իսկապէս երբէք էլ չը ճանաչեցին այդ ժողովրդին, և այդ պատճառով անընդունակ եղան արծարծելու այնպիսի խնդիրներ, որոնք բղխում են այդ ժողովրդի իրական կեանքից...

Գրիգոր Արծրունին հրապարակ գալով հէնց առաջին քայլափոխից թշնամի հանդիսացաւ այդ սխալ մեթոդին և ուղղութեան, և իր բոլոր եզրակացութիւնները և մտքերը հիմնեց իրական կեանքի ուսումնասիրութեան վրա։ Մանկութիւնից հաւերէն չիմանալով, ապրելով հայոց կեանքից դուրս, և երիտասարդական հասակում միայն սկսելով ուսումնասիրել հայոց լեզուն և գրականութիւնը, Արծրունին ի հարկէ չէր կարող ծանօթ լինել հայ ժողովրդի կեանքին։

Այդ կողմից Արծրունին սկզբում միանգամայն նման էր միւս հայ գրողներին... Բայց սկսելով գործել, նոյն Արծրունին, ամէնից առաջ նպատակ է դնում հետազոտել, ուսումնասիրել կեանքը։ Նա դարձնում է «Մշակը» ոչ թէ քարոզիչ, այլ հետազօտիչ։ Այդ ընթացքը բռնելով նա կարճ ժամանակից լեռոյ ապացուցեց, որ աւելի ճիշտ է ըմբռնել և հասկացնել հայ ժողովրդին՝ իր բոլոր պահանջներով, քան թէ այն բոլոր մարդիկ, որոնք իրանց համարում էին և համարում են հայոց կեանքին տեղեակ։

Հետևելով այդ հետազօտիչ՝ գիտութիւնների ճիշտ մեթոդին, ուսումնասիրելով կեանքի բոլոր երևոյթները, Արծրունին նախ պատկերացնում է կեանքը և ապա նոյն

այդ իրական կեանքի վրա հիմնում է իր եզրակացութիւնները։

Իբրև գրող նստած իր կաբինետում, Արծրունին վարվել է այնպէս, ինչպէս իր կաբինետում նստած բնագէտը։ Բնագէտը խոշորացոյցով սկսում է ուսումնասիրել իր առաջ դրած կենդանուն. բազմաթիւ փորձեր է անում. դիտում է, քննում է, և երբ արդէն հարիւրաւոր փորձերը և դիտողութիւնները ցոյց են տալիս, որ միևնոյն երևոյթը կրկնվում է բոլոր դէպքերում.—նա, այդ գիտնական-բնագէտը, հիմնվելով այդ հարիւրաւոր փորձերի ու դիտողութիւնների վրա,—դուրս է բերում եզրակացութիւն, և ապա այդ եզրակացութեան վրա հիմնվելով՝ աւետում է աշխարհին մի նոր գիտնական օրէնք։ Այդպիսի օրէնքը սխալ լինել չի կարող, որովհետև նա հիմնված է իրականութեան բարեխիղճ ուսումնասիրութեան վրա։ Գրիգոր Արծրունին իբրև գրող, իբրև մտածող՝ հետևել է բնագիտական այդ ճիշտ մեթոդին։ Նա նախ ուսումնասիրել է և ապա դուրս բերել եզրակացութիւններ՝ որոնք հիմնված են եղել այդ ուսումնասիրութեան և մարդկային զարգացման համար ընդհանուր տեսութիւնների վրա։

Դա է եղել Գրիգոր Արծրունու գրական գործունէութեան մեթոդը։

Այդ մեթոդին նա միացրել է այն ուղղութիւնը, որ նա անուանել է քննադատական, բացասական ուղղութիւն։

Մի կողմից ցոյց տալով կեանքի այս կամ այն տգեղ, քայքայված, հնացած կողմը, ցոյց տալով այդ կեանքի այլանդակութիւնները, և միւս կողմից բացատրելով այդ կեանքը վերանորոգելու ճանապարհները, Գրիգոր Արծրունին, ամբողջ «Մշակի» հետ միասին, մերկացրել և հարուածել է այն բոլոր հիմնարկութիւնները և տարրերը, որոնք կամ չեն ուզում վերանորոգվել կամ արգելում են ժողովրդի վերածնութեանը և նրա կեանքի վերանորոգմանը... Ահա այդ պատճառով ուսում-

նասիրութեան և հետազօտութեան գործի հետ «Մշակի» մէջ միշտ կապված է եղել քննադատական, բացասական ուղղութիւնը։ Բացասական ուղղութեան հիմքը ժամանակակից գրութիւնից դժգոհ լինելն է. իսկ առանց դժգոհութեան—չը կայ առաջադիմութիւն... «Մշակի» գոյութեան նախորդ տարիները տարբերվում են վերջին տարիներից նրանով, որ սկզբում նրա մէջ տիրապետում էր հետազօտութիւնը և ուսումնասիրութիւնը, իսկ յետոյ, վերջին տարիները, կեանքի հետազօտութեան և ուսումնասիրութեան գործին երկրորդական տեղ տրվեցաւ, և դրա փոխարէն սկսեց տիրապետել բուն բացասական, յարձակողական ուղղութիւնը։ Դրա պատճառը պարզ է։ Արդէն ուսումնասիրած և հետազօտած լինելով ընտանեկան, հասարակական կամ սոցեալական այս կամ այն երևոյթը, և այդ ուսումնասիրութիւնից դուրս բերած լինելով որոշ եզրակացութիւններ, Գրիգոր Արծրունին իր գործունէութեան վերջին տարիները սկսեց հոգալ գլխաւորապէս նոցա գործադրութեան մասին, անխնայ յարձակվելով այն բոլորի վրա, որոնք արգելք են հանդիսանում այդ գործադրութեանը...

Արծրունին ունի իր՝ հասարակութեանը արդէն յայտնի գաղափարները և ձգտումները։ Նա համոզված է որ անհրաժեշտ է այդ գաղափարները և ձգտումները իրականացնել։ Եւ ահա այդ վերջին հանգամանքի վրա է դարձրել նա իր բոլոր ուշադրութիւնը, անդադար կրկնելով միևնոյն ճշմարտութիւնը, անդադար լիշեցնելով իր գաղափարները, անդադար հաւաձելով հակառակորդներին, անդադար քննադատելով վերանորոգութեան արգելք հանդիսացող հիմնարկութիւնները...

Եւ անկասկած նա այդպէս էլ կը վարվի և այդ ուղղութեամբ կը շարունակի ապագայումն էլ, մինչև որ կը իրագործվեն իր ձգտումները...

VII.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵԱՑՔ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՎՐԱ

Գրիգոր Արծրունու 25 տարվայ գործունէութիւնը քննադատելու և գնահատելու համար հարկաւոր է հատորներ գրել։ Այդ գործունէութիւնը այնքան մեծ և այնքան նշանաւոր է, որ նրան լիակատար կերպով ներկայացնելու համար, հարկաւոր է հայոց կեանքի մօտ 25 տարվայ պատմութիւնը գրել, որովհետև այդ ժամանակամիջոցում հայոց կեանքի մէջ ոչ մի նշանաւոր երևոյթ չէ տեղի ունեցել, որը այսպէս թէ այնպէս կապված չը լինէր Արծրունու կամ «Մշակի» հետ։ Բայց այդ բանը ներկայումս անել անկարելի է յայտնի պատճառներով... Ուստի մեզ մնում է մի ընդհանուր, շատ կարճ հայեացք գցել Գրիգոր Արծրունու գործունէութեան վրա։

Արծրունու, իբրև պուբլիցիստ-գրողի, գործունէութիւնը կարելի է երկու մասի բաժանել.

Առաջին՝ Գրիգոր Արծրունին—իբրև վերանորոգիչ.

Երկրորդ՝ Գրիգոր Արծրունին—իբրև խմբագիր։

Իբրև վերանորոգիչ այդ մարդը հայոց կեանքի մէջ ներկայացնում է իրանից մի հոսկայ։ Վերանորոգիչ լինելու համար անկասկած տաղանդ է հարկաւոր, որ ունի Արծրունին։ Նրա այդ բնածին տաղանդը համակրելի ուղղութիւն ստացաւ շնորհիւ այն բանի, որ 60-ական թուականներին լինելով Մոսկվայում և Պետերբուրգում, ընկաւ ռուսաց ամենալաւ գրող-

ների ազդեցութեան ներքոյ և ապա արտասահման գնալով՝ իր այդ տաղանդին և առաջադեմ ուղղութեանը աւելացրեց գիտնական մեծ պաշար։ Լինելով վերին աստիճանի ընդունակ, ունենալով խոր գիտողականութիւն և եռանդ, Արծրունին հիմնաւոր ուսում ստացաւ, ձեռք բերեց մեծ հմտութիւններ։ Նա բացի հայերէնից, լաւ գիտէ ռուսերէն, գերմաներէն և ֆրանսերէն և մի փոքր էլ անգլիական և իտալական լեզուները.—անհրաժեշտ զէնքեր՝ նրա—իբրև պուբլիցիստի համար։

Ուսումնասիրելով Արծրունու գործունէութիւնը, մարդ այն եզրակացութեան է գալիս, որ նա հրապարակ եկաւ որոշ ծրագրով և որոշ ձգտումներով՝—վերանորոգել հայոց մտաւոր կեանքը։ Բայց որտեղից պէտք էր սկսել այդ վերանորոգութիւնը, որպէս զի նա լինէր հիմնաւոր և հետևողական։

Հիմնվելով իր ընդունած մեթոդի վրա, որի մասին մենք խօսեցինք նախորդ գլխում, Արծրունին պէտք է սկսէր, այսպէս ասած, արմատից։

Հայոց կեանքի այդ արմատը համարվում է ընտանիքը։ Ինչ է ընտանիքը։—Մի քանի մարդոց միութիւն։ Մի քանի մարդիկ միանալով կազմում են ընտանիք. ընտանիքները միանալով կազմում են համայնք կամ հասարակութիւն. հասարակութիւնները միասին կազմում են մի ամբողջ ազգ, կամ պետութիւն, իսկ ազգերի կամ պետութիւնների միացումից դուրս է գալիս ամբողջ մարդկութիւնը։

Արդ՝ ինչպէս որ, եթէ մի որևէ օրգանիզմի բաղկացուցիչ մասերը հիւանդ են, հիւանդ կը լինի և ամբողջ օրգանիզմը, այնպէս էլ, եթէ ընտանիք կազմող մասերը բարոյապէս հիւանդ են, հիւանդ կը լինի և ինքը ընտանիքը. եթէ բարոյապէս հիւանդ կը լինեն ընտանիքները, հիւանդ կը լինի՝ այդ ընտանիքներից կազմված ամբողջութիւնը՝ հասարակութիւնը. եթէ հասարակութիւններն էլ բարոյապէս առողջ չեն, հիւանդ կը լինի ամբողջ ազգը կամ պետու-

թիւնը, իսկ հիւանդ ազգերի կամ պետութիւնների միացումից հիւանդ կը լինի և ամբողջ օրգանիզմը—մարդկութիւնը։

Այդտեղից հետևում է այն ճշմարտութիւնը, որ եթէ ուզում էք առողջ լինի մարդկութիւնը, պէտք է առողջացնէք նրա մասերը՝ պետութիւնները և ազգերը. եթէ ուզում էք որ այդ ազգերը հիւանդոտ չը լինեն, պէտք է առողջացնէք դրանց կազմող հասարակութիւնները. իսկ այս և այն հասարակութիւնը բժշկելու համար պէտք է նախ բժշկէք ընտանիքը. իսկ ընտանիքը առողջացնելու համար՝ պէտք է առողջացնէք նրա բաղկացուցիչ մասերը.—ընտանիքի անդամները։

Հիմնվելով այդ տեսակէտի վրա՝ սկսելով ընտանիքի և նրա կազմող անդամների վերանորոգութիւնից, գործողը, ի հարկէ, ունենում է աւելի լայն նպատակ, այն է՝ վերանորոգել մի ամբողջ համայնք կամ հասարակութիւն. հասարակութիւնների վերանորոգութեան մասին աշխատելիս՝ նա իսկապէս մտածում է ամբողջ ժողովրդի կամ ազգի կեանքի վերանորոգելու մասին, իսկ այդ բանը անելով, գործողը հասնում է իր ամենամեծ և վերջնական նպատակին,—այն է՝ ամբողջ մարդկութեան վերանորոգութեան և բարօրութեան։ Մենք այդ համարում ենք վերջնական նպատակ. որովհետև եթէ ամբողջ մարդկութիւնը բարօրութեան մէջ է, կը նշանակէ բարօրութեան մէջ են և նրա բաղկացուցիչ ամենափոքր միութիւնները։

Այդ տեսակէտը հիմք դարձնելով, վերանորոգիչ գործողը անկասկած ընտանիքի՝ իբրև մի ամբողջութեան շահերը աւելի կը գերադասի, քան թէ նրա բաղկացուցիչ մասերի՝ անդամների շահերը. ամբողջ հասարակութեան շահերը աւելի կը գերադասի ընտանիքի շահերից, ամբողջ ազգի շահերը՝ հասարակութեան կամ համայնքի շահերից, իսկ ընդհանուր մարդկութեան շահերը—ազգի շահերից։ Այդ մի կողմից։ Իսկ միւս կողմից գերադասելով ընտանիքի շահերը նրա ամեն մի անդամի շահերից, աշխատելով ներդաշնակութիւն գտել ընտա-

նիքի մասերի մէջ, մի և նոյն ժամանակ պէտք է չը դիպչել ամեն մի անդամի ինքնուրոյնութեանը, չը պէտք է մի անանդամը զոհ բերել միւս անդամին, ապա թէ ոչ կը խախտվի նոյն իսկ ամբողջ ընտանիքի հասարակշռութիւնը։ Գերադասելով ամբողջ հասարակութեան շահերը ընտանիքի շահերից, պէտք է ոտնակոխ չանել վերջինի շահերը. գերադասելով ամբողջ ազգի շահերը այս և այն հասարակութեան շահերից՝ նոյն իսկ ազգի շահերի տեսակէտից՝ պէտք է որոշ աստիճանի ինքնուրոյնութեան մէջ պահել հասարակութիւնը. և վերջապէս ամենից բարձր համարելով ընդհանուր մարդկութեան շահերը՝ հարկաւոր է չը սահմանափակել մի ժողովրդի՝ իբրև բաղկացուցիչ մասի, այսպէս ասած, ա ն հ ա տ ա կ ա ն իրաւունքները, որովհետև, կրկնում ենք, ամբողջութիւնը առողջ կը լինի միայն այն ժամանակ, երբ առողջ են նրա բաղկացուցիչ մասերը. իսկ այդ մասերը առողջ կը լինեն միայն այն դէպքում, երբ ներդաշնակութիւն գտնում նրանց մէջ՝ մէկ մասը միւսին զոհ չի բերվիլ։ Այդ պրինցիպի, այդ հայեցակէտի նպատակն է պահպանել ա ն հ ա տ ա կ ա ն ութ իւ ն հ ա ս ա ր ա կ ա կ ա ն ութ ե ա ն մէջ, և հ ա ս ա ր ա կ ա կ ա ն ութ իւ ն ա ն հ ա տ ա կ ա ն ութ ե ա ն մէջ։

Երկար կանգ առնելով այդ հիմնական հայեցակէտի վրա, մեր նպատակն էր պարզել Գրիգոր Արծրունու գործունէութեան ներքին խորհուրդը և նպատակը, որովհետև մեր դիտողութիւններից այն եզրակացութեան ենք հասել, որ Արծրունին այդ հայեցակէտով է միշտ ղեկավարվել։ Այժմ արդէն ընթերցողի համար դժուար չէ ըմբռնել թէ ինչը պէտք է լինէր Արծրունու ձ գ տ ա ն ե ր ի գ լ խ ա ւ ո ր նպատակը, և թէ այդ նպատակին հասնելու համար՝ որտեղից պիտի սկսէր իր վերանորոգութիւնը...

Ուրեմն առաջ անցնենք։

Նախ քան մի որ և է միտք լայնելը, հարկաւոր էր այս հարցը պարզել,—թէ ինչ լեզուով պէտք է խօսել ժող-

վրդի հետ, որ նա հասկանայ։ Այդ հարցը իրան տուեց Գրիգոր Արծրունին իր գործունէութեան սկզբում, և հէնց առաջին քայլափոխից յարուցեց՝

Լեզուի խնդիր։ Լեզուի խնդիրը Արծրունու համար չէ եղել լեզուական խնդիր։ Նա դատեց այսպէս. «Ժողովրդի համար եմ գրում, ուրեմն պէտք է գրեմ այնպէս, որ հասկանան։» Լեզուի արտաքին գեղեցկութիւնը նրա համար երրորդական նշանակութիւն ստացաւ, նրան զբաղեցնողը միայն միտքը և գաղափարն էր, իսկ լեզուն միայն մի միջոց, այդ միտքը և գաղափարը յայտնելու համար։ Այդ պատճառով Արծրունին հէնց սկզբից կռիւ յայտնեց ճարտասանական ձևերին և գրաբարին։ Գրաբարը հալածելով նա ճանապարհ բաց արեց նոր, կենդանի լեզուի բարբառների համար։ Արծրունին լեզու չը մշակեց, բայց ջարդեց գրաբարի տիրապետութիւնը, վերջնականապէս սպանեց այն կուսակցութիւնը, որի իդէալն էր գրաբարը վերականգնեցնել. ստիպեց մարդոց գրել պարզ, հասկանալի լեզուով, բարձրացրեց աշխարհիկ՝ կենդանի լեզուի նշանակութիւնը, և այդպիսով հիմք դրեց աշխարհիկ այն տեսակ լեզուի կազմակերպութեանը,—որի նպատակն է հասկանալի լինել, և որը այդ ուղղութեամբ զարգանալով՝ կը մշակվի և կը կանոնաւորվի, գրաբարի շղթաներից միշտ ազատ մնալով։ Հայկաբանները ապմուկ, ճիչ բարձրացրին Արծրունու պաշտպանած պարզութեան, կամ ինչպէս իրանք էին ասում, ռամկականութեան դէմ. գրաբարեանները բողոք յարուցին Արծրունու ձեռքով ներմուծվող եւրոպական բառերի դէմ, ծաղրեցին «Մշակի» լեզուն, բայց վերջը յաղթվեցան, և աշխարհաբարը շարունակեց ընթանալ իր նախագծած ճանապարհով՝ աշխատելով պարզ լինել և հարստանալ թէ ժողովրդական և թէ օտար՝ ընդհանուր եւրոպական բառերով։ Եւ ահա այդ նոյն աշխարհաբար լեզուով այսօր հայ գրողը կարողանում է գրել բանաստեղծութիւն, վէպ, այդ նոյն լեզուով այժմ գրվում են քա-

զաքական, ֆինանսական յոդուածներ, այդ նոյն լեզուով կարելի է գրել նկարչութեան, գեղարուեստի մասին,—մի խօսքով այդ լեզուն ընդունակ դարձաւ արտայայտելու ժամանակակից հայկական միտքը՝ և անկասկած քանի գնալ աւելի կը զարգանայ...

Աշխարհիկ լեզուի զարգացման հիմնական խնդիրներում «Մշակի» յաղթանակը տարաւ, իսկ մայրենի լեզուի ուսուցման պաշտպանութիւնը նրա հիմնական գաղափարներից մինը դարձաւ։

Իր գործունէութիւնը սկսելով՝ Արծրունին դիմեց հայոց հասարակութեան այն մասին, որ կարող էր և պարտաւոր էր մտածել ժողովրդի առաջադիմութեան համար, և դրա հետեւանքը այն եղաւ, որ նա հրապարակ դուրս բերեց՝

Ինտելիգենցիայի գործունէութեան խնդիրը։ «Մշակի» հէնց առաջին համարներից հայոց ինտելիգենտ երիտասարդութիւնը դառնում է ուսումնասիրութեան նիւթ։ Դա մի տարր էր, որ կարող էր գործել, բայց որը անգործութեան մէջ ժանգոտում էր իր ոյժերը։ Արծրունու յարձակմունքները ինտելիգենցիայի վրա անխնայ են եղել։ Նա ասում էր. «Դուք դիմակաւորվում էք գիտութեան և ուսման դիմակով. դուք ձեզ ժողովրդի առաջնորդ էք համարում, ապա ուրեմն ինչու ոչինչ չէք շինում»։ Երկար տարիներ Գրիգոր Արծրունին մտրակեց ինտելիգենցիայի անտարբերութիւնը. պատռեց ժամանակաւոր իդեալիստների դիմակը, հալածեց նոցա, որոնք իրանց բարձր համարելով, խորշում էին ժողովրդից, մայրենի լեզուից և հասարակական գործունէութիւնից. վատերին անխնայ հալածեց, արժանաւորներին սիրտ տուեց, և չը նայած, որ դրանով իր դէմ յարուցեց համարեա ամբողջ հայոց ինտելիգենցիային, բայց վերջ ի վերջոյ հակառակորդները խոնարհվեցին և յաղթութիւնը մնաց «Մշակի» կողմը, և այսօր ամբողջ հայոց մամուլը կրկնում է ինտելիգենցիայի վերաբերմամբ այն բառացի մտքերը, որոնց համար մի ժամանակ Արծ-

բունուն քիչ էր մնում խաչ հանէին հայոց լուսաւորված ուսումնականները...

Ընտանիքի վերանորոգութեան խնդիրը Արծրունու գրչին և ուղեղին մեծ հոգսեր է պատճառել երկար տարիների ընթացքում։ Նա պաշտպան հանդիսացաւ ընտանիքի բոլոր անդամների՝ ծնողների և որդոց, կնոջ և մարդու՝ անհատական իրաւունքների՝ և այդ իրաւունքների հաւասարութեան, պաշտպանելով այն սկզբունքը, որ ամբողջ ընտանիքի երջանկութիւնը անդամների փոխադարձ համերաշխութեան մէջ է, և ոչ թէ մէկի տիրապետութեան և միւսի բռնութեան մէջ։ Բողոք յայտնվեց հին սերունդի՝ ծնողների բռնութեան դէմ, նոր սերունդի՝ որդոց արհամարված իրաւունքները պաշտպանելով։ Նա նպատակ դրեց ջախջախել այն հայեցակէտը, որ ունէին ծնողները դէպի որդին. «որովհետև դու իմ որդին ես, ուրեմն ինձանից լիմար ես, և ինձ պիտի հպատակվես»։ Պաշտպանելով հայ ընտանիքի մէջ ամենից մոռացված, ամենից ոտնակոխ եղած և ամենից թոյլ անդամին՝ կնոջը, Գրիգոր Արծրունին հանդէս բերեց մի այլ հարց, այն է՝

Կանանց հարցը։ Կինը Արևելքում ճնշված և արհամարված է։ Կինը Արևելքում իր ամուսնու հաւասար ընկերը չէ. աղջիկը՝ արևելեան հասկացողութեամբ՝ ծնողների համար նոյնպիսի գաւակ չէ, ինչպէս է տղայ-գաւակը։ Եւ ահա այդ սխալ և զզուելի հայեցակէտի շնորհով՝ հայ կինը ենթարկված է մի տեսակ տնային բանտարկութեան, դառնալով սեփական կամքից, սեփական ցանկութիւններից զուրկ մի արարած, մի ստրուկ, որին մարդու տեղ դնող չը կար, որի կրթութեան մասին մտածող և իրաւունքների պաշտպանող չը կար։ Վերջին 25 տարվայ ընթացքում հայ կինը մեծ քայլեր է արել դէպի առաջ։ Կանանց այդ առաջադիմութեան մէջ Գրիգոր Արծրունին կատարել է առաջին գերը։ Նա դեռ ուսանող ժամանակ սկսեց գրել կանանց իրաւունքների և հայ կնոջ բարձրագոյն ուսում տալու մասին, իսկ «Մշակը» հիմնելով՝

իր ուշադրութեան գլխաւոր առարկաներից մինը շինեց՝ հայ կնոջ առաջադիմութեան խնդիրը։ Կնոջ հարցը հայերի մէջ Արծրունին հիմնաւոր կերպով դրեց։ Որպէս զի կինը կարողանայ ազատ լինել տղամարդի լուծից, որպէս զի կինը կարողանայ անկախ դիրք բռնել, հարկաւոր է որ նա ինքը ընդունակ լինի աշխատելու, հարկաւոր է որ կնոջը աշխատանք ի միջոց տրվի, որովհետև միայն անկախ աշխատանքը կարող է միջոց տալ կնոջը իր սեփական ոտների վրա կանգնել, և տղամարդու հովանաւորութիւնից ազատ լինել։ Հիմնվելով այդ տեսակէտի վրա Արծրունին մի կողմից ջերմ պաշտպան հանդիսացաւ կանանց կրթութեան. նա ճանապարհ ցոյց տուեց հայ կնոջը դէպի բարձրագոյն կրթութեան դիմելու, իսկ միւս կողմից հրաւիրեց հայ օրիորդին, հայ ինտելիգենտ կնոջը ձեռնարկելու մի որ և է անկախ աշխատանքի, լինի նա բեմի վրա, մանկավարժական ասպարէզում, թէ մի այլ շրջանում։ Կանանց հարցի այդ համարձակ պրոպագանդան կատաղեցրեց հնապաշտ հայերին, սարսափեցրեց պառաւներին, ոտի կանգնեցրեց այն բոլոր մարդոց, որոնց կարծիքով կնոջ ասպարէզը «ննջարանը և խոհանոցն» է,—բայց այդ բորոր աղմուկները ոչինչ հետևանք չունեցան... Անցան տարիներ, և ահա այսօր մենք տեսնում ենք, որ հայ աղջիկը ոչ թէ միայն համարձակ դպրոց է գնում գիւղերում անգամ, այլ հայ օրիորդը նոյն իսկ Եվելյարիա, Ֆրանսիա, Պետերբուրգ և Մոսկվա է գնում՝ բարձրագոյն ուսում առնելու, որ հայ կինը սկսում է սեփական աշխատանքով ապրել, լինելով վարժուհի, դերասանուհի, հաշուապահ, գրադարանապետ։ Հայ կինը մինչև անգամ սկսեց գրել, նա սկսեց հասարակական գործունէութեան մէջ խառնվել, սկսեց հետաքրքրվել այն խնդիրներով, որոնք զբաղեցնում են ժամանակակից հայ երիտասարդութեան,—և այսպիսով փշրեց այն շղթաները, որոնք նրան դարերից ի վեր կաշկանդում էին, որոնք զրկում էին նրան անկախ լինելու, անկախ մտածելու և անհատական

իրաւունքներ ունենալու... Կանանց իրաւունքների հաւասարութեան, կանանց կրթութեան և անկախ աշխատանքի բազմաթիւ հակառակորդները՝ և դրա հետ միասին ամբողջ հին սերունդը յաղթվեցան, և Գրիգոր Արծրունին այդ հարցումն էլ յաղթանակը տարաւ...

Կանանց իրաւունքների հաւասարութեան հարցը պաշտպանելով, Գրիգոր Արծրունին ի հարկէ չէր կարող անտես առնել այն մի քանի քաղաքացիական-իրաւաբանական հանգամանքները, որոնց շնորհով կինը միշտ իր ամուսնու կամայականութեանն է ենթարկված, և ահա այդ հանգամանքները աչքի առաջ ունենալով նա հրապարակ բերեց՝

Ապահարզանի խնդիրը: Ապահարզանի նպատակը շատ պարզ և համակրելի է,—ազատել կնոջը մարդու սանձարձակ կամայականութիւններից և շնորհել նրան քաղաքացիական մի քանի իրաւունքներ։ Այդ խնդիրը սկզբում ահագին սարսափ գցեց. հակառակորդները հազարաւորներ էին։ Բայց Արծրունին չը վհատվեց. համոզված լինելով որ սկզբունքը արդար է, նա քաջութեամբ պաշտպանեց խնդիրը և տարիներ անցնելուց յետոյ այդ խնդրի հակառակորդների թիւը աւելի ու աւելի սահմանափակվեց և հարցը սկսեց համակրութեան արժանանալ։ Այժմ հասարակութիւնը ոչ թէ չի զայրանում կարդալով «Մշակի» գրածները ապահարզանի մասին, այլ մինչև իսկ շատ էլ համակրանքով է վերաբերվում։ Սկզբունքը արդէն համակրութեան է արժանացել, նա արդէն հայոց վիպագրութեան և թատերագրութեան նիւթ էլ է դարձել, և հարցը լուծված կը լինի՝ եթէ տեղի ունենան մի քանի իրաւաբանական-եկեղեցական ձևակերպութիւններ։ Այդ էլ եթէ այսօր չի լինում, վաղը անպատճառ կը լինի...

Ձգտելով ժողովրդի հասկացողութիւնների և կեանքի վերանորոգութեան գործին, անկարելի էր ի հարկէ ուշադրութիւն չը դարձնել այն հասարակական հիմնարկութիւնների վրա,

որոնց նշանակութիւնը մեծ է ժողովրդի ընդհանուր կրթութեան գործում։ Եւ ահա Գրիգոր Արծրունին կանգ առաւ այդ տեսակ հիմնարկութիւններից ամենազլխաւորի վրա, որ է՝

Դպրոցական խնդիրը։ 70-ական թուականներին Հայոց գոյութիւն ունեցող դպրոցների մէջ դեռ ևս տիրում էր խալիֆան, և շատ տեղ նոյն իսկ փալախան։ Սաղմոսը և քերականութիւնը ուսման գլխաւոր առարկաներն էին։ Օրիորդական դպրոցները միայն մի քանի քաղաքների սեփականութիւն էին։ Դպրոցների մէջ դեռ մուտք չէին գործել աշխարհաբար լեզուն և բնական գիտութիւնները։ Հայերի մէջ դեռ չէր կազմակերպվել ժողովրդական վարժարան։ իսկ վարժուհիներին ճրագով պէտք էր փնտրել։—Արծրունին իր գործունէութեան սկզբից արդէն պատերազմ սկսեց հին դպրոցի դէմ, սկսեց հալածել հին դպրոցի ներկայացուցիչներին՝ խալիֆայութիւնը ու այդ խալիֆայութեան տիրապետութեան գաղիսոնը՝ ճիպոտը, և դրա հետ միասին գրաբար լեզուն՝ իր բոլոր սաղմոսներով, նարեկներով և հոլովներով ու խոնարհումներով։ Նոր դպրոցը սկսեց կազմակերպվել... Եւ դեռ «Մշակի» գոյութեան առաջին տարին հաղորդելով մի որ և է նոր դպրոցի բացվելը՝ Արծրունին լուսաբանված կերպով բացատրում էր՝ «Հայերի մէջ այժմ ամեն մի դպրոցի բացվելը մի լաղթութիւն է խաւարի դէմ...»։ «Մշակը» պաշտպան հանդիսացաւ եւրոպական ամենայարմար մանկավարժների սիստեմներին և ուղղութեան, պաշտպանեց բնական գիտութիւնները դաստաուութեան առարկայ դարձնելը և դպրոցների մէջ անպայման աշխարհաբարը մտցնելը. անընդհատ արծարծեց օրիորդական դպրոցներ հիմնելու խնդիրը, և վերջապէս իր հովանաւորութեան ներքոյ առաւ ժողովրդական դպրոցի վարժապետներին, պաշտպանելով նոցա զանազան կամայականութիւնների դէմ, և միջոց տալով նոցա հրապարակ դուրս բերել իրանց ցաւերը։ Աղաները սանձահարվեցան, և ժողովրդի իրաւունք-

ները դպրոցների վրա սկսեցին մեծանալ... Հարիկաւոր համարելով ունենալ ժողովրդական լաւ ուսուցիչներ՝ «Մշակը» պաշտպանել է վարժապետանոցներ հիմնելու միտքը, անդադար քննադատելով Հայոց վարժապետանոցի՝ Ներսիսեան դպրոցի միակողմանի ուղղութիւնը և մինչև այժմ էլ անուղղելի պակասութիւնները... Ժողովրդական նոր դպրոցների այդ ջերմ պաշտպանութիւնը մի կողմից, իսկ միւս կողմից հին դպրոցների դէմ անխնայ յարձակմունքները, նպաստեցին այն բանին, որ մօտ 10 տարվայ ընթացքում Հայոց հին դպրոցի աւերակների վրա իր դրօշակը պարզեց նոր դպրոցը ոչ թէ միայն քաղաքներում, այլ և գիւղերում։ Տարիներից ի վեր Գրիգոր Արծրունին արծարծում է և տղաների ու աղջիկների համար արհեստագիտական դպրոցներ հիմնելու միտքը, որպէս զի՝ մանաւանդ չքաւոր դասակարգի զաւակները այդպիսի դպրոցներում՝ բացի գրագիտութիւնը՝ ուսանէին նոյնպէս և մի յարմար արհեստ, մի ձեռագործ... Այդ մտքի դէմ էլ շատերը ապստամբեցան, բայց, ինչպէս երևում է, տաղանդաւոր պուբլիցիստի միտքը մօտիկ ապագայում աջողութիւն կը գտնի, քանի որ այդ տեսակ դպրոցների տիպը արդէն կազմակերպվում է թէ եւրոպական զանազան երկրներում և թէ նոյն իսկ Ռուսաստանում, և մինչև իսկ վերջին ժամանակներս, ինչպէս ցոյց են տալիս տեղեկութիւնները, մեր ժողովուրդը սկսել է մտածել արհեստագիտական դպրոցների հիմնարկութեան մասին։

Եկեղեցու խնդիրը «Մշակի» բնաւորիչ հարցերից մէկն է եղել նրա գոյութեան սկզբից։ Համարելով եկեղեցին և հոգևորականութիւնը մի պահանջ տգէտ ժողովրդի համար, Գրիգոր Արծրունին, հէնց այն տեսակէտից, որ եկեղեցին կարողանայ ազդել ժողովրդի բարոյական կեանքի վրա, պահանջել է այդ հիմնարկութիւնը դարձնել համապատասխան ժամանակակից պահանջներին, պահանջել է վերանորոգել Հայոց եկեղեցին՝ մտցնելով եկեղեցու մէջ քրիստոնէական պարզու-

թիւն, պատրաստելով կրթված հոգևորականութիւն, լայնացնելով ժողովրդի իրաւունքները եկեղեցական ընտրողական գործերում, գրաբարի փոխարէն աշխարհաբարը ընդունելով եկեղեցու մէջ, և այլ այդպիսի վերանորոգութիւններ։ Աւետարանի իմաստը ժողովրդին ըմբռնելի դարձնելու համար, Արծրունին պահանջել է թարգմանել Աւետարանը աշխարհաբար. հոգևորականութիւնը իր կոչման արժանի դարձնելու համար՝ պահանջել է պատրաստել ժողովրդի պէտքերը հասկացող քահանաներ, թուլացնել կուսակրօն հոգևորականութիւնը, պարզաբանելով այն սկզբունքը, որ հոգևորականութիւնը եկեղեցու սպասաւորն է,—իսկ եկեղեցին ինքը ժողովրդը։ Վերջին քսան տարվայ ընթացքում մեր ժողովրդի հայեացքները դէպի եկեղեցին և հոգևորականութիւնը զգալի կերպով փոխվեցին և այդ փոփոխութեան ցանկալի պտուղները անկասկած մօտիկ ապագայում կը երևան...

Առանց դաստիարակութեան խորութեան խօսքը հայոց գրականութեան մէջ անմիջապէս կապված է Արծրունու անուան հետ։ Արծրունին եղաւ այլակրօն հայերին հալածելու ամենազօրեղ հակառակորդը, քարոզելով այն գաղափարը, որ ազգայնական պրինցիպի առաջ պէտք է խոնարհվի կրօնական համոզմունքների տարբերութեան խնդիրը։ Լուսաւորչական, կաթոլիկ և բողոքական հայերի մէջ համերաշխութիւն գցելու համար Արծրունին և «Մշակը» շատ դառն բոլէներ են տեսել... Երբ առաջին անգամ, այն միտքը լայնեց Արծրունին, որ կան կաթոլիկ հայեր և բողոքական հայեր, և նոյն իսկ մահմետական հայեր, շատերը համարում էին այդ մտքի հեղինակին, առ նուազն՝ խելացնոր։—Ընբռան ծաղրեցին, հայհոյեցին, նրա դէմ ինտրիգաներ լարեցին։ Բայց այժմ արդէն լաղթութիւնը տարված է, քանի որ նոյն իսկ նոքա, որոնք չէին էլ ուզում լսել թէ կաթոլիկ դաստիարակութեան պատկանող հայն էլ հայ է, որոնք ծաղրում էին թէ կան մահմետական հայեր, այժմ խոնարհվել են այդ մտքի ա-

ռաջ, և այլազգաւան հայերը արդէն միմեանց հաշտութեան ձեռք են կարկառում, խոնարհվելով աւելի մեծ գաղափարների առաջ, քան թէ կրօնական խնդիրն է... Երբ ապագայ սերունդը կը թերթի մեր պատմութիւնը, անկասկած կը սարսափի, տեսնելով որ XIX դարու վերջերին կար հայոց մէջ մի մամուլ, որը չէր հասկանում խղճի ազատութեան գաղափարը. ապագայ սերունդը կը ուզենայ թքել այդ տեսակ մամուլի ներկայացուցիչների երեսին, բայց այդ ողորմելիները արդէն փտած կը լինեն գերեզմանների խորքերում...

Յանուն ազգայնութեան պրինցիպի կրօնական համերաշխութիւն քարոզելով, Գրիգոր Արծրունին՝ յանուն աւելի բարձր պրինցիպների՝ եռանգուն կերպով արծարծեց մի աւելի մեծ խնդիր, այն է՝

Ազգերի համերաշխութեան խնդիրը: Հայ ժողովրդի հետ խառն ապրում են զանազան ազգեր՝ վրացիք, թուրքեր, պարսիկներ և այլն։ Այդ բոլոր ազգերը միմեանց հետ անբաժան կապված են տնտեսական, քաղաքական և այլ շահերով։ Մինչև «Մշակը» հայոց մամուլը չէր էլ ուզում լսել հայերի և հարևան ազգերի համերաշխութեան մասին։ Ազգային նեղ հայեցակէտը թոյլ չէր տալիս մարդոց մի քիչ աւելի հեռու տեսնել։ Արծրունին հարցը ուրիշ կերպ դրեց։ Հայի կեանքի հետ միասին «Մշակը» սկսեց ուսումնասիրել և վրացու, և թուրքի, և պարսկի կեանքը։ Հիմնվելով այն ճշմարիտ հայեացքի վրա, որ հայը չի կարող ապահով լինել, եթէ իր հարևան թուրքը աւազակ է, որ հայը չի կարող քաղաքակրթվել, եթէ նրա անբաժան դրացի վրացին կը մնայ տգիտութեան մէջ, որ երկիրը չի կարող առաջադիմել, եթէ երկրի մէջ ապրող այս և այն ազգերը կը մնան կրօնական ֆանատիկոսութեան և տգիտութեան մէջ խորասուզված, Արծրունին ոչ թէ միայն քարոզել է որ հայի հետ միասին պէտք է քաղաքակրթվի և թուրքը, և պարսիկը, և վրացին, այլ մինչև անգամ պահանջել է, որ հայոց դպրոցը իր դռները բաց պահի և թուրք, և պարսիկ երեխայի հա-

մար, որ Հայոց ինտելիգենտ երիտասարդութիւնը իր գործունէութիւնը տարածի և դուցա վրա։

«Հայը պէտք է աշխատի որ իր դրացին խաւար մնայ, որպէս զի ինքը աւելի զօրեղ լինի»—ասում էր տարիներ առաջ Հայոց մամուլի տիրացուական կուսակցութիւնը, բայց այդ անմիտ հայեացքը այժմ արդէն ջախջախված է, և ներկայումս ոչ ոք չի յանդգնի մի ծպտուն անգամ հանել այն գաղափարի դէմ, որի անունն է ազգերի համերաշխութիւն...

Զգալով վերանորոգել Հայ ժողովրդի բարոյական կեանքը և նրա դարաւոր ընտանեկան, հասարակական և կրօնական հասկացողութիւնները, Գրիգոր Արծրունին ի հարկէ չէր կարող անտես առնել մի շատ մեծ խնդիր, որ վճռական նշանակութիւն ունի ամբողջ ժողովրդի համար, այն է՝

Տնտեսական խնդիրը։ Հայոց գրականութեան և մամուլի մէջ տնտեսական ընդհանուր խնդիրների լուրջ ուսումնասիրողը եղել է «Մշակը»։ Մինչև այդ լրագիրը Հայոց մամուլի համար չը կար տնտեսական խնդիր, ժողովրդի տնտեսական կեանք։ Ականջ դնելով մեր գրողներին, կը կարծէիք թէ Հայ մարդը ոչ հաց է ուտում, ոչ հարկ է վճարում, ոչ հող է ցանում, և ոչ էլ մի որ և իցէ աշխատանք է կատարում, այլ նրա գործը միայն եկեղեցի գնալ, տէրտէրին աջհամբոյր տալ ու աղօթելն է... Գրիգոր Արծրունին տնտեսական խնդիրը ընդհանրապէս և Հայ ժողովրդի տնտեսական կեանքը մասնաւորապէս հրապարակի վրա դրեց, հետևելով իր ուղղութեան մէջ քաղաքատնտեսական ամենանոր գաղափարներին—Արծրունին պաշտպանեց համամարդկան հողատիրութիւնը և մանր արդիւնաբերութեան սիստեմը։ Նա ջերմ կերպով արծարծեց այն հարցը, որ պէտք է մշակել երկրի բնական հարստութիւնները։ Նա պաշտպան հանդիսացաւ մշակ՝ բանող դասին։ Նա սիրտ տուեց ազքատ գիւղացուն և արհեստաւորին վաշխառուի դէմ։ Արծարծեց փոխատու արկղներ, գիւղական բանկեր, գիւղական շտեմարաններ, և էժանագին կրեդիտ

հաստատելու հարցերը, և այդ բոլոր հարցերն էլ, որոնք մի ժամանակ ցնորք էին համարվում, այժմ արդէն սկսել են իրականանալ և մի քանիսը տնտեսական խնդիրների մէջ հերթական հարց են դարձել։ Իսկ ամբողջ հայոց մամուլը և գրականութիւնը, որ մի ժամանակ հեգնութեամբ էր նայում տընտեսական խնդիրների վրա, այժմ արդէն ստիպված է առաջնակարգ նշանակութիւն տալ նրան... Տնտեսական հարցերի շարքի մէջ պանդխտութեան և գաղթականութեան հարցերը «Մշակի» էջերում ուսումնասիրութեան նիւթ են դարձել՝ ստիպելով նոյն իսկ հայոց վիպագրութեանը զբաղվել այդ կենսական հարցերով,—ցոյց տալու համար որ թէ գաղթականութիւնը և թէ պանդխտութիւնը ժողովրդի զարգացման գործը խախտում են։

Սկսելով ընտանեկան շրջանից, ապա անցնելով հասարակական խնդիրներին, Գրիգոր Արծրունին փոքր առ փոքր լայնացրեց իր ձեռք առած հարցերի շրջանը, և գլխաւորապէս 1876 թուականից «Մշակի» և իր ոյժերի մեծ մասը նուիրեց մի երկրի, որ մոռացութեան էր տուած, այն է՝

Թիւրքաց Հայաստանը։ Թիւրքահայերի դրութեան ուսումնասիրութիւրը «Մշակի» հոգսերի գլխաւոր առարկան է եղել տարիներից ի վեր։ Այդ հարցով զբաղվել է Գրիգոր Արծրունին «Մշակի» էջերից դուրս էլ։ Այդ հարցին նուիրվել են Գրիգոր Արծրունու հետ միասին՝ «Մշակի» էջերում թէ Բաֆֆին և թէ «Մշակի» աշխատակիցներից շատերը։ Մինչև «Մշակը» Թիւրքաց Հայաստանը և նոյն իսկ Պարսկա-Հայաստանը terra incognita էր ռուսահայոց մամուլի համար։ Ոչ ոք չը գիտէր թէ ինչ է կատարվում այդ երկրներում։ Իսկ այժմ հայ հասարակութեանը բաւական ծանօթ է Թիւրքաց Հայաստանը, մեզ համար այժմ վարագոյրով չէ ծածկված Թիւրքիայի հայը. հայ երիտասարդութիւնը այժմ իր համար որոշ գաղափար ունի կազմած Թիւրքաց Հայաստանի մասին։ Դա «Մշակի» և Գրիգոր Արծրունու մեծ գործերից մէկն է, որի համար, թէ նը-

բան և թէ այդ հարցում նրան աջակցող հանգուցեալ Բաֆ-ֆիին երկար ժամանակ «անշարժութեան հերոսները» հալածում, ծաղրում և հայհոյում էին։ Բայց յաղթութիւնը էլի «Մշակի» կողմը մնաց, և այն ինչ, որ երեկ երազ էր համարվում, վաղը անկասկած կիրագործվի...

Զբաղվելով թիւրքաց Հայաստանով Գրիգոր Արծրունին անխնայ քննադատութեան ենթարկեց Կ.-Պոլսի ինտելիգենցիային, Կ.-Պոլսի հայոց գրականութիւնը և Ազգային ժողովը, որոնք իրանց կոչված են համարում գործելու թիւրքահայերի համար։ Գրիգոր Արծրունին առաջինն էր, որ ցոյց տուեց, թէ Պոլսի մամուլը և գրականութիւնը միանգամայն սխալ ընթացք են բռնել, և փոխանակ բուն հայրենիքով զբաղվելու, իրանց ամբողջ ուշ ու միտքը տուել են ֆրանսիական «գրական խոհանոցի» արտադրութիւններին։ Նա առաջինն էր՝ որ կատաղի կերպով հալածական արաւ Պոլսի ֆրազեոր ինտելիգենցիային՝ նրա վերացական ուղղութեան համար. առաջինն էր, որ սկսեց ցոյց տալ թէ՝ «Կ.-Պոլիսը մի ֆրազա է, իսկ իրողութիւնը Հայաստանը», թէ ազգային ժողովը ինքնախաբէութեամբ է զբաղված. պահանջեց, որ այդ ազգային ժողովը պէտք է տեղափոխվի բուն Հայաստանի քաղաքներից մէկը, եթէ ուզում է գործել ժողովրդի համար։ Այդ մտքի դէմ մի ժանանակ անասելի աղմուկ հանեցին, բայց վերջը ենթարկվեցին, և այսօր այդ մտքերը այնքան տարբացել են, որ ամեն մի տեղից վերկացող ծաղրում է Կ.-Պոլսի ինտելիգենցիան, գրականութեան և մամուլի ուղղութիւնը, և չի էլ հաւատում, որ ազգային ժողովը այժմեան ընթացքով մի առանձին բան կարողանայ շինել։

Գրիգոր Արծրունին կատարեալ իրաւունք ունի պարծենալու իր տարած յաղթութեամբ և այդ հարցում։

Նոշափելով մինչև այժմ լիշատակած այս հիմնական խնդիրները, ինչպէս են՝ լեզուի, ընտանիքի, կանանց, դպրոցական, եկեղեցու վերանորոգութեան, կրօնական, ազգայնութեան, տնտեսական խնդիրները և թիւրքաց Հայաստանի հարցը՝ շատ

անգամ կատաղի կռիւ մղելով իր մտքերի համար, և առաջ բերելով ահագին աղմուկներ զանազան շրջաններում, իր վերանորոգչական փշոտ շաւղի վրա Գրիգոր Արծրունին ոգեւորվել է մի այլ համոզմունքով։ Դա Արծրունու փայփայած այն համոզմունքն է, որ հայ ժողովուրդը և հայոց լեզուն մեծ դեր ունին կատարելու Փոքր-Ասիայում, դառնալով եւրոպական քաղաքակրթութեան և առաջադէմ գաղափարների տարածողներ մահմետական ազգերի մէջ, լինելով միջնորդ։ Եւրոպական կուլտուրան Ասիայում տարածելու համար։ Մենք, հայոց ինտելիգենտ երիտասարդութեան հետ միասին հաւատում ենք այդ մեծ գաղափարին...

Խօսելով Գրիգոր Արծրունու վրա՝ իբրև վերանորոգողի վրա, այժմ էլ մի հարեւանցի ակնարկ գցենք նրա վրա, իբրև հրապարակախօս-խմբագրի վրա։

Գրիգոր Արծրունին իբրև հրապարակախօս և խմբագիր ստեղծեց հայոց մէջ քաղաքական մամուլ։ «Մշակը» դրան ապացոյց։ «Մշակից» յետոյ հայերի մէջ լոյս տեսան շատ հրատարակութիւններ, և դրանց բոլորի վրա «Մշակի» ազդեցութեան նշանները պարզ երևում էին։ Իր գոյութեան ընթացքում «Մշակը» արտացոլացրել է հայոց ամբողջ կեանքը իր լաւ և վատ կողմերով։ Իբրև խմբագիր՝ Արծրունին մօտ քսան տարի է արդէն արծի նման սաւառնել է հայոց կեանքի վրա, և այսքան ժամանակամիջոցում ոչ մի ընթացիկ երևոյթ խոյս չի տուել նրա սրատես տեսողութիւնից.—«Մշակը» թափանցեց հայոց կեանքի բոլոր խաւերը։

Հետևելով ընթացիկ կեանքին՝ Արծրունին անդադար նորանոր խնդիրներ է յարուցել,—թատրոնական հարցը, կիրակնօրեայ դպրոցների հարցը, Կովկասում համալսարան հիմնելու, ժողովրդական դասախօսութիւնների և գրադարանների հարցը, գաւառական լրագիրներ հրատարակելու, կլասիքական և բէա-

լական ուսման հարցը, քաղաքային ինքնավարութեան, ընկերութիւնների հարցը, ժողովրդի կեանքի ուսումնասիրութեան, գիւղական բժիշկների, ժողովրդական գրականութեան, ընտրողական իրաւունքների և այլ այդպիսի տասնաւոր հարցեր զբաղեցրել են թէ Արծրունուն և թէ ամբողջ «Մշակին»։ Եւ այդ բոլոր հարցերի վրա «Մշակը» նայել է ազատամիտ, առաջադիմական շինչալի տեսակէտից։ Հայոց հասարակութեան լաւ յայտնի է, թէ այդ բոլոր հարցերում «Մշակը» ինչ դիրք է բռնել։

Աչքից բաց չը թողնելով հայոց՝ և հայերի հետ միասին ապրող ժողովրդի կեանքի ընթացիկ, առօրեայ հարցերը, Արծրունին մի և նոյն ժամանակ «Մշակի» հետ միասին՝ հետեւել է Ռուսաստանի և եւրոպական գրականութեան և հասարակական-քաղաքական կեանքի մէջ տեղի ունեցող նշանաւոր երեւոյթներին, հաղորդելով հայ ժողովրդին այդ երեւոյթները, և պարզաբանելով դրանց։ Այդպիսով «Մշակը» իբրև մի քաղաքական-գրական լրագիր, իր գոյութեան ընթացքում միշտ կարողացել է հայ ժողովրդի աչքը յառած պահել դէպի եւրոպական լաւ գաղափարները, և ընդհանրապէս դէպի եւրոպական քաղաքակրթութիւնը, որի առաջ նա հայոց կեանքում հարթել է մի լայն ճանապարհ։

Մեր բոլոր գրողների մէջ՝ Գրիգոր Արծրունին անսպասման առաջին տեղն է բռնում՝ իբրև եւրոպական կուլտուրայի տարածող։

«Մշակը» կարելի է համարել հայկական մտքի արտայայտիչ, հայոց մտաւոր կեանքի շտեմարան։ Իր գոյութեան օրից սկսած՝ այդ լրագիրը դէպի ինքը գրաւեց այն բոլոր մարդկանց, որոնք կարող էին գրել։ Ամեն մարդ, թէ փոքր ի շատէ նշանաւոր գրող, և թէ նոյն իսկ շատ այնպիսիները, որոնք հազիւ էին կարողանում հայերէն գրել, իրանց համար բաղդ էին համարում գէթ մի անգամ մի բան գրել «Մշակի» մէջ։

Եւ ով ասէք, որ չի գրել «Մշակի» էջերում։ Հայոց հա-

մարեա բոլոր՝ թէ մեծ և թէ փոքր գրողները, նախ «Մշակի» միջով են անցել։

«Մշակի» աշխատակիցներից շատերը հաւատարիմ մնացին նրան մինչև այժմ էլ. շատերն էլ հեռացան լրագրից, և դրանց մէջ եղան նոյն իսկ այնպիսիները, որոնք անցան հակառակ բանակները։ Ոմանք էլ, «Մշակից» հեռանալով անյայտութեան մէջ ընկան և ոչինչ մտաւոր բան չարդիւնաբերեցին։

Հէնց այժմ էլ հայոց մամուլի և գրականութեան մէջ գործողները մեծ մասամբ սկզբում գործել են «Մշակի» մէջ։ Այժմեան հայոց հրատարակութիւններից շատերի նոյն իսկ խմբագիրները «Մշակի» աշխատակիցներից են.—Արփիար Արփիարեան, որ այժմ խմբագրում է «Արևելք» և «Մասիս» օրագիրները՝ «Մշակի» աշխատակիցն է. Մկրտիչ Փորթուգալեան, որ հիմնել է առանձին օրգան, «Մշակի» աշխատակիցն է եղել. Աւետիք Արասխանեան, որ խմբագրում է „Մուրճ“ ամսագիրը՝ նոյնպէս „Մշակի“ աշխատակիցն է եղել. „Աղբիւրի“ խմբագիր Տ. Նազարեան՝ առաջին անգամ «Մշակի» մէջ է սկսել գրել. նախկին «Առողջապահական թերթի» խմբագիր Լևոն Տիգրանեան ևս «Մշակի» աշխատակից էր։ «Մշակի» մէջ են սկսել իրանց գրական գործունէութիւնը և Արգար Յովհաննիսեան, և Թիֆլիզի ուրիշ լրագիրների խմբագիրները և շատ աշխատակիցները։

Մասնակցել տալով իր մէջ հայոց համարեա ամբողջ մըտաւոր ոյժերը, և մի և նոյն ժամանակ կապվելով ժողովրդի համար կենսական խնդիրների հետ, «Մշակը» կարողացաւ տարիների ընթացքում կազմել իր համար մի զօրեղ կուսակցութիւն, որը հիմնված է ոչ թէ անձնական շահերի և ծանօթութեան վրա, այլ այն գաղափարների վրա, որոնք կազմում են «Մշակի» ոյժը։

«Մշակի» կուսակցութիւնը գաղափարի կուսակցութիւն է, և այդ կուսակցութեան անդամներին միմեանց միացնողը գաղափարը և մտքերի համերաշխութիւնն է։

VIII.

ՄԻ ՔԱՆԻ ԳԾԵՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԿԵԱՆՔԻՑ

Գրիգոր Արծրունին սկզբունքի մարդ է։ Նա ունի որոշ սկզբունքներ, և իր՝ թէ հասարակական և թէ զրական կեանքի և թէ նոյն իսկ մասնաւոր կեանքի մէջ ղեկավարվում է այդ սկզբունքներով։ Ինչ որ հակառակ է այդ սկզբունքներին, հակառակ է նոյն իսկ Արծրունուն։ Սկզբունքը զոհել անձնաւորութեան, Արծրունու յատկութիւնը չէ, բայց անձնաւորութիւնը զոհել սկզբունքին.—Արծրունու յատկանիշն է։ Իր սկզբունքներին հաւատարիմ մնալով նա ոչինչ զիջողութիւն չէ անում, և ահա այդ է եղել պատճառ, որ շատերը «Մշակի» մէջ գրողներից և աշխատակիցներից հեռացել են նրանից և դարձել են «Մշակի» թշնամի։ Եղել են դէպքեր, որ Արծրունին իր սկզբունքներին հաստատ մնալու համար զոհել է նոյն իսկ հարազատ հօրը... Թիֆլիզում շատերին այդպիսի փաստեր յայտնի են... Դէպի իր գաղափարները, ունեցած հաւատը և հաստատամտութիւնը Արծրունու մէջ հանում է կրքի աստիճանին։ Արծրունու մասին ասում են, որ նա կրքոտ է։ Ճիշտ է։ Բայց Արծրունու կիրքը գլխի մէջն է և ոչ սրտի։ Եւ եթէ երջանիկ կը լիներ հայոց գրականութիւնը, եթէ նրա մէջ գործողներից իւրաքանչիւրը փոխանակ իր համոզմունքները շատկի նման փոխելու, կրքի աստիճանին հասցրած հաստատամտութեամբ պաշտպաներ նրանց։ Կիրքը վտանգաւոր, վնասակար չէ, երբ բղխում է սկզբունքներից, և երբ գործողը ազնիւ դիտումներ ունի։

Իսկ Արծրունին անպայման ազնիւ մարդ է։ Այդ խոստովանվում են նոյն իսկ նրա գաղափարների թշնամիները։ Նրա սիրտը, ինչպէս ասում են, լեզուի վրա է։

Մենք շատ անգամ վկայ ենք եղել, թէ ինչպէս այդ մարդը վրդովվում և ապշում է, երբ տեսնում է, որ նոյն իսկ հասարակական և գրական ասպարիզի վրա գործողները անդադար սուտ են խօսում հասարակութեան առաջ, անդադար կեղծում և խաբում են...

—Ես չեմ հասկանում, թէ ինչպէս կարելի է սուտ ասել և կեղծել.—ահա այն խօսքերը, որ շատ անգամ լսել ենք Արծրունու բերանից։

Գրիգոր Արծրունին չը նայած իր արիստոկրատիական ծագման, դեմոկրատի հակումներ ունի։ Առաջ կը բերենք ուշադրութեան արժանի մի դէպք։

1876 թուին, վրաց «Դրօեբա» լրագրի տասնամեակի առիթով տուած ճաշի ժամանակ Գրիգոր Արծրունին դառնանով «Դրօեբայի» խմբագիր Մեսխիին, ասաց հետևեալ խօսքերը, որ առաջ ենք բերում այդ լրագրից.

«Որպէս հայոց լրագրութեան ներկայացուցիչ, ես կասեմ մի քանի խօսք հայերէն լեզուով։ Եւրոպայում լրագրութիւնը շահաւէտ մի գործ է, իսկ մեզանում ոչ թէ միայն նիւթական կողմից վնաս տուող մի ձեռնարկութիւն է, բայց մեզանում նա կապված է լինում անթիւ զրկանքների և արգելքների հետ։ Այդ հանգամանքը յայտնի է միայն նրանց, որոնք իրանք յանձն առան այդ գործը առաջ տանելու, այդ հանգամանքը լաւ յայտնի է և իմ բարեկամ Ս. Մեսխիին, որ իր լրագրի աջողութեամբ պարծանք է ոչ թէ միայն իր խելքին և ընդունակութեանը, բայց և այն հանգամանքին, որ նա լաւ հասկացել է հասարակութեան բարոյական ցաւերը և տանջանքները՝ ինքն սովորած լինելով զրկանքների և տանջվելուն։ Զարմանալի է որ ունևոր մարդկանց երբէք վիճակված չէ առաջ տանել մտքի պրօպագանդայի գործը, բայց այդ վիճակված է միշտ աղքատ մարդկանց։ Ես կը վերջացնեմ իմ խօսքերը մի ցանկութիւն յայտնելով, որ թէև ձեզ կերևայ գուցէ անտեղի,

բայց որ ես համարում եմ ճշմարիտ և արդար՝ ես ցանկանում եմ ձեզ, իմ բարեկամ, միշտ տանջվելու, որ միշտ հասկանաք, ինքներդ զգաք հասարակության բարոյական ցաւերը և նրա բարոյական տանջանքները։»

Մարդկանց հետ բարեկամութիւն անելիս, Արծրունին չի նայում, թէ ինչ դիրքի և պաշտօնի մարդ է։ Նա սիրով ընդունում է իր մօտ իրան բոլորովին անյայտ մարդկանց անգամ, և պէտք է ասել, իր այդ յատկութեան շնորհիւն է, որ նա կարողացել է անյայտ մարդկանց մէջ գտնել լաւ այժեր, գրական տաղանդներ, որոնց և սիրտ տալով և ոգևորելով, բարձր դիրքի է հասցրել...

Վերին աստիճանի ազդող բնաւորութիւն ունի Արծրունին։ Նա այն տեսակ մարդկանցից է, որոնց համար ասում են. «եթէ մի անգամ տեսար, էլ չես մոռանալ»։ Ինչ ընկերութեան և ինչ հասարակութեան մէջ էլ լինի, իր ազդու խօսքով կարողանում է իր վրա դարձնել ամենքի ուշադրութիւնը, կարողանում է իրան լսել տալ։ Երբ նա ոգևորված խօսում է, նրան չի կարելի չը լսել։ Նրա խօսքի մէջ արտափայլում է համոզմունք, գիտութիւն և անկեղծ հաւատ։

Դաղափարակից մարդոց հետ Արծրունին շատ է մտերմանում, բայց եթէ մէկի հետ թշնամացաւ, այլ ևս սիրել, մտերմանալ չի կարող։ Այսօր թշնամանալ, վաղը բարեկամանալ,—նրա բնաւորութիւնից դուրս է։

Արծրունու համար համարձակ կարելի է ասել. «որտեղ էլ լինի, միշտ պատիւ կը բերի հայ անուան»։ Եւրոպական ճանապարհորդներ և թղթակիցներ Թիֆլիզ գալով միշտ պարտաւորութիւն են համարում տեսնվել այդ մեծանուն հայ գործողի հետ, և հեռանալով տանում են իրանց հետ ամենագեղեցիկ տպաւորութիւններ... 1889 թ-ին Պարիզ գնալով, որ «գրողների կոնգրէսին» մի զեկուցում արաւ և մի ճառ կարդաց հայոց մտաւոր շարժման և քաղաքակրթական ձգտումների մասին,

Գրիգոր Արծրունին կարողացաւ տեսնվել շատ նշանաւոր անձանց հետ, և իր թողած տպաւորութեամբ արդարացրեց իր վրա դրած յոյսերը...

Ի դէպ. առաջ ենք բերում պ. Արծրունու՝ կոնգրէսի վերջին նիստին ասած ճառը.

«Ես արդէն պատիւ ունեցայ, պ. նախագահ, ներկայացնել ժողովին իմ կարճ զեկուցումս ռուսահայոց արդեան գրականութեան մասին, որը և տպագրվեց. այժմ թոյլ տուեցէք ինձ, ժողովի վճռման բոպէին, աւելացնել այդ զեկուցմանը հետևեալ խօսքերը։ Մի հայ հրապարակախօս-գրողի ներկայութիւնը ձեր շրջանում ապացոյց է, մի կողմից, այն համակրութեան, որը միշտ ունեցել են հայերը դէպի եւրոպական ամեն տեսակ մտաւոր շարժում, իսկ միւս կողմից ապացոյց է ձեր համակրութեան դէպի հայերը։ Ես արդէն պատիւ ունեցայ ասել իմ կարճ զեկուցման մէջ, որը ներկայացրել եմ կոնգրէսի երրորդ յանձնաժողովին, որ ինչպէս չորրորդ դարում հայերը միակ արևելեան ազգութիւնն էին, որը խելք ունեցաւ քրիստոնէութիւնն ընդունելու, այնպէս և տասն և իններորդ դարում դրանք միակ ազգութիւնն են ամբողջ Ասիայում, որը իր բազմաթիւ դպրոցներով, իր նորահաս գրականութեամբ, իր ազգային թատրոնով, եւրոպական նշանաւոր գրուածների իր բազմաթիւ թարգմանութիւններով, խելք ունեցաւ հասկանալու եւրոպական քաղաքակրթութեան յարվելու, այդ քաղաքակրթութեան մասնակցելու անհրաժեշտութիւնը։ Այժմ կովկասեան հայերի մի մեծ խմբի անունից, նմանապէս հայոց մամուլի մի օրգանի անունից, որը ես ինքս հիմնեցի և զեկավարում եմ 17 տարի շարունակ, ես պատիւ ունեցայ գալ իմ հեռաւոր երկրից, որպէս զի ողջունեմ գրողների միջազգային կոնգրէսը, որը գումարված է համակրելի Պարիզում, Ֆրանսիայի համակրելի նախաձեռնութեամբ և որին նախագահում է մի հռչակաւոր մարդ, որը ոչ թէ միայն Ֆրանսիայում, ոչ թէ միայն միջազգային եւրոպական գրականութեան մէջ, այլ և մեզ մօտ, հեռաւոր Ասիայում՝ կրում է մի փառաւոր անուն։ Դուք ինձ պատիւ տուեցիք, պարոններ, մասնակցել տալով ինձ կոնգրէսի աշխատանքներում և այժմ, երբ կոնգրէսը փակվելու վրա է, ես կը վերադառնամ հայրենիքս, հետս տանելով ամենագեղեցիկ յիշողութիւններ Ֆրան-

սական հիւրասիրութեան մասին, հետս տանելով և այն համոզմունքը, որ դուք անուշադիր չէք դէպի հայոց գրականութիւնն ու հայերի մտաւոր շարժումը և ես թոյլ եմ տալիս ինձ ամենաջերմ տենչանքներս յայտնել, որ Փլանսիական հանճարը, միացած միջազգային գիտութեան և գրականութեան ամենալաւ ոյժերի հետ՝ մեզ միշտ ղեկավարէ, միշտ փայլէ մեզ համար որպէս մի ղեկավարող, մի լուսատու փարոս։ Իմ համակրութիւնս և զգացմունքներս յայտնելուց յետոյ, չեմ կարող ձեզ չը յայտնել և ընկերակիցներիս, կոնգրէսի օտարազգի անդամների կողմից նոյն համակրութեան զգացմունքները։ Կոնգրէսում ներկայ գտնվող օտարազգի անդամների անունից էլ ներկայացնում եմ ձեզ մեր բոլորիս երախտագիտութեան զգացմունքը ձեր հիւրասիրութեան համար և նրանց անունից էլ ամենաջերմ ցանկութիւններ եմ յայտնում մեր ապագայ կոնգրէսների աջողութեան համար»։

Իբրև գրող՝ Արծրունին վերին աստիճանի բեղմնաւոր է։ 25 տարի է այդ մարդը գրում է, բայց և այնպէս նրա գրիչը չի կորցրել արդիւնաբերելու ոյժը և ընդունակութիւնը։ Նրա արտասովոր ընդունակութեանը պէտք է վերագրել այն հանգամանքը, որ նա գործելով ամբողջ քառորդ դար գրական ասպարիզի վրա, այժմ մի մազի չափ անգամ չի շեղվել իր հիմնական այն գաղափարներից, որոնց նա դաւանում էր իր գործունէութեան սկզբում։ Նրա մէջ մտքի և գաղափարների թարմութիւնը չի կորել։ Ներկայումս, գրականութեան մէջ տիրող ընդհանուր ռեակցիայի պատճառով Արծրունին նման է այն գինուորին, որ զէնքը վայր դրած սպասում է... բայց դրա հետ միասին շարունակում է պինդ գրկած պահել իր գաղափարները։ Գուցէ տարիներ անցնելուց յետոյ, երբ տաղանդաւոր վերանորոգչի ֆիզիքական ոյժերը կը սպառվին, երբ ապիտակ մազերով կը ծածկվի նրա գլուխը, այն ժամանակ հաւնականաբար նա այնքան բեղմնաւոր չի լինիլ, որքան այժմ, կամ որքան մանաւանդ առաջ էր, բայց մենք հաւատացած ենք, որ նա երբէք չի կորցնի իր գաղափարների թարմութիւնը, երբէք յետ չի կանգնի երիտա-

սարդ հասակում դաւանած իր գաղափարներից, երբէք առաջադէմ-մտածողից պահպանողական-մտածող չի դառնայ։

Դա կը լինի նրա տաղանդի և արտասովոր ընդունակութիւնների ամենամեծ ապացոյցը...

Մինչև այժմ էլ Արծրունին մեր գրականութեան մէջ առաջնակարգ, ամենաազդու դեր է կատարում։ 25 տարվայ ընթացքում հայոց մտաւոր ասպարիզի վրա դուրս չեկաւ մի պուբլիցիստ-գրող, որ կարողանար գերազանցել «Մշակի» խմբագրին, կարողանար նսեմացնել նրա անունը։ Նրա կարծիքը ղեկավարող նշանակութիւն ունի.—տեղի է ունենում, դիցուք, Կ.-Պոլսում մի դէպք, ամենքը ասասում են, թէ ինչ կասի Արծրունին. թիւրքաց Հայաստանի մասին մի որ և է լուր է պտրտում,—ամենքը ասասում են, թէ ինչ կասի Արծրունին. հարարական մի խնդիր է առաջ գալիս,—ամենքը ասասում են Արծրունու կարծիքին. գրվում է մի նոր պիէս. ամենքը ասում են՝ «տեսնենք վաղը ինչ կասի Արծրունին»։ Եւ այդ նոյնը կրկնվում է շատ տեսակ խնդիրների վերաբերութեամբ։

Գրիգոր Արծրունին իր 25 տարվայ գործունէութեան ընթացքում «Մշակի» հետ միասին, շատ հալածանքներ է կրել։ Նրա դէմ ինտրիգաներ են լարել, նրա դէմ հալածանք են յարուցել ոչ թէ մասնաւոր անձինք, այլ ամբողջ դասակարգեր և հիմնարկութիւններ.—բայց այդ մարդը, մի արտասովոր տոկունութեամբ դիմադրել է այդ բոլոր հալածանքներին և ինտրիգաներին. նա շատ անգամ իր հակառակորդներին մահացու հարուած է տուել. և այդ բոլորը այն բանի շնորհով, որ համոզված է եղել, թէ իր խիղճը մաքուր է, իսկ իր պաշտպանած գործը—սուրբ։ Անխարդախ գործունէութիւնը միշտ նրան միջոց է տուել համարձակ լինելու։

Երևելի Պրուդոն մի անգամ դիմելով իր հակառակորդներին ասաց. «ես կը պատմեմ ձեզ իմ ամբողջ կեանքը. մի առ մի կը նկարագրեմ իմ իւրաքանչիւր քայլը, և իմ ոչ մի արար-

քի համար չեմ կարմրիլ ոչ ոքի առաջ։ Բայց արդեօք կարող էք նոյնը անել և դուք...»

Այդ խօսքերը ամենայն իրաւամբ կարող է ասել Գրիգոր Արծրունին՝ դիմելով իր անցեալ և ներկայ հակառակորդներին... Եթէ պատահել է, որ Արծրունին իր գործունէութեան մէջ երբեմն-երբեմն սխալմունքներ է գործել, այդ էլ եղել է մեծ մասամբ անկեղծ ոգևորութեան արդիւնք միայն...

Պէտք է խոստովանել, որ հայոց կեանքի մէջ Գրիգոր Արծրունին մի առանձին բաղդ ունի։ Նա կռիւ է յայտնել շատ անգամ այնպիսի մտքերի և հաստատութիւնների դէմ, որոնք խաւար ժողովրդի համար սրբութեան կշիռ էին ստացել,—բայց և այնպէս նրան այսօր սիրում է ժողովուրդը, և նա մեծ ժողովրդականութիւն ունի բուն ժողովրդի մէջ։ Բուն ժողովուրդը սիրում է Արծրունուն, որովհետև այդ ժողովուրդն է, որ իր կաշուի վրա փորձում է այժմեան կարգերի ամբողջ ծանրութիւնը. նոյն Արծրունուն գործունէութեան միշտ համակրող է եղել հայոց երիտասարդութիւնը՝ իբրև անարատ և առաջադէմ մի տարր։ Արծրունու և «Մշակի» հակառակորդները եղել են՝ գրականութեան մէջ—գրական բուրժուազեան և խաւարի զաւակները, իսկ ժողովրդի մէջ—ժողովրդի աշխատանքով ապրողները...

Երջանիկ է Արծրունին, որ իր թշնամիները դոքա են. որովհետև դա ամենից մեծ ապացոյց է, թէ իր ուղղութիւնը համակրելի է, իսկ գաղափարները—օգտակար։

IX.

ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Մեր գրուածքը սկսեցինք այս խօսքերով. «Հայ ժողովրդի պատմութիւնը յիսուսական թուականներից սկսած մի նոր շրջանի մէջ է մտնում»։

Այդ շրջանը, որ կոչվում է վերածնութեան շրջան, մի բնաւորիչ յատկութիւն ունի.— այդ այն կռիւն է, որ նոր, առաջադիմական գաղափարները մղում են ամբողջ հին կեանքի դէմ, աշխատելով ոչնչացնել միջնադարեան կարգերը՝ նոցա տեղը նոր մտքեր, նոր վարդապետութիւններ հաստատելու համար։ Եւ ահա հայոց մտաւոր կեանքում կազմակերպվեցան երկու որոշ կուսակցութիւն—պահպանողական և առաջադիմական։

Սկզբում այդ կռւի երկու կողմերը միմեանց միանգամայն անհաւասար ոյժեր էին ներկայացնում. կռւողների մի կողմը ինքը կեանքն էր, իր ամբողջ կազմակերպութեամբ, իսկ հակառակ կողմը վերանորոգութեան մի քանի կարապետներ։

Հանդէս եկաւ «Հիւսիսափայլը», Նազարեանցով և Նալբանդեանցով՝ իբրև վերանորոգութեան կարապետ։ Բայց հին կեանքը և պահպանողական կուսակցութիւնը յաղթող հանդիսացաւ, և «Հիւսիսափայլը» ընկաւ՝ իբրև գաղափարի առաջին զոհ հայոց մամուլի պատմութեան մէջ։

Անցան տարիներ և առաջադիմական նոր և աւելի զօրեղ բանակ կազմեց Գրիգոր Արծրունին։ «Մշակը»—այդ բա-

նակն էր, Գրիգոր Արծրունին այդ բանակի ղեկավարը, իսկ Բաֆֆին բանակի աջ թևը։ Պահպանողական կուսակցութիւնը ամփոփվեց «Մեղու Հայաստանի» լրագրում, և ահա սկսվեց մի կատաղի կռիւ «Մեղուի» և «Մշակի» մէջ, որը տևեց մօտ քսան տարի... Սակայն այս անգամ յաղթութիւնը կատարելապէս առաջադիմական կուսակցութեան կողմը մնաց,—«Մեղուն» ջախջախվեց և դրա հետ միասին ամբողջ հին կուսակցութիւնը ասպարիզից անհետացաւ։

Դա ոչ թէ մի լրագրական յաղթութիւն էր, որ տարաւ «Մշակ» լրագիրը «Մեղու» լրագրի դէմ, այլ մի մեծ յաղթութիւն մեր ամբողջ կեանքի առաջադիմութեան համար, մի մեծ յաղթութիւն հին կեանքի, հին մտքերի դէմ։ Այլ ևս հայոց մտաւոր կեանքի մէջ չի կարող գոյութիւն ունենալ ոչ մի «Մեղու», որովհետև ժողովրդի այն վերքերը, որոնցից նա իր համար սնունդ էր ստանում, արդէն առողջանում են.... «Մեղուի» յաջորդները, լինի դա Նոր-Դար թէ Հին-Դար, որոնք իրանց գոյութիւնը պահպանում են՝ ծծելով ժողովրդի առողջացող վերքերից հոսող ժահրը,—այլ ևս համարձակութիւն չունեն բացարձակօրէն կրկնելու իրանց նախորդի մտքերը, և իրանց ողորմելի կեանքը շարունակելու համար, ստիպված են «հարկաւոր ժամանակը ազատամիտ լինել, հարկաւոր ժամանակը խաւարամիտ», և գրական բարձրութիւնից փողոցը իջնել...

Մենք բոլորովին տրամադրված չենք կարծելու, որ հայոց կեանքը այնքան առաջադիմել է, որ այլ ևս նրա մէջ չեն ապրիլ խաւարի որդիքը, որ այլ ևս չեն կարող առաջ գալ մեր առաջադիմութեան ամօթ բերող երևոյթներ.—ոչ. մենք այդքան էլ օպտիմիստ չենք։ Բայց և այնպէս, լոյսի նման պարզ է, որ մեր մտաւոր կեանքը մեծ առաջադիմութիւն է արել, և այդ առաջադիմութեան գօրեղ ապացոյցներից մէկը թող համարվի «Մշակի» և Գրիգոր Արծրունու գործունէութիւնը և գործունէութեան յաղթանակը...

«Մշակը» ինքը հայ ժողովուրդը չէ, բայց այդ ժողովրդի ցաւերի և առաջադիմութեան արտայայտութիւնը։ Գրիգոր Արծրունին երկնքից իջած մի հրաշք չէ, այլ նոյն այդ ժողովրդի առաջադիմութեան համար գործող հոսքերից մինը, որին ծնել է ինքը ժողովուրդը։

Քանի չեն սպառված ժողովրդի կենսական ոյժերը, քանի ժողովուրդը դեռ ևս վերջնական անկման չէ ենթարկված, այլ առաջադիմութեան շաւղի վրա է, միշտ առաջ կը գան Նալբանդեաններ, Բաֆֆիներ, Արծրունիներ, և մի ժողովրդի մէջ այդպիսի մարդոց ծնվել և գործելը արդէն նշան է, որ այդ ժողովուրդն ընդունակ է թօթափելու իրանից հնութեան փոշին և մասնակից լինելու նոր քաղաքակրթութեան...

«Մշակը» և Գրիգոր Արծրունին հայ ժողովրդի առաջադիմութեան կենդանի ներկայացուցիչներն են։ Կայ առաջադիմութիւն, կը լինի և «Մշակ», երևան կը գան և նոր Մ շ ա կ-ն ե ր. կայ առաջադիմութեան ոյժ, կը լինի և Գրիգոր Արծրունի, երևան կը գան և նոր Գրիգոր Արծրունիներ...

Եթէ հայ ժողովուրդը ուզում է հանգիստ քնի մէջ մրափել, եթէ նա չի ուզում որ նոր քաղաքրթութիւնը խանգարի իր դարևոր քունը և ալեկոծէ այն ճահիճը, որի մէջ բորբոսնել է դարերից ի վեր հայ կեանքը,—այն ժամանակ նա, այդ ժողովուրդը, պէտք է ամենից առաջ իրան շրջապատի չ ի ն ա կ ա ն պ ա ր ա պ ո վ, պէտք է թոյլ չը տայ, որ եւրոպական քաղաքակրթութեան ճառագայթները թափանցեն իր խաւար կեանքի մէջ, պէտք է թոյլ չտայ, որ իր կիսավայրենի նախահայրերի ձորերի մէջ լսվի երկաթուղու շվշվոցը, պէտք է վերջապէս խ ա ր ո յ կ ի վրա այրի այն մարդոց, որոնք յանդգում են եւրոպական ազատ մտքեր մտցնել մեր կեանքի մէջ։ Բայց մեր ժողովուրդը այդ չի կարող անել. փոքրիկ ազգերը քաղաքակրթութեան ստրուկներ են։ Ամբողջ աշխարհը խոնարհվում է այդ գաղափարների առաջ. դոցա դիմադրելը մեր ժողովրդի ոյժից բարձր է։

Նոր գաղափարները, նոր մտքերը փոքր առ փոքր կը մտնեն կեանքի բոլոր անկիւնները, ինչպէս կենդանարար ջուրը կաթիլ կաթիլ թափանցում է ամենապինդ հողի մէջ... Իսկ երբ մի ժողովուրդ սովորում է յարգել իր կեանքը վերանորոգողներին,—կը նշանակէ այդ ժողովուրդը արդէն յարել է քաղաքակրթութեան գործին։ Երբ մի ժողովուրդ ընդունակ է դառնում դեռ կենդանութեան ժամանակ գնահատել իր կեանքի մէջ երևացող՝ նոր մտքերի և նոր ձգտումների ներկայացուցիչներին,—այդպիսի ժողովուրդը կը նշանակէ իր մէջ առաջադիմելու մեծ ոյժ ունի։

Ահա այդ տեսակէտից նայելով հարցի վրա, շատ ուրախալի և նշանաւոր է այն երևոյթը, որ Հայոց հասարակութիւնը անկեղծօրէն գլուխ է խոնարհեցնում Ներսէս Վարժապետեանի, Նալբանդեանի, Նազարեանի և Բաֆֆիի յիշատակի առաջ, և ոգևորութեամբ համակրութիւն է յայտնում Խրիմեանի, Պատկանեանի և Գրիգոր Արծրունու յօբելեանների առիթով...

Այդ մարդիկ որոշ ձգտումների և որոշ գաղափարների ներկայացուցիչ են. յարգել և սիրել դոցա, կը նշանակէ յարգել և սիրել դոցա գաղափարները. իսկ յարգել և սիրել այդ գաղափարները, կը նշանակէ վերանորոգվել, անդադար ձգտել դէպի յառաջ...

Ուրեմն տօնել մի այնպիսի մարդու գործունէութեան 25-ամեակը, ինչպիսին է Գրիգոր Արծրունին, կը նշանակէ իսկապէս տօնել Հայոց կեանքի մտաւոր վերածնութիւնը և առաջադիմութիւնը...